

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

859

3n-61







31-61

ՆՐՔՆԱ ԵՍՐԿԱ

10 NOV 2010

ՌՌՄԷՆ ✱ ✱ ✱ ✱ ✱ ✱  
 ✱ ✱ ✱ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
 ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ  
 —•••—

Թարգմ. վ. ԳԵՈՐԳԵԱՆ



Տպ. «ՀՐԱԶԳԻԱՆ»

1985 ՊԵՐՈՒԹ



09 2013

8303



### ՄՈՒՐԱՑԿԱՆԻՆ ԱՐԴԻՆ



Պեղծ ծերունի մը կար, որ իր տառապանքներուն ծանրութեան համար, որոնք իր կեանքը կազմած էին, ճակատագրէն իրր վարձատրութիւն ժառանգած էր խիստ ուժեղ և իմաստուն որդի մը՝ որ կարծես թագաւորներու շառաւիղէն սերած ըլլար: Հոն վարը կար նման կայսրութիւն մը, բայց հէք ծերուկը չէր կրցած հպիլ անոր մարմարէ սանդուխներու վերջին ատիճանին: Տեղւոյն բոլոր իմաստունները հաւաքուած էին զաւակը դաստիարակելու: Եւ երբ ան մեծցաւ, իրենց տան մէջ ընկիւք ոչինչ չգտնուելուն, (իր հայրը Աստուած միայն գիտէ թէ ինչպէս կ'ապրէր) տղան մեկնեցաւ՝ աշխարհի մէջ բախտ չիներու:

Պիտի չկրնամ ըսել թէ իր կեանքի ո՞ր վայրկեանին ան հանդիպեցաւ սարորինակ մարդու մը, որ իր հայրը կը յիշեցնէր իրեն: Իր հէք մարմինը ծածկող այնքան ցնցոտիներ ունէր ան, և տարիներու բեռէն իր հազուադիւրս երկար մօրուքը այնքան դեղներ ու կանաչներ էր, որ կուրծքին վրայ կ'երերար հովի քրմայքէն: Եւ որովհետեւ կայսերական ունէ պալատ չէր օգտուեր այդ բացարձակապէս ամայի բարձունքներէն, քանի որ ոչ մէկ կերպարանք չէր երեւեր իր ճամբուն վրայ, գեղեցիկ և ուժեղ երիտասարդը որոշեց գործ խնդրել անկէ զոր դիպուածը իրեն կը ճամբէր:

— Կ'ուզէ՞ք որ օգնեմ ձեզի, ըսաւ ժպիտ մը կեղ-



5137-70



ծելով: Ու ահա խիստ լրջօրէն ձերունին յայտարարեց ընդունիլ զայն, ու նոյնիսկ յիշեց որ դորձ մը, խիստ կարեւոր դորձ մը կայ կատարելիք: Պէտք է բարձրանանք այս յերան վրայ: Արդարեւ ահագին ժայռ մը կը պոկուէր անոնց սաջիւրը:

Միւսներուն պէս թրկ, առանց մարդկային քայլերու հետքի մը:

—Ես զայն մէկ շարժումով պիտի բանամ. Ձրւարձայի էր ձերուկը երբ կ'ուրուագծէր այդ շարժումը:

—Ես մէկ շարժումով պիտի բանամ զայն ու դուն պիտի իջնաս մինչև անոր խորը: Հոն, փարսախներ վարը, գետնին մէջ, ուր պիտի իջնես, պարտէզ մը կայ, և առաջին քայլիդ իսկ ոտքը, ձգտի մը պիտի հանդիպի, ինձի բեր զայն: Եւ կախարդին աչքը շողաց իր ցանկութենէն: Երիտասարդը կատարեց այդ հրամանը: Կերան խորը արեւի նման պայծառ էր, սրբաբառ, անտեսանելի խորհրդաւոր արեւի մը հանդուհանակ, արբեցնող համեմներու յորձանք մը և բիւրաւոր թռչուններու գեղգեղանքը հոն պիտի պահէին զինք, եթէ ան չփորձէր ցոյց տալ անյապաղ՝ թէ որքան ճշտապահ է ինք իր պարտականութիւնը կատարելու համար: Երբ իր ոտքը ձգտին հանդիպեցաւ, ան փութաց իր երկաթեայ մատներուն մէջ սեղմել զայն: Այն զօրութիւնը որ զինք մէկ վայրկեանէն մինչև այդ խորութիւնները իջեցուցեր էր, վեր բարձրացուց անմիջապէս, ու հագիւ անցանելի ճեղքուածքին մէջէն ան նշմարեց ձերուկը, որ կ'սպասէր անստուգութեամբ ին, որովհետեւ իր զրկածներէն շատերը հոն մնացեր էին, որովհետեւ իր զրկածներէն շատերը հոն մնացեր էին, ահարեկած վայրէջքին մթութենէն, կամ կախարդուած հրաշալի մրգատտաններու անսահման հրամայքներէն:

Երբ ան նշմարեց իր նոր ծառան՝ սեղմեց լերան պատուարները, աւելի նեղ դարձնելու համար անցքը, ու ըսաւ.

—Տո՛ւր ինձ նախ ձգտոր:

—Ձգէ որ անցնիմ:

—Առաջ պէտք է ունենամ զայն:

Արդարութիւնը պէտք էր զօրձագրել: Ծերուկը սոսկ դիտելով կերպարանափոխուեցաւ. ծիրանի պտուածան մը կը գրկէր ուղղուած մարմինը, ոսկեհիւս կապերով տրեխներ կը ծածկէին մինչև այդ օրը իր մերկ ոտքերը և ձիւնասպիտակ մագերուն վրայ լոյսի ճառագայթներ կը ցայտէին յորձանոս...

Իշխան մըն էր անիկա սպասարկուելու արժանի: Բնագղը խօսեցաւ ճամբորդին մէջ ու ան մերժեց յանձնել ձգտոր: Նոյն վայրկեանին սակայն ձեռքը զոցուեցաւ: Երիտասարդ բանտարկեալը մնաց մեծ լերան մէջ, բարերախառնար կրկին հազարաւոր փարսախներուն էջքը հեշտ եղաւ իրեն համար: Ու այս անգամ ան կրցաւ դիտել մրգատտանը: Երկարօրէն հոն պտրտեցաւ, քաղեց ինքնամատոյց պտուղները, որովհետեւ առաջին անգամն էր որ մարդկային աչք մը կը դիտէր ու կը ճաշակէր այդ պտուղներէն, ու անոնք կը մօտենային իր բերնին, արտարուելով պատուական բոյր մը, և ան կ'ունկնդրէր երգը զոր անանուն թռչուններ լսել կուտային կախարդելու համար իր ականջը: Բայց որովհետեւ ան չէր մոռցած աշխարհը, զայն տեսնելու կարօտը ունեցաւ, ու անհամբեր շարժումի մը մէջ գետին նետեց ձգտոր զոր թաղուն պահած էր: Կեռը անմիջապէս բացաւ իր ընդերքները: Կայն կամար մը թոյլ կուտար որ արեւին ճառագայթները հոն թափանցեն ու ցոյց տան ուղին:

Մեծ ճամբուն վրայ նորէն հէք ձերուկին անտե-



բունջ ոգին վերսկսաւ խոստումներով լի դէպի անծափնօթը իր հետագոտութիւնը, որմէ կ'սպասէր իր երջանկութիւնը:

Հեռուն, իր աչքին առջեւ գիւղ մը կ'երևէր: Անհամբերութենէ, վիշտէ ու յուսահատութենէ յառաջ եկած շարժում մը կար մտայլ դղեակին բոլորով: Դղեակին մօտենալով, ամբոխին ընդմէջէն, — աչքան տիրակալուած իր զգացումներով որ չնշմարեց զինք, — ան տեսաւ սրածայր նետերով զարդարուած ոսկեզօծ պտուղամբին վրայ ծերացած կայսր մը, աչքերը արցունքէ ծանրացած ու այտերը հսկումներէ դալուկ, իր տկար բազուկներուն մէջ ան գրկած էր հրաշալիօրէն գեղեցիկ աղջիկ մը, որ հոգին անանգելու մօտ կը թուէր: Ու իր ծագկատի մարմնին իւրաքանչիւր սարսուռին ան կը կոտէր զինք պարապնող ճակատագրին դէմ, մինչ գթութեամբ վշտայեղց ալիք մը կ'անցնէր հազարաւոր հոգիներու խորէն. որ իրենց տիրոջ շուրջ լուս կ'ազօթէին երիտասարդ իշխանուհիին վըրկութեան համար:

— Ոչ ոք չկայ, կը կրկնեմ, ըսաւ կայսրը, որ յետին ճիգով մը գտնէ դարմանը անանուն հիւանդութեան որ կ'սպասէ դուտորս:

Ու զուարճալի մարդ մը արմուկները շարժեց հասնելու համար կայսեր առջեւ: Ու սուսամիտս ձայնով մը, որ նոյնպէս պարզ փտահութիւն կը ներշնչէր, բացարձակապէս աններգաչնակ այս մարդոց, ան խոստացաւ վերադարձնել հոգեվարքին առողջութիւնը, պայմանաւ որ իրեն բերեն հեռաւոր անտառի ետին գտնուող կախարդական ջուրը:

Կախարդական ջուրը, ոչ ոք չէր լսած այդ մասին. և շատ հեռուն ոչ ոք կը ճանչնար անտառ մը:

— Անոր, որ վազուընէ սկսած պիտի բերէ ինձ

կախարդական ջուրը, պիտի տամ ինչ որ ունիմ ամենէն թանկագին, ըսաւ կայսրը:

Մեծ լուսթիւն մը տիրեց: Նայուածքները կը խաչաձևէին իրար: Ու տրտմաթախիծ այտերու վրայ վազող արցունքները կ'ըսէին թէ՛ անկարելին կը պահանջէր կայսրը:

Իայց մեր երիտասաղը այս աշխարհի անկարելիութիւնները հաշուի առնող չէր, որ ոչինչ էին տուեր իրեն: Վտանգը աչք առաւ. կախարդութեանց աշխարհէն կուգար, կայսեր կողմէ ցաւագինօրէն եղած այդ խոստումը — այդ ջուրը, վազուընէ իսկ ինքը պիտի բերէր:

Բոլոր նայուածքները յանկարծօրէն դարձան անոր կողմը:

— Իմաստուն է ան, ըսին ծերունիները:

— Ուժով է, խօսեցան մարտիկները:

— Գեղեցիկ է, հառաչեցին գաղտնօրէն զեռատի աղջիկները և, անոնք շիկնեցան իրենց այդ մտածումին համար:

Երիտասարդը անմիջապէս մեկնեցաւ: Ոչ մէկ գէնք չունենալով ընաղդօրէն ան կը բռնէր ձայտը: Մեծ ջուր մը մինչեւ հորիզոն կը տարածէր իր անսահման սաւանը: Նաւակի մը հեռքն իսկ չիկար ու ոչ ոք կրնար համարձակիլ լողալով անցնել զայն, աչքան հեռու կը թուէր ըլլալ անոր միւս աիւր, եթէ երբեք երկիրը շրջապատող յաւիտենական ջուրը չէր: Պէտք էր լքել ներկայացող առաջին այնքան մեծ հեռանկարը:

Արկածախնդիր երիտասաղը դժկամակութեամբ անոր մէջ նետեց ձայտը, որ գետին դպելուն պէս կամարակապ, հիրիկի նման շողողուն լայն կամուրջ մը՝ ամուր, սակայն վաղանցուկ թափանցիկտութեամբ՝ բարձրացաւ:

Միայն իրեն համար ու դժուարին վայրկեաններ



րուն անցանելի կամուրջ մըն էր ստիկա :

Վերստին հիւրընկալող էր ուղին՝ պարտէզներու և մրգաստաններու ընդմէջէն . բայց առաջ մարդկային արարածի մը :

Երկա՛ր ժամեր յետոյ ան վերջապէս կորսնցուցին քղինքը խորունկ ճախիններու մէջ , ուր եթէ լեռ մը թաղուէր , կարելի պիտի չըլլար դանել անոր հետքը :

— Ահաւասիկ վերստին խոչընդոտ մը , և այն պահուն որ նպատակին հասած ըլլալ կը կարծեմ , աղաղակեց ճամբորդը ու նորէն ճպտոր փոշիներուն մէջ նետեց :

— Որքա՛ն յոգնած եմ , մրմնջեց շուարած , յուսահատ երիտասարդը , որքա՛ն յոգնած եմ որ չնչմարեցի դէպի ճահճային խորութիւնները հակող այս երկար քարքարուտ ուղին : Արդարեւ , ճամբան կը տանէր ուղղակի հաստատ այլ բոյրովին զով ու խիտ անտառ մը ուր կարելի էր սպասել ամէն տեսակ անակնկալ վտանգներ : Անվարան՝ հոն մտաւ երիտասարդը , և անա ճիշտ բացատին մէջտեղ կը զսնուէր ան : Բացատին մէջտեղ հոր մը կար : Հորին եզերքը ծերուկ մը :

Իր հին ցնցոտիներուն մէջ անիկա կը նմանէր լերան կախարդին : Ան կը քնանար՝ իր դայուկ ձեռքին մէջ դոյլը բռնած : Ճպտոր հպելուն՝ ան վերակենդանացաւ կրկին աքսորական կայսրի մը նման , բայց երբ խորհրդաւոր զօրութիւնը հեռացաւ իրմէն , ճաղատ զուխը վերստին կռթնեցաւ ոսկրուտ կրճքին , որ հազիւ ցնցոտիներով ծածկուած էր :

Ոչինչ պիտի չըսեմ , կը հեծէր ան : Արդէն դիտեա կախարդութեան ուր զսնուէր : Կործածէ զայն , ու երջանիկ եղիր : Կախարդական ջուրը այս հորին մէջ է : Զայն պահպանելու ոչինչ ունիմ ես :

Երիտասարդը դղեակ վերադարձաւ՝ հետը առած կախարդական ջուրը : Հոն՝ վերջին ճիղով , դեռատի իշխանուհին կը կռուէր մահուան դէմ : Անհուն բացա-

դանչութեամբ մը ողջունեցին զինք , մինչ իր նայուածքին մէջ իսկ ամբոխը կրցաւ կարգալ թէ փրկութեան գործը կատարուած էր : Արդարեւ , այդ ջուրին առաջին կաթիլներուն իսկ սրակումին , իշխանուհին կը նետէր վրայէն զինք այրող վերմակը , և , ուղղուած՝ իր բրդէ միակ շապիկին մէջ , ժպտուն՝ ան կը դիտէր իր ազատարարը :

— Երիտասարդ , ըսաւ կայսրը , արքայական իշխան մը դարձած՝ կ'արժանանաս ամենարարձար ժարձատրութեան . համաձայն իմ յանձնառութեանս , իրաւունք ունիս զայն բնտրելու :

— Ահաւասիկ , եղաւ պատասխանը և , ան ցոյց տուաւ իշխանուհին , որ վերստին ժպտեցաւ :

Իսկ կայսրը չէր կրնար սպրիլ առանց իր թագաւորութեան ու պալատին պերճանք և իր այլևոր օրերուն սփոփանքը եզող դուստրը տեսնելու : Ան դողաց , բայց զիտէք որ կայսր ըլլալով , մարդ չի բռնաբարեր իր խոստումը :

— Պիտի ունենաս զայն : Բայց մինչեւ վաղը , լաւ լսէ , պէտք է անոր արժանի պալատ մը կառուցանես , հոն բնակեցնելու համար զինք : Զուտ մարմարէ պիտի ըլլալ ան ու պատուհանները՝ բլբլեղէ : Պարտէզին մէջ պիտի գտնուին աղբիւրներ և ծաղկած իւրաքանչիւր ծառի վրայ հազարաւոր թռչուններ պիտի դայլա լին անդազար՝ արեւածաղէն մինչեւ մայրամուտ : Եթէ առանց երգի ձիւղ մը գտնուի , պիտի չունենաս դուստրս :

Կայսեր ապագայ փեսան արհամարհանքի ժպիտ մը սքողեց : Զուէր միթէ անդիմադրելի մոգութիւնը : Բայց ո՛վ դժբախտութիւն , չկրցաւ գտնել երբեք ճպտոր :

Մեռնիին խորամանկութենէն խարուած՝ ջրհորին եղերքը մոռցած էր զայն :

Ու անա երբ այդպէս կուլար զիշերուան ստուերին



մէջ, իշխանուհին երեւցաւ անոր: Երկրի վրայ անկա կախարդանք մը ունէր; որուն ոչ ոք ծանօթ էր. միայն իր հիւանդութեան պահուն ան չէր կրցած օգտուիլ անկէ:

Իր առողջութիւնը վերստացած՝ զայն կը տրամադրէր անոր զոր արդէն կը սիրէր: Հետեւեալ օրը վաղեմի ապարանքին դիմաց կը փողփողէր մարմարակերտ սպիտակ պալատ մը, ամբողջովին նոր, ու ծաղիկներու ծոցը թռչուններ կը զեղզեղէին ի պատիւ արեւածաղիկն:

Այո՛, այո՛, բայց ինչպէս պիտի անցնիմ մէկ պալատէն միւսը, առանց արծաթեայ ջուրին վրայ օսկիէ կամուրջ մը գտնուելու: Վաղուրնէ իսկ պէտք է հոս կտուցանել զայն:

Ան որ մէկ վայրկեանէն կանգնած էր մարմարէ սպիտակ որմերը ու մէկ նայուածքով տնկած էր վաղընջական համածածկ ծառերը, ան որ ճիւղերուն վրայ հաւաքած էր հարիւրաւոր երկիրներու թռչունները, դժբախտութեան մէջ չգտնուեցաւ իր սիրականին արկածներու գրքին մէջ արձանագրելու այս նոր շահատականութիւնը:

Խոժոռելով իր թանձր յօնքերը՝ կայսրը ըսաւ.

—Օտեղծելը դիւրին բան է. ստոր համար միայն անմեղութիւն ու բարի կամեցողութիւն հարկ է. բայց աւելի դժուարին է աւերելը. պէտք է, որովհետեւ, ունենայ անգութ հոգի մը. դաւն զայն չունիս, արկածախնդիւր երիտասարդ: Կը հարկադրեմ քեզ ուրեմն, աղջկանս տէր դառնալու համար պայտոս հիւղակի մը ու զիս անոր սեմին վրայ կանգնած մութրացկանի մը փոխել: Եւ ասիկա մինչեւ վաղը:

Այս անգամ երիտասարդ հերոսը աւելի քիչ արտասուեցաւ: Բայց իշխանուհին արտօսը մը ունեցաւ իր հօրը ձակատագրին նկատմամբ, երբ վերադառնալով մարեց իր կախարդութեան զօրութիւնը: Մինակը,

իր խօսեցեալին քով, ան չէր համարձակեր զիտել բորբոսած փայտերով տնակին սեմին վրայ կանգնած պատառատուն գզգեակներով մութրացիկը, որ կայսր եղած էր: Ու փութաց անոր շնորհիւ իր հին կերպարանքն ու մեծաշուք բնակարանը:

—Ա՛ն զայն, ըսաւ կայսրը, բոլորովին ամօթահար՝ ցնցոտիներու մէջ տեսնուելուն համար: Ա՛ն զայն ու մեկնեցէք չուտով:

Իրարու ձեռք բռնած՝ մեկնեցան անտնք: Իշխանուհին չէր համարձակեր ետին նայելու, գիտակ որ իր երջանկութիւնը սուտով ու խարէութեամբ ձեռք բերուած էր:

Եւ իր մեղքի վայրէն չուտով հեռանալու համար, իր կախարդութեան զօրութեամբ մէկ քայլով ան փարսախ մը տեղ կը կտրէր, որովհետեւ կայսրը մերժած էր ձիեր տալ անոնց:

Անոնք շատ հեռացած ըլլալ կը կարծէին. երբ տրեխներու շփոթ շշուէ մը լսեցին: Աղջիկը գետին դընելով իր ականջը, որոշեց ոչ միայն ձիաւորի մը մօտենալը այլ ճանչցաւ իր հօրը լաւագոյն ձիաւորին արծաթէ սանդալներուն վճիտ ձայնը: Հայրը հետապընդել կուտար ուրեմն զիրենք: Վայրկեանէ մը պատգամաւորները հոն պիտի ըլլային: Անմիջապէս կամուրջի մը փոխեց իր խօսեցեալը և ինք դարձաւ ջուրը որ կը վազէր անոր տակէն:

Անկէ անդին ձամբաները անկանկի էին:

—Ճամբուն վրայ մարդ չկայ, ըսաւ հետապընդողը, որ մինչեւ երկրին ծայրը հասած էր: Փոքրիկ սուռակ մը և հնամենի կամուրջ մը միայն կան:

—Իրենք իսկ էին, խօսեցաւ կայսրը ցակոտ: Հըսչակաւոր միամիտ մըն ես դուն:

Ուրիշ մը զրկուեցաւ: Կրկին իշխանուհին դրաւ եր սիրականը: Ու ձիաւորը իր առջեւ գտաւ անտառ մը՝ մէջտեղը մատաղատի կազնիով: Երկրորդ.



պատգամաւորը նոյնպէս պայարդիւն ետ վերադարձաւ :

— Ես ինքս պիտի երթամ, գոչեց կայսրը, իր դուստրըը տեսնելու փափաքէն մզուած : Այս անգամ իշխանուհին ճանչցաւ ազմուկը ոսկիէ սանդաղներով ձիաւորին զոր թոյլատրուած չէր երբեք տեսնելու : Ուրեմն իր հայրն էր եկողը : Վերջին ճիգով մը անտառներուն խորը ան հին մատուռի մը փոխուեցաւ, որուն խորանին առջեւ ծերուկ ճգնաւոր մը կ'աղօթէր :

— Սատանան տանի մատուռները և ճգնաւորները, եթէ անոնք չեն ծառայեր ճամբան ճանչնալու . . .

Ան հարցափորձեց բարի կրօնաւորը : Անկէ սա պատասխանը ստացաւ .

« Երկու դար կայ որ դեռատի կոյս մը և երիտասարդ մը այս անցքերուն վրայ ինքզինքնին վստանդեցին, ու զայլերը փաբատեցին զանոնք : Ահաւասիկ տեղը : Ես այն ատեն ութսուն տարեկան էի և թարմ ու կայտառ տակաւին : »

Կայսրը փոթորիկի նման կատրամ տուն մեկնեցաւ, բարկութենէն մեռնելու համար :

— Այլ ազատ ենք, ըսաւ իշխանուհին : Ուր պիտի երթանք, սիրականս :

Շատ մօտը քաղաք մը կը տեսնեմ, ըսաւ երիտասարդը : Արդեօք չարազէտ պատրանք մը չէ՞, սպասէ, երթամ նայիմ :

Արդարեւ կախարչութիւն մըն էր անիկա : Որովհետեւ հազիւ թէ անոր դռներէն ներս մտած էր, ան կորսնցուց անցեալին և իր ըրածներուն յիշողութիւնը : Մոյրած՝ հետեւեցաւ դարձդարձիկ փողոցներու : Մէն մի պատուհանի ետեւէն կիներու անյազ աչուքներ կը հետեւէին իրեն, զեղեցիկ էր ան որովհետեւ :

Խորը պայտս մը կար, ու հոն իշխանուհի մը՝ որ բոլոր կայսրերուն զաւակները մերժած էր : Ու իշխանուհին ըսաւ իր հօրը, այս վաղնջական վայրերու

կայսրին .

« Ահաւասիկ ուզածս, թող վար դրուի : »

Անտառին մէջ վշտակիր խօսեցեալ մը կ'սպասէր իսկ պայտսին մէջ իշխանուհին հարսանիքի պատրաստութիւնները կը տեսնէին անձանթի և զեղեցիկ այս երիտասարդին հետ, որ նոյնիսկ իր անունը չէր գիտեր :

Եւ անա ամուսնութեան նախընթաց օրը սպասուհի մը կը զարնէր դռներուն : Անոր մազերը ոսկիէ էին, ձիւնաթոյր ձեռքեր ու մանրիկ ստուքներ ունէր ան, բայց զէջ հագնուած էր և կը տեսնուէր որ շատ էր լացեր :

— Հոս աշխատանք կայ, ինձի պէտք ունի՞ք արդեօք : Անթի եմ և ծարաւի :

— Հանդիսարանին գաւաթները կարգի պիտի դնես, ըսաւ վերձակը :

Պարատէն ներս մտաւ ան, ու աթոռի մը վրայ դրուած տեսաւ կախարչական ձգտոր : Հաւանօրէն ծերունին ձգած էր հոն զայն, առանձնութեան մէջ իր մեռնելէն առաջ :

Հետեւեալ օրը իշխանուհին պսակը դիտուն, սեղմած իր խօսեցեալը, աչքերուն ներքեւ ժպտող այլ մտանոց կայսեր, որ տակաւին չէր գիտեր թէ ո՞վ է իր փեսան, բարձրացուց իր գաւաթը իր ամուսնութիւնը հռչակելու համար :

Իր գահին ետեւէն, սպասուհին զգուշօրէն բարձրացուց ձգտոր և անով հպաւ երիտասարդին :

Ամենուն առջեւ կայսրը ճանչցաւ զայն ու համբուրեց :

Հեքեաթը հոս կը վերջանայ : Ամուսնութեան ներկայ չգտնուեցայ, բայց ինձի ըսին որ փայլուն եղաւ ան, և թէ երիտասարդ հերոսը կայսր դարձած՝ կ'իշխէ տակաւին :







## ԿԱՅՍԵՐ ԶՆԻԱԿԸ



Կայսրը և կայսրուհին զաւակ չունէին: Ըսել թէ անոնք կը ցանկային զաւակ մը ունենալ, թէ յաճախ ամբողջ ժամեր գաղտագողի կը նստէին պալատին պատուհանին առջեւ, իրարու քով, մէկզմէկու ձեռք բռնած՝ կը դիտէին իրենց քաղաքին փոքր երախտաներու խաղը ապա տրտմութեամբ իրարու կը նայէին ու կաւլային. — շատ քիչ բան է:

Անոնք խտիւ հրաման արձակած էին՝ երբեք երախայ չներկայացնել իրենց, երբեք անոնց մասին չըխօսիլ իրենց ներկայութեան, նոյն իսկ արգելած էին իրենց առջեւ արտասանել ժառանգութիւն բառը:

Ինքզինքնին արդէն ծերացած, յոգնած ու մօտէն լրտեսուած կը զտնուէին իրենց ազգականներէն, որոնք կը տենչային տիրանալ կայսերական գահին, որ դարերէ ի վեր անընդհատ, անդրանիկէ անդրանիկ փոխանցուած էր: Եւ ասոր համար ոչ ոք կայսեր կամ կայսրուհուն արիւնէն՝ իրանունք ունէր մօտենայու արքունիքի մը, ուր կը կասկածուէր իրենց ակնկալութիւններուն ու թագաւորելու լպենց անհամբերութեան մասին:

Եւ, որովհետեւ բարի ու հեղահամբոյր էին անոնք, իրենց հպատակները ոսկեզօծ որմերով ու զուտ բիւրեղեայ ապակիներով պալատի մը մէջ աւասնձինն ըլլալու անոնց բովանդակ տիրութիւնը կ'զգային: Կայսեր ու կայսրուհին ներկայութեան կ'զգուշանային ա-

մէն բանէ որ կրնար անոնց յիշեցնել իրենց գերագոյն բաղձանքը, բայց, ամէն անգամ որ խոնարհ երդիք մը կ'օրհնուէր մանկան մը ծնունդով, չէին մոռնար հին, շատ հին ծէսերու խառնել (այդ ժամանակները կրօնք տակաւին գոյութիւն չունէր, ինչ որ այ ըլլար ան, որովհետեւ կայսերական ամուր ժառանգորդ մը ունենայու համար շատ մը աղօթքներ ըսել պիտի տար, ու, ի մէջ այլոց, գոյութիւն պիտի չունենար նաև այս պատմուածքը:) — բուռն մաղթանքը, որ իրենց սիրական տէրերը ունենան նաև, իրենց կեանքին արեւը ուրիշ կեանքի մը մէջ շարունակուած տեսելու երջանկութիւնը:

Զինք գիշեր ցորեկ անհանգիստ ընող տառապանքներէն չարչարուած, ու տեսնելով իր մօրուքին առաջին արծաթ թելին հետ կայսրուհին այտերուն անկիւնները ակօտուող խորշոմները, կայսրը որոշեց մեկնել, երբ մանաւանդ զգաց աներեւութանալը իր վերջին յոյսերուն ամենայիտին պատրանքներուն: Ուր սակաջն: Ով կրնար ըսել ատիկա: Ես յաճախած չեմ այդ երկիրը, իսկ զուք դիւրաւ պիտի չգիտնայիք զայն: Մնաց որ, ինքն ևս չէր գիտեր: Տեղ մը, շարունակ հոն է որ կը զտնուի ան, անմատչելին պահասարակ, — յոյսը մեծագոյնը պարիկներուն, որովհետեւ ան երբեք չի գար դէպի մահկանացուները, որ զինք կ'որոնեն նախ քան իր նուազ փայլուն բայց աւելի բարի քոյրերը:

Օրեր ու շաբաթներ շարունակ ան կը քայլեր քաշկոտելով իր ետեւէն ամբողջ իր արքունիքին անդամները որոնք, յամենայն դէպս, լուռ և հլու շատ մեծ ու սուրբ բանի մը — իրենց տիրոջ վիշտին — կը հետեւէին:

Ու երբ օգնութեան հասնող խորհրդաւոր ոչ մէկ գորութիւն տեսաւ և հակառակ իր դիտումաւոր ու



խիտ հրամաններուն (զանոնք գործադրել տալու սիրտ պիտի ունենանք արդեօք.) խրճիթներու վարագործներուն և տեւէն նշմարեց փոքրիկ տղոց վարվուուն աչքերը, որոնք նետաքրքր էին իր արքունիքին եզակի տեսարանը տեսնելու — յոգնած՝ ան փոխեց իր ճամբան :

—Վերադառնանք, բաւ իրեններուն, վերադառնանք, բոլորովին մինակ կ'զգամ ինքզինքս :

Արցունքի կաթիլ մը սահեցաւ իր այտերուն վրայ ու ամբողջ պայտասկանները լացին անա. — հազուադէպ բան, անոնք լրջօրէն լացին, վասն զի կայսրը և կայսրուհին շատ բարի էին, իսկ տան մէջ իր դաւելին առաջին ազազակը չլսելը խիտ մեծ դժբաղտութիւն մըն է . . .

—Վերադառնանք :

Եւ յոգնասպառ ու փոշեթաթախ՝ կայսերանկան այս չքեղ կցորդը վերստին անցաւ պատուհաններու առջեւէն, մանկական նուրբ մատուրներ մէկ կողմ կ'առնէին սպիտակ վարագոյրներու ծայքը՝ անդամ մըն ալ զիտելու համար այս չքնաղ տեսարանը : Եւ անա նորութիւններ տեսնելով իրենց վիշտը մոռնալու համար անոնք նտեւեցան ուրիշ ճամբու մը : Ու ասիկա միւլթարութեանց յոռեդոյնը չէր, մնաց որ նման ուղիներ շատ կային այս րնդարձակածաւալ ու արքայական ժառանգորդէ թափուր կայսրութեան մէջ : Ու անոնք ինքզինքնին գտան անջրդի անապատի մը մէջտեղը : Ատտու հրեղէն արեւ մը կը բարձրանար հորիզոնին ծայրէն, կարծես ինք ևս յուսահատած արշալոյսի մը շուշէն չկարենայ իր ծարաւը անցնելուն, և իրիկունը, ան կը քնանար միւլթոյն երաշտ պայծառութեան մէջ առանց վայրկեան մը ամպի կամ մառախուղի մը անցքէն մթազնելու : Ու արեակէզ բացավայրը կը

5137-70  
ՕՏ-ԷՑԼԿ

Ու արեակէզ բացավայրը կը շոշոզար որպէս թէ իր քարերը — կային անոնցմէ որովհետեւ այս անողոք ջերմութեան ազդեցութեան ներքեւ, ապակիի փոխուած ըլլալին :

—Կաթիլ մը ջուր գտէք ինձի, որովհետեւ ծարաւէ կը մեռնիմ, իսկ կայսրութիւնս . . .

Լուց ան : Ամէն ոք հաւկցաւ թէ ինչ բնի կ'ուզէր : Իր կայսրութիւնը պիտի յօշոտուէր քաղաքացիական կռիւներէ, արշաւաքներու պիտի ենթարկուէր ու բաժան բաժան պիտի ըլլար, որովհետեւ զաւակ չունէր ան ու պիտի չունենար :

—Ջուր : Ան որ պիտի բերէ ինձ ջուրը, թէկուզ վերջին անձը եղած ըլլայ հասարակութեան, պիտի դառնայ պարոն ապարանքիս մէջ : Պարոն մեծ անապատներու :

Կայսեր փրկութեան համար անոնք ամէն կողմ զացին գոնէ կաթիլ մը ջուր գտնելու : Եւ չորս դին ոտքով շրջելէ ու անձնուէր փորձեր կատարելէ ետք — որովհետեւ երկար ատենէ ի վեր ձիերը մեռած էին — բոլորովին ա մօթահար կտ դարձան : Կայսեր լուս ակնարկին անոնք նոյնքան յուսահատ նայուածքով մը պատասխանեցին : Անոնք ամենքն ալ անապատին մէջ պիտի մեռնէին, որովհետեւ չկար ոչ գետակի մը հետքը, ոչ ալ ստուերը ջրհորի մը :

Թէպէտ քիչ մը ուշ բայց վերջապէս կայսրը միշեց որ մարդ առանձինն աւելի լաւ կը գտնէ իրապէս իր պէտք ունեցածը : Մանաւանդ երբ կայսր է, որովհետեւ ինքնին անիմանալի հրաշագործ առաքինութիւնները, որոնք մի միայն գերազոյն վայրկեաններուն կը յայտնուէին, իրենց արեան մէջ կը դառնուին : Չէ՞ք հաւատար ասոր :

Ու անաւարկ անոնք ամառի իսկ քային ջրհոր





մը երեւցաւ : Ոչ ոք տեսած էր զայն իրմէ առաջ . եւ նոյն իսկ կը կասկածիմ որ այն վայրկեանին երբ կայսրը ապշած մնացեր էր իր գիւտին առջեւ — այնքան երջանիկ — իր շուրջիններէն ոչ ոք կը տեսնէր զայն : Միայն ջրհորը շիտելով ան կարծես թեթեւութիւն մը զգաց, իսկ իր հետեւորդները զգացին իրենց շրթունքներուն տամկանալը, իրրեւ թէ անոր շուրջն խմած ըլլալին :

Կայսրը սակայն աչքերէ տարրեր բանով մը ըմպելու վարժուած էր :

Պարզ սովորութեամբ ան բաժակ մը փնտուեց, իրենինը այնքան թանկուզին գոնարներով զարդարուած էր որ, գիշեր ստեն երբ կը տանէր շրթունքներուն, իր ապարանքին ուղղութեամբ ամբողջ երկինքը կը ճաճանչէր ու իրենց խրճիթներուն մէջ կայսեր հպատակները արթնցած կ'ընէին. «Ամէն ինչ լաւ ճամբու մէջ է, վասն զի կայսրը կ'ըմպէ այս բոպէիս :»

Ու մինչդեռ ան կը փնտուէր (բայց թաքուորի մը վայել յարզանքէն, անապատի անխառն թշուառութեան մէջ գարշելի բան մըն էր ասիկա) — իր սեփական բաժակը, որ այդ պահուն եռանիզ պողպատեայ գարակի մը մէջ կը ծածկէր իր շքեղութիւնը, ան տեսաւ շուրին մակերեւոյն վրայ, որուն շէր էր պած դեռ, ոսկիէ բաժակի մը ծփալը, աւելի շողողուն քան իր ոսկեղբուազ ըմպանակը, ուրկէ կը խմէր ան արքունիքին մէջ : Ու ուղեց բռնել զայն, բայց բաժակը հեռացաւ : Ամէն անգամ որ ան փորձեց անոր տիրանալ, հետաքրքիր գորութիւն մը զայն կը խլէր իրմէ :

Այն ստեն ան մոռցաւ այդ բոլորը որ կայսերական կարգին կը վերարեւէր, որ աւելի հին էր քան իշխանները ու այս իսկ պատճառով աւելի բարձր քան

բոլոր անոնց արժանիքները, ու ան իր շրթունքները մոտեցուց շուրին, որ անմիջապէս դէպի իրեն բարձրացաւ, զով իրմէ անջատուած անտեսանելի ջրաչափներու շնորհիւ :

Բայց անաւատիկ ձեռք մը բռնեց անոր մօրուքէն :

Երբ այսպիսի բան մը կը պատահի, մարդ կը փափաքի, շատ բնական է. ճանչնալ յանդուգը որ ինքզինքը կը վտանգէ, մանաւանդ երբ հարցը կը վերաբերի կայսրի մը մօրուքին, այլապէս յարգելի, ինչպէս պատշաճութեան պատուէրները, որոնք մեկին են ու խիստ այս մասին :

Յանցաւորը երեւցաւ : Անիկա անաւոր դէմք մը ունէր : Իր խոշոր գլխուն շուրջ լուսապակ մը կար, ախոր փայլուն աչքերը նման էին յակինթի ու երկար ստեն անտեսանելի ջրհորին մէջ . անցուցած ըլլալուն իր մազերը կանաչներ էին ու կայսրը, որ քաջասիրտ էր և սուրի ջախջախիչ հարուածներով ընդարձակէր էր իր պետութեան սահմանները, սոսկազ զայն տեսնելուն : Անմիջապէս հասկցաւ թէ՛ ան որ մինչեւ այդ օրը անշոշափելի իր մօրուքը բռնելով արժանապատուութեանը կը զպէր, աշխարհի մանկանացուներուն չէր պատկաներ ուրեմն, որոնց դէմ կարելի է կռուիլ և իշխել անոնց : Ուստի խոնարհեցաւ ոգիներուն դերբնական գորութեանը առջեւ :

—Ո՛վ ետղուն, ըստ ան, քաղցր ձայնով, որպէս թէ պատիւ կ'ընէր անոր որ երկաթեայ մատներուն մէջ բռնած էր իր մօրուքը :

—Ես կայսրն եմ բոլոր անապատներուն :

Ասիկա քիչ մը աւելին էր մեր իշխանին ամբողջ ունեցածէն ու այն բոլորէն զոր ան պիտի կրնար բաղձալ յաղթականի իր երազին մէջ :



Ան սոսկալի ձայնը զոր ուրիշ քչ ոք չէր լսեր, շարունակեց.

Դուք ամենքդ այ մեռած պիտի բլբլայիք առանց իմ ներողամտութեան շնորհիտ մրովհետեւ դուք առանց ինձմէ ապահովագիր խնդրելու կոխած էք երկիրներու վրայ որ տանձնէ շունչին, և ուսիկ սրելը միայն հրաման ունի անցնելու, ստանալով իմ մեծանձնութենէս կարաս մը ջուր նոյեմբեր ամսուն, այլապէս ան պիտի մեռնէր ծարաւէն՝ քանի մը հարիւր տարիներուն, ուր ամենօրեայ հիւսիս եղած է ան: Բայց դուք պէտք է ինձ վճարէք ձեր ծարաւը յազեցողցած ըլլալնուդ փոխարէն, հակառակ պարագային ձեր քայլերուն առջեւ պիտի երկարածգեմ անապատը ու դուք պիտի չկրնաք երբեք տեսնել ձեր տուները:

Շարժումով մը թազակիր ճամբորդը զիջեցաւ:

Ահաւասիկ, շարունակեց անապատներու կայսրը, ինձ ըլլալիք վճարումը: Ինձի պիտի տաս քու սեփականութենէդ այն զոր ձգած ես տունդ առանց գիտնալու և որուն պիտի հանդիպէիր առանց հաճոյք զգալու:

Կարելի՞ ընէ քան է պահանջել կեանքը լեցնող պատրանքներու մէջ նուազագոյն այս պատրանքը: Այս անգամ կայսրը ամէն կերպով խոստացաւ որ պարտական պիտի չմնար իր զարմիկին, անապատներու կայսեր և եզակիան քրհորին տիրոջ, որ կը փրկէր դէպի անկարելի ձգտող ուխտաւորներու կեանքը:

Անմիջապէս ամէն ինչ աներևութացաւ:

Հրեզն արեգակը իր շաւղի ընթացքին կը բացաբառէր անջրդի անապատը, Բայց կայսրը և իր հետեւորդները պապակնին անցողցած էին ու ճամբորդութիւնը իրենց հազար անգամ աւելի հեշտ կը թռուէր:

Առանց յոգնութեան անտնք հասան բլուրին ստորոտը, որտեւ վերեւ, խրճիթներու մէջտեղ, կը բարձրանար կայսերական պարտը, ուր խուռն բազմութիւն մը կար. — բաղի տղոցէ, որոնց համար մուտքը արգելուած էր: Կարծես դարերու կեղտէն սեւցած էին պարիսպին կոտիքները, ճերմկած՝ վերջերը միայն, ու զուարթ ձայներ կը բարձրանային խմբովին, այնպէս ուրախ որ մարդ նախզգացումը կ'ունենար բանի մը աւելի մեծ քան, — թէեւ խիստ կարեւոր — կայսեր մը և կորսուած կարծուող արքունիքի անդամներուն վերերևումը:

Արքայական դարպասին սեմին վրայ մեծ լոյս մը կար, որ կը մրցէր արեւի լոյսին հետ: Կայսրը գիտեր անոր ինչ ըլլալը, որովհետեւ միայն կայսրուհիին թագը ունէր, պահուած ոսկիէ բաժակին հետ, այս զօրութիւնը: Ու իր սիրտին խորը շատ քաղցր զգացում մը խառնուած՝ ան դառն զղջում մը ունեցաւ, որովհետեւ ան գտած չէր գաղտնիքը զոր երկարօրէն փնտռած էին անտնք միասին:

Ան մօտեցաւ Աւ, սիվ հրաշք, կայսրուհիին բազուկներուն մէջ կը գտնուէր փոքրիկ մանկիկ մը:

Երկարեց գայն կայսեր, ու իր ժպիտը եղաւ անքան չողջաղուն, ու նոյն իսկ թագին պայծառութիւնը անոր առջեւ նսեմացաւ. դիտէ՛, կ'ըսէր այդ ժպիտը հպարտութեամբ: Կայսրը զիտեց, անոր աչքերը հրախառնէր արցունքներով լեցուեցան ու ան բարձրացուց իր չրթունքները տղուն մերկ գլխուն վերեւն դէպի այրող չրթունքները իր կողակցին:

Բայց, բառ մը խօսելէ առաջ, ան սարսուռաց, կարծեո ձեռք մը իջաւ իր ուսին վրայ, ասիկա թափն էր անոր զոր ձգած էր առանց գիտնալու և զոր կը զրսնէր առանց հաճոյքի: Իր զաւակն էր այդ վերջապէս,



ու արդէն կը դադրէր զայն ըլլալէ:

Եւ անաւտանց ունէ ընն գիտնայու իրեն սպառնացող ճակատադրին մասին՝ ստանց զուշակեղու ժամանակը ուր պիտի յանձնուէր անապատներու կոչներ, մեծցաւ այդ տղան: Յաղթանգամ էր ան ու կորովի վարժ բոլոր խաղերուն ու փորձերուն, բայց մանաւանդ կայսրութեան աղջիկները ու չրջակայ երիտասարդ իշխանուհիները զզլխելու չափ գեղեցիկ, որովհետեւ անոր ոսկիէ ծամերը հասակն ի վար կը ծփային և արծուի մը նման սև աչքեր ունէր ան:

Այն տարիքին հասած էր արդէն, որ կրնար նեցուկ գառնալ իր հօրը, որուն մօրուքն ու մօզերը ձերմկիլ սխտած էին իսկ ճակատադրական խոտուածը կատարուելու ժամը հասած ըլլալը յիշեցնող զեռ ոչ մէկ նշան չէր երևեր:

Կայսրը կը հարցնէր նոյն իսկ փորձառու ճամբորդներուն և ամենէն յանդուգն արկածախնդիրներու թէ գոյութիւն ունէ՞ր արդեօք անապատներու տիրող իշխան մը: Ու ոչ ոք չէր պատասխաներ Ռ՛՛՛՛՛ զիտէ: Գուցէ տեսիլք կամ պարզ պատրանք մը ունեցեր էր, նման անոնց որ կը յաճախեն (hanter) անապատները, կը կախարդեն կամ կ'անարեկեն մոլորուած ու պապակած ուխտաւորները:

Օր մը զեռաստի իշխանը որսի էր դադեր:

Եւ անաւասիկ իր ճամբուն վրայ երեւցաւ ձերունի մը խիստ համեստօրէն հագուած ու խոնարհ երևոյթով: Ծերունին կանգնեցաւ անոր առջեւը և ձայնով մը որ զարմանալիօրէն կը մեծնար՝ այսպէս ըսաւ.

— Բարի եկար իշխանութեանս բանմանին վրայ՝ Ինչ կ'ոպատէի տարիներէ ի վեր:

— Ռ՛՛՛՛՛ կո գուն:

— Ես կայսրն եմ բոլոր անապատներուն:

Սկըռնի կոչներ որդին խիստ իմաստուն էր պատասխանելու համար մէկուն, որ այդ ձեւով կը ներկայանար իրեն, ու, կ'ըսէր շատ մը տարօրինակ բաներ, առանց յարգանք ընծայելու իր հօր: Ու կրր ան կոչներ պատմեց այս ղէպքը, ձերունին մեռելի նման ղեղնեցաւ: Ու մեծ ճիգով մը ան կրցաւ թոթովել սախօքը. «Անպապատներու կայսրն է ան օրուն կը պատկանիս դուն»: Ան քեզ ծնողքիդ չպարգեւեց, բայց, առանց անոր, պիտի չտեսնէի քեզ քնաւ, քեզ՝ որ վըրտագին երազը եղար երիտասարդութեանս ու միակ միւթարութիւնը՝ ձերութեանս օրերուն: Կայսր մը չի խորեր— կը յաւակնին ըսել թէ՛ ատոր ապացոյցը կայ— ու, փրկելու համար մեր, մեր ցեղին ու մեզ պէս կայսրերու պատիւը, աշխարհէս պիտի մեկնիմ ես առանց ժառանգորդ ձգելու:

Սնոր ձիւնաթոյր երկար մօրուքը կը փայլէր արցունքներէ, որոնք կը վազէին իր աչքերէն, առանց իր գիտութեան, վասն զի հայր մը պէտք չէ լայ իր դաւկին սաջեւ:

Իշխանը իր սրատես սև աչքերով ղիտեց զայն ու իր ոսկիէ ծամերուն անտարը գողգողաց. զիս ունենայու համար, ըսաւ ան, պէտք է պատերազմիլ:

Ու, առանց ունէ պատասխան սպասելու, օտուամով մը ան ցատկեց իր յաւադոյն ձիուն քամակին վրայ և անհրեւութացաւ:

Երկար ստեն, ղէպի կայսրութեան սանմանները ձիավարելով, ան փնտռեց վայրը ուր երեւցած էր խեղճ մարդ մը՝ կայսր բոլոր անապատներու, ան ոչ մէկ կենդանի արարածի չհանդիպեցաւ: Յետոյ անտառի մը մօտ նշմարեց մեծ լիճ մը, որ արեւին տակ արծաթի նման կը հայելխանար: Ու, առանձրկու կոչներ



կը յօգնային իր քուերերուն մէջ, ոսկի անձրեւ մը ժայթքեցնելով :

Կրնա՞ր շարունակել իր ճամբան երիտասարդ իշխանը : Ո՞վ պիտի կրնար ընել ատիկա : Ծառի մը ետին պահուելու անոնց ներկայութիւնը վայելելէ յետոյ, ան նշմարեց որ բուրդէ տասներկու շապիկներ փռուած էին խոտերուն վրայ : Աներեւոյթ զօրութիւն մը կարծես զայն մղեց և ան վերցուց անոնցմէ մէկը ու պահեց իր ծիրանի պատմուճանին ներքեւ :

Ու անաւասիկ հրաշքը : Լիճը ձգելով՝ տասներկու կոյսերը կը գիմէին դէպի իրենց գգեսանները զոր հագնեթէ ետք անրիժ՝ սպիտակութեամբ կարապներու կը փոխուէին : մէկը միայն, ամենէն փոքր և ամենէն գեղեցիկը, իր շապիկը չգտնելով, կը մնար մարդկային իր բովանդակ մերկութեան մէջ, ու առանց նշմարելու անապասելի ճամբորդը՝ կուլար ամօթէն :

Ծնրադիր՝ գորտվասիրտ իշխանը երկարեց անոր սպիտակ զգեստը : Ու այդ վայրկեանէն սկսած ան խենթի պէս սիրահարուեցաւ իշխանին. այն աստիճան որ --պիտի հաւատաք անշուշտ --ան մոռցաւ բուրդէ իր սպիտակ շապիկը, ու անոր հաճոյք պատճառելու համար դարձաւ խիստ գեղեցիկ աղջիկ մը :

Ո՞վ էս դուն, հարցուց իշխանը :

— Բուստորը անապատներու կայսեր :

Ան կը դժուուէր ուրեմն իր ամենամեծ թշնամիին հողին վրայ ու ամենադժուրակ ճակատագիր մը կրսպասէր իրեն անոր կողմէ, որուն դուստրը կը սիրէր ինքը : Ու որովհետեւ ոչ ոք չէր կրնար խաբել, կայսերազունը խօսեցաւ իր պատմութիւնը, ու անկեղծօրէն ըսաւ իր կուռելու եկած ըլլալը, կուռելու յայտնապէս, առանց երբեք կարեւորութիւն ընծայելու անոր որ սէրը իրեն կուտար :

— Մ՛չ, պիտի չկուռիս : Միայն, ազատելու համար, հայր հարցումներ պիտի առաջարկէ քեզի : Իսկ այդ հարցումները ինձի կը վերաբերին : Հարկ կ'այլ ըսելու թէ հոն պիտի ըլլամ ես, տալու համար քեզի լաւագոյն խորհուրդը, այն բոլորին հետ զոր կ'սպասես ինձմէ :

Գերի իշխանը երեւցաւ անապատներու կայսեր առջեւ :

— Յոյց պիտի տաս ինձի ամէն կերպով իրարու նմանող տասներկու կարապներուն մէջէն իմ կրտսեր աղջիկս :

Մինչդեռ արքայազունը կը խոկար հարգումին գծուարութեան վրայ, փոքրիկ մաս մը քաղցեց ապակիին, ու ձայն մը լսելի եղաւ. «Ծատ փոքրիկ խաչ մը պիտի ունենամ կուրծքիս վրայ» :

Կայսեր ամբողջ արքունիքը որ զարհուրած էր, զմայլած մնաց տեսնելով որ ապահով շարժումով մը օտարականը մատնանչեց իշխանուհիներուն փոքրիկը, որ անմիջապէս դեռատի կոյսի մը փոխուեցաւ ու, զրուելով հօրը աջ կողմը, դիտեց խաղը վատկող երջանիկ իշխանը ու ծպտեցաւ :

— Վարժ ես, ըսաւ կայսրը : Ամէն պարագայի տակ կարապները Աստուծոյ կողմէ ստեղծուած՝ իրարու չեն նմանիր ամէն կերպով : Իայց անոնց բուրդէ սպիտակ շապիկները միեւնոյն ձեւքով բանուած են ու նոյն օրինակին վրայ : Վաղը պիտի ըսես ինձի թէ ո՞րն է շապիկը անոր որ կը համարձակի ժպտելով քեզ նայելու դուն, օտարական մը ու իմ գերիս :

Վերստին պատուհանին առջև լսուեցաւ քաղցր ու վճիտ ձայնը. «Զախ կողմը՝ վերջինը» :

Արքունի պալատականները զարմացած աղաղակեցին, երբ օտարական իշխանը մատով դպաւ շապիկեցին, երբ օտարական իշխանը մատով դպաւ շապիկեցին :



կին: Չեմ գիտեր թէ իշխանուհին ունէ՞ր սրիչ զգեստ — մարդիկ շատ զգեստներ չունէին ոսկիով ու թանկագին զոնարներով հարուստ այդ դարերուն: Բայց այս անգամ անարկու կայսրը յուզուեցաւ, և որովհետեւ տասներկու կոյսերը, ու կրտսերուհին միշտներէն քիչ մըն ալ աւելի, երջանկութենէ կ'արտասուէին, կայսրը նշան մը քրտւ: Ու այս նշանը կը թըռէր պսակել երկու զլուխներ ու իրարու միացնել՝ զիրար սիրող երկու սիրտերը:

Քիչ ատենէն մեծ հարսանիք մը տեղի ունեցաւ միւս կայսեր պալատին մէջ: Իրիկուան մայրամուտի արեւը տեսաւ սպիտակ և երկար յօնքերով երկու աչքեր, որոնք կը գոցուէին ծպտող անգուհում դէմքի մը վրայ: Որովհետեւ կայսրը կ'ազատէր կենսութիւնը, զոր դժուար է միշտ կրել, երբ այլեւս երիտասարդութիւնը խոյս տուած է, ու անիկա այս անգամ ալ ապահով էր իր կնոջ նեցուկ և իր կայսրութեան գանձաժառանգ մը տուած ըլլալուն:



## ՈՍԿԻԷ ՄԱՋԵՐՈՎ ՃՆՂՆՏԸ

Շատ աղքատ ընտանիք մը կար, և սակայն այր ու կին կը փափաքէին գաւակ մը ունենալ: Որովհետեւ ծերութիւնը կը մօտենար, անոնք իրենց բուռն փափաքը յայտնեցին ճգնաւորի մը, որ մեծ հոշակ ունէր: Ու ճգնաւորը անոնց խնձոր մը երկարեց.

— Կներ անիէ, կին, բայց զգուշացի՛ր կուտ մը անգամ վար ձգելէ:

Կինը այնքան անյագարար կերաւ խնձորէն, որ չնչմարեց վար ինկած կուտ մը: Իր մօտը գտնուող տանը մատակ ձին կուլ տուաւ զայն:

Քանի մը ամիսէն բաւական մեծ մատաղածի մը արգէն կը լիզէր օրօրոցի մէջ գտնուող տղան, որ կարծես իր եղբայրը եղած ըլլար: Իսկ տղան, քանի մը օրէն կ'երկարէր իր ձեռքը՝ շոյելու համար մատաղածին՝ որ գիշեր ցերեկ չէր բաժնուեր իրմէ:

Հրաշքով երկուքն ալ մեծցան: Քանի մը տարի ետք խեղճ մարդուն ազարակին սանձաններուն մէջ կային անհաւասար ուժով տղայ մը և ձի մը՝ որուն հրեղէն աչքերը իր կախարդական զօրութիւնը կ'երգէին:

Ու գեղեցիկ օր մը անոնք փախան ձիուն կամքով: Անտառի մէկ բացատին մէջ զայն վար դնելէ յետոյ, ձին ըսաւ երիտասարդին.

— Սպասէ, քեզի տեղ մը փնտռեմ մարդոց մէջ: Արօր կամ ապագային, գտանդի պահուն շտրժէ այս



ասնձը ու մտող պիտի ըլլա՞նք ես :

Փամուան մը մէջ ան աշխարհիս շրջանը կատարած՝ վերադարձաւ քառի յուրով մը : Զիսպանի պաշտօն մը կայ երեք պարիկներու մօտ :

Գացին փնտտելու համակ ոսկիի : Քիւրեղէ և սպիտակ ամպերէ շինուած անոնց պայտառը : Ակիզը անսնք չուզեցին գէշ հազուած ու համեատ երեւոյթով այս սննմանօթը : Բայց ձիուն քիչազգրութեամբ՝ ան պնդեց : Եւ որովհետեւ ձին երկար ու զտղանի արշաւի մը համար պիտի մեկնէր : հետեւնայը քաւ իր եզրօրը :

— Լոս պահուած է ըստ երջանկութիւնդ : Պէտք է համբերութիւն անհնալ միայն, շատ համբերութիւն : Սպասէ հազուադիւտ վայրկեանին, ուր պարիկներու յոգանքին ոսկիէ անձրեւ պիտի տեղայ : Իջիր աւազանին մէջ և ամբողջ մարմնովդ ջուրին մէջ թաթխուէ : Ապա, երբ հազուիս՝ մի՛ մոռնար վերցնել երեք ընկոյղները, որոնք պահուած են պարիկներու բուրդէ ճերմակ շրջագգեսաներուն մէջ, թոթուէ ասնձը ու ես հոս պիտի ըլլամ :

Տարիներ, տարիներ յետոյ, ձիապանը յոգարանին մէջ արասկարգօրէն ներդաշնակ շշուկ մը լսեց : Իբրեւ թէ երկինքէն հազարաւոր ոսկիէ դրամներ վարձեալ կը թափէին ու կը թաւալէին կարծր մարմանին վրայ : Երիտասարդը հասկցաւ : Մէկ ոտու մով հանեց իր խեղճուկրակ քուրջերը, ցատկեց աւազանին մէջ : Ու խօթեց իր գլուխը ջուրի հոսանքին մէջ, որ իր պայծառութեամբ կը շրջանէր անոր աչքերը, ու դուրս ելաւ աւազանէն ոսկիէ մազերով, որոնք մինչեւ իր մէջքէն վար կ'իջնէին : Դրաւ ընկոյղները իր զգեստին զրպանները ու երբ շարժեց հրաշագործ ասնձը՝ ան արդէն հովի պէս թաշող ձիուն վրան էր :

Պարիկները որտի էին գացեր : Բայց իրենց բացա-

կայութեան որմերէն, ծառերէն, ծաղիկներէն ձայներ կ'ելլէին՝ որոնք կը մասնէին չարագործը որ ինդպայ ու աներեւութացաւ :

Պարիկները իրազեկ՝ նետուեցան անոր հետքերուն ետեւէն, յուսանաւ մանաւանդ անոր տարած ընկոյղներուն համար : Երբ ան՝ յափշտակողը, լսեց անոնց ձայնը, արդէն կախարդութեանց թագաւորութեան սահմաններէն անգին անցած էր : Այդ զիծին վրայ կանգ առնել ստիպուած ըլլալով՝ ազնուատոնմ սպիտակ եւ աղուոր պարիկները խնդրեցին անկէ :

— Գոնէ ընկոյղներէն մէկը մեղի տուր : Վերադարձուր մազերուդ պայծառութիւնը :

— Ո՛չ, պատասխանեց երիտասարդը, ու փողփողուն մազերը գլեհիկ մաշկի մը ներքեւ ծածկուեցան, այնպէս որ բոլորովին ճաղատ կ'երեւէր ան :

— Յուցմունքներուս հետեւեցար, ըսաւ ձին : Ետունակէ զանոնք կատարել ու երջանիկ պիտի ըլլաս : Այժմ կը տեսնես այս հսկայ պայտառը : Երեք դուստր ունեցող գոռոզ կայսեր մըն է ան, անոնցմէ փոքրը աշխարհի հրաշալիքներուն մեծն է : Ո՛չ մէկ բանի մասին մի խորհիր, ո՛չ մէկ բանի մասին մի՛ խորհիր : Բայց եղիր հլու և համբերող : Պայտաին օգնական-պարտիզպանը պիտի ըլլաս, ու պէտք է ինքզինքդ շնորհաւորես ասոր համար :

Ու ամէն օր պարտիզպանը իշխանուհիներէն իւրաքանչիւրին պէտք էր մէյմէկ փունջ ծաղիկ ներկայացներ : Եւ որովհետեւ ձին այնպէս կը ցանկար՝ պարտիզպանը հիւանդացաւ : Իր պարտականութիւնները պիտի կատարուէին օգնականին կողմէ : Զիէն թելադրուած՝ անիկա չկազմեց իրարու նմանող երեք փունջեր, անոնցմէ մէկուն ծաղիկները ամբողջութեամբ բացուած էին, միւսինը հազիւ փթթած՝ իսկ



երրորդը պարզ կոկոններ ունէր :

—Ով հաստատեց այս նոր եղանակը, հարցուց կայսրը պարտիզպանին, որ հիւանդ հիւանդ բերուած էր անկողնէն :

—Ի՞նչ ծառայութեանս մէջ դռնուող ճաղատ երիտասարդ մը :

Ու կայսրը մեծարանքի եղանակին մասին խորհելով՝ հասկցաւ թէ մոռցեր էր իր առաջի երկու աղջիկներուն ամուսնութիւնը :

Յոտարական իշխաններ եկան ամուսնութեան համար : Դժուար չեղաւ ամուսին գտնել առաջին երկուքին : Բայց փոքրը, զոր կ'ուզէին ամուսնացնել իր քոյրերուն հետ միասին, մերժեց :

Ու անա թէ ինչո՞ւ : Անգամ մը կայսերական ընտանիքը եկեղեցի դադեր էր : Ամբողջ ընտանիքը, բացի կրտսեր աղջիկէն, որ հիւանդ էր : Ու անաւասիկ ինչ որ տեսաւ անիկա : Պարտիզպանին օգնականը աչքերը բարձրացուց դէպի իր կեցած սենեակին պատուհանը : Ապա շտապեց սանձը զոր գաղտնի կը պահէր ձեռքին մէջ : Անմիջապէս թեւաւոր ձի մը ներկայացաւ եւ երիտասարդը հեծաւ անոր վրայ, ոսկիէ երկար մազեր ունէր անիկա, որոնք մինչեւ մէջքէն վար կ'իջնէին, ու պողպատէ զրան մը կը պատէր անոր իրանը : Անցաւ պարտէզին մէջէն, ոտքով կոխկրտեց բոլոր ծաղիկները ու մէկ շարժումով վերստին գանոնք ծաղկեցուց :

Երկրորդ անգամ զրահը արձաթի փոխուեցաւ, երրորդ անգամ՝ ոսկիի : Իշխանուհին այս բոլորը տեսնելով մէկ որոշում ունեցաւ. միմիայն պարտիզպանին օգնականին հետ ամուսնանալ :

Ու կայսրը ըսաւ անոր վերջապէս :

Պէտք է որոշումդ տաս : Բոլորիշխանները պիտի

անցնին առջուէդ : Անաւասիկ այս սոկեխնձորը, զարկ անով անոր զոր կը սիրես :

Անոնք ամենքն անցան, իսկ իշխանուհին փափուկ մատները կը յեղմէին ոսկեխնձորը, մինչ արհամարհանք կար իր ժպիտին մէջ :

—Այս անգամ, ըսաւ կայսրը, քանի որ չես խորհիր քով զարմիդ ազնուականութեան, նոյնիսկ կոչու ու կողմաները պիտի անցնին առջուէդ :

Եւ որովհետեւ թափօրին մէջ, ուրկէ ծարաւի նայուածքներ կ'արձակէին դէպի դարատափը սպասող իշխանուհին, կար պարտիզպանին ճաղատ օգնականը, ուղղակի անոր կուրծքին նետաց սակեխնձորը :

Խնդուքի անազին թնդիւն մը յաջորդեց այս շարժումին : Իշխանուհին սիւսպած ըլլալու էր :

Թեկնածուներու քննութիւնը, որոնք ամենքն ալ ամուսնանալու պատրաստ երիտասարդներէին, վերսկսաւ : Ու ոսկեխնձորը կրկին դըպաւ նոյն զընդոսիններուն :

Երրորդ փորձէն վերջ, կայսրը ըսաւ.

Վրիպած չես : Ա՛ռ զայն եւ հեռացիր :

Անոնք մեկնեցան եւ ալ ոչ ոք տեսաւ զանոնք : Բայց քանի մը տարիէն կայսեր թշնամիները զաշնակցեցան իր դէմ ու մեծ վտանգ մը ստեղծուեցաւ : Իր իշխանագուն փեռաները օգնութեան ներկայացան անոր : Եւ, որովհետեւ այս դժբախտութիւններու լուրը հասաւ շրջականերու ամենէն յետին անկիւնը, ճաղատը լսեց, ու խորհեցաւ որ իր պարտականութիւնը օգնութեան հասնել էր, ինք եւս ներկայացաւ կայսեր :

—Գիտէ՞ք, ըսաւ կայսրը, որուն լէշտերը բոլոր մը փարատեցան այս ծիծաղելի երեւումին ի տես կայսրութիւնը ասիկա պիտի փրկէ : Է՛, լաւ ուրեմն, թող իր դիրքին, ստացուածքներուն ու քաջութեան



արժանի երկվար մը տրուի իրեն :

Կաղ երկվարի մը վրայ ճաղատը հետևեցաւ բանա-  
կին, սրուն ճիշդ մէջտեղը իշխանադունդ փեսաները  
կը խաղցնէին իրենց ձիերը: Առաջին ճանիւրը կանգնե-  
ցուց զայն ու հոն մնաց անիկա: Եւ անձկութեան մէջ  
ան հնչեցուց սանձը: Թեւեւ որ ձի մը երեւցաւ անմի-  
ջապէս, ու տեսնուեցաւ խառնուրդին մէջ անձանօթ  
ձիաւոր մը, որուն ոսկիէ վարսերը կը թափէին մէջ-  
քէն վար եւ որ ոսկիէ գրահներ հագած ունէր:

Թշնամիներ փայտաւտ կուտային աղբնցութեանը  
առջեւէն իր շքեղութեան: Յաղթանակը շահուած էր:  
Իսկ իրիկուան ցնցոտապատ, ճաղատ գլխով տատկած  
ձիու մը քով՝ ճախինին մէջ թաղուած խեղճ մարդ մը  
կար: Ամբողջ բանակը խելայնոր, երջանիկ իր տարած  
խոշոր յաղթանակին համար՝ կը նախատէր զայն անար-  
գանքներով:

— Յաղթանակին զիս որքան վեհանձն ըրած ըլ-  
լալը ցոյց տայու համար, ըսաւ կայսրը, թող զո՛ւրս  
հանուի այս հերոսը տիղմէն, ուր խրած է զինք իր  
քաջութիւնը:

Ճաղատը դուրս ելաւ անկէ տղմաթաթաւ, ու ալ  
մարդ չտեսաւ զայն:

Բանի մը տարի յետոյ կայսրը կորսնցուց իր տե-  
տղութիւնը: Մէկ միջոց միայն կար իրեն վերագարձ-  
նելու զայն, զետէն անդին գտնուող պարիկներու կա-  
թը: Բայց ո՞վ պիտի կրնար գտնել ատիկա:

Արքայազուն՝ փեսաներ զային փնտռելու: Դիւ-  
րաւ խարեցին անոնց միջակ միտքը, օգտուելով իրենց  
անհոգութենէն: Կայսրը լուաց աչքերը բայց երբեք  
աւելի լաւ չտեսաւ: Եւ ահա վերատին մէջտեղ ելաւ  
ճաղատը, լի գոհութեամբ մը՝ զոր նախատինքները չէ-  
ին պակասեցուցած:

— Թո՛ղ երթայ, եթէ իր կորուստը գտնել կ'ուզէ,  
յարեց կայսրը:

Եւ երբ ան շարժեց կախարդական սանձը, թե-  
ւաւոր ձին զայն տարաւ նոյնիսկ հրաշագործ կաթին  
աղբիւրը:

Կայսրը նրկարօրէն համբուրեց իր սրտանատր-  
ները եւ լացաւ:

— Հրա՛շք կայ: ըսաւ արքան, ու շաղբութեամբ  
ճաղատը դիտելով: Դուն երեւցածէդ տարրեր բան մըն  
ես:

— Հոս չէ որ պիտի ապացուցանեմ ատիկա, ո՞վ  
հայր, եկո՛ւր տեսիր դուստրդ որ կը սիրէ քեզ, հակա-  
ռակ իր մոռցուած ըլլալուն:

Թեւեւոր ձիուն քամակին վրայ կայսեր սպի-  
տակ խոպոպները կը հպէին ճաղատին դանկամաչկին,  
իր ծիրանին՝ փետուէ ցնցոտիներուն:

Բայց երբ անոնք կապոյտ լիճին մէջտեղ տեսան  
ուպիտակ պալատը, ու երբ իշխանուհին նման արծաթ-  
եայ արձանի մը՝ կանգնեցաւ սեմին վրայ բարեւելու  
համար ձեռքը վեր, ոսկեզրահ հագած երիտասարդը  
որ մինչեւ մէջքէն վար թափած ոսկիէ վարսեր ունէր,  
տեղ գրաւեց անոր մօտ:

Ու կայսրը հասկցաւ որ թագուն առաքինութիւ-  
նը կը գերազանցէ ուրիշ ամէն առաքինութիւն:







## ԵՐԱԶԻՆ ՏՂԱՆ

Տասներկու տարիէ ի վեր կայսրը ու կայսրուհին զաւակ մը ունենալու գերագոյն երջանկութիւնը կ'երազէին, ու այդ զաւակը, որուն վաղեմի շատ գեղեցիկ թագ մը կ'սպասէր, չէր ծներ:

Տասներկու տարիներ անցած էին դիտելով երկպառակութեամբ, ատելութիւններով ու ներքին կռիւներով լի շրջան մը, մղուած գահի մը ի խնդիր, որ երբեք անժառանգ չէր մնայած . . . :

Եւ անա եղաւ վայրկեան մը որ կայսրը ալ չկրցաւ զսպել իր յուսահատութիւնը ու հարկադրուած մոռնալու ամէն ինչ որ զինք իր կնոջ կը կապէր,—ոչ երջանկութիւնը, որովհետեւ անզաւակ չէր կրնար ունենալ զայն— առանց մտածելու ան խօսեցաւ խօսքեր, որոնցմէ իւրաքանչիւրը կապարէ շիթի նման կ'իջնէր իշխանուհիին յաւէտ վշտացած հոգիին մէջ:

—Երկու տարի ալ, ու, պէտք է այլուր փնտոել իմ ժառանգորդիս մայրը:

Իշխանուհին ատոր սպասեց և սակայն ան վիշտէն համր դարձաւ: Իր անաւոր սպառնալիքը անգամ մը ըրած՝ կայսրը աներեւութացաւ: Անոնք որ տեսան զինք՝ կը հաւատտեն թէ, կնոջ մը պէս կուլար ան, մինչ կաթիլ մը արցունք իսկ չէր վազեր կայսրուհիին սառած տոբոյն դէմքին վրայ:

Բայց պէտք եղաւ որ այս վերջինը մտածէր սոս.

կալի գայթակղութիւն մը և անբաղդատելի դժբախտութիւն մը կանխելու վերջին միջոցներուն վրայ:

Այդ մասին այնքան ու այնպիսի սաստիկ տխրութեամբ մը խորհեցաւ ան, որ առաջին իսկ գիշերը հետեւեալ երազը տեսաւ.

Բոլորովին մինակ՝ անսահման դաշտի մը մէջ աեղ լքուած էր: Օգնութիւն չէր խնդրեր: Ի՞նչ օգուտ: Ոչ ոք կար, ոչ իսկ մարդու մը հետքը: Բայց խաղաղ օդին մէջ լոյսի յանկարծական շողիւնի մը նման անցաւ անյազ ու կատաղի անզղի մը կողմէ հետապնդուած փոքրիկ թռչուն մը: Կայսրուհին անմիջապէս իր լանջքին տակ քաղցր ջերմութիւն մը զգաց, որովհետեւ անարեկած թռչունը իր ծոցին մէջ պահոււրտած էր:

Ընդոտտ արթնցաւ ան, խռոված՝ մէկ կամ միւս կողմէ նախապէս անբացատրելի անսահման երջանկութենէ մը: Եւ անա այդ վայրկեանէն սկսած զգաց որ ինք լլի էր: Ու ան ունեցաւ, իր երազին զօրութեամբ զաւակ մը, գեղեցիկ ինչպէս իղձը, ու երկար տտեն դիեցաւ իր մօրը կաթով: Որքան փայլուն եղաւ հանդէսը անոր մկրտութեան: Ի՞նչ բազմախոսուք ամբոխ պալատականներու, որոնք եկած էին հիանալ թագաւորական շառաւիղին վրայ, որ իրենց զաւակներուն կայսրը պիտի դառնար: Ի՞նչ մրցում ժողովուրդին մէջ, որ գահաժառանգի երեւումով ալ կայսրութեան ապագայ ճակատագրին մասին ապահով էր:

Ինչ պերճանք և ցնծութիւն: Գալով խնձոյքին, անոնք որ մասնակցեցան անոր, չլքեցին կայսերական սեղանը ուր կայսրը ի վերջոյ քնացաւ հանդիսաւորապէս, երեք օր ու երեք գիշեր ցնծութեաներ գերու և գոհունակութեան անեղ գոչերու մէջ, հակառակ կարգուսարքին որ, արգէն, կը տեսնենք, գոյութիւն ունէր: Կոչնականները անընդհատ շարաթ մը մերժեցին



ամէն ուտելիք: Վճիտ կաթիլ մը ջուր անոնց զինի կը թուէր ու կը խորշեցնէր զիրենք: Շրջականերէն տասներկու կայսեր, հարիւրի չափ իշխաններ, նոյն իսկ քանի մը յանդուգն մուրացիկներ կը գտնուէին հոն, որովհետեւ նման պարագայի մը ամենէն խեղճն իսկ իրաւունք ունի շուներու նետուած փշրանքներէ տարրեր բանի մը: Մեծ սրահին կեդրոնը, ոսկիէ թիթեղներով ծածկուած՝ որոնք կը ցոլացնէին արեւի պայծառութիւնն ու բիւրեղէ ջահերու շքեղութիւնը, թանկագին քարով տաշուած միակտուր սեղանի մը շուրջ—վասն զի այդ ժամանակները այսօրուան վտիտ բեկորներուն նման չէին,—ներկայ էին լուռ և բախտագուշակ պարիկները: Ժամանակ առ ժամանակ, երբոր նայուածքները կը դառնային դէպի սպիտակ երկար քաղով ծածկուած խորհրդաւոր դէմքերուն, տօնական աղմուկներու սոսկալի մըրիկը պատկառանքով կը լռէր անոնց ի խնդիր:

Այն ատեն կը լուէր քաղցր մրմունջի պէս անջըրպետուած խօսքեր, ու անոնք վէճի կ'ենթարկէին տղոն ապագան որ, իր սպիտակ խորձունձին մէջ աստեղասփիւռ կը քնանար:

Բայց յանկարծ ահա զարհուրանքի շարժում մը տեղի ունեցաւ անոնց շրջանակին մէջ: Անոնք զիրար դիտեցին, ապա իրենց մտահոգ աչքերը դարձուցին պարապ անկիւնը: Բոլոր հանդիսականները հարկադրուեցան հետեւիլ դէպի ոսկեայ աթոռը դարձած անոնց շարժումին: Աթոռը թափուր էր: Պարիկներէն մէկը կը բացակայէր: Մոռցայ զայն, ըսաւ կայսրը: Ինչպէս կրցայ մոռնալ, ու ան պրկեց իր ձեռքերը:

Ստիկա ա՛լ աւելի ցաւալի է, աւելցուց ամէնէն հինը խորհրդականներէն, ան որ առանց հրաման առնելու իրաւունք ունէր խօսելու՝ իշխաններու ու-

սուցիչ եղած ըլլալուն. ու ըսաւ, չարը, բացակայող պարիկն է միայն: Եւ պէտք է մօտէն հսկել կայսեր որդւոյն վրայ, որովհետեւ անկասկած ի դործ դրած պիտի ըլլայ ան արդէն իր կախարդանքը:

Աւելի քան ասիկա, ո՛վ ծերունի խորհրդական: Նախատուած՝ ինչպէս չէր եղած երբեք՝ չար պարիկը կ'ուզէր իր իսկ ձեռքով կատարել վրէժխնդրութեան գործը: Եւ ահաւասիկ, երբ ստնտուի համար ամէն վտահուծիւն ներշնչող կին մը կը փնտռէին.—ընդունակ զայն զերծ պահելու ամէն վտանգէ ու պաշտպանելու ամէն կարգի որոգայթի դէմ.—անծանօթ կին մը ներկայացաւ: Իր խօսքը աւելի քաղցր էր քան նայուածքը, ու մէկ շարժումով ան կը թուէր տարածել պերճութիւն: Կարծես ան պիտի յաջողէր հեռացնել փոթորիկ մը, միայն ամպերուն ժպտելով և իր աչքերը մ'թուծիւնը դիտելով կը թուէին աստղերու պայծառութիւնը արծարծել:

Բարի պարիկները պէտք է զրկած ըլլան զայն, ըսաւ կայսրուհին: Ինչ որ պէտք էր ինձ: Ես կը պահեմ զայն:

Կայսրուհին փութաց խոստանալ անոր ինչ որ կ'ուզէր, պայմանաւ որ իր ջանքերուն շնորհիւ տեսնէր գահաժառանգը առողջ, զօրաւոր և իմաստուն, պատրաստ ստանձնելու իշխանութեան սանձը, որ կ'իյնար իր յոգնասպառ ձեռքերէն:

Ու տղան կը ծաղկէր. ան կը մեծնար հրաշալիօրէն, ինչպէս երբեք մարդ արարածը չէր եղած: Եթէ ան ծնած ըլլար պարզ հրաշալիքներու տան մէջ, մարդ պիտի սոսկար, բայց պէտք չէ՞ր այդքան սպասել երկտասարդ իշխանէ մը, որուն գերբնական զօրութիւնը կուգար պարգև մը ընել առանց շառաւիղի մնացած յուսանատ կայսերական ընտանիքի մը:



Տղան կը ծաղկէր, քանի մը ամիսէն ան դարձաւ պայծառաչուի ջրազինդ բազուկներով և համարձակ հողիով պատանի մը:

Բայց իր մայրը՝ կայսրուհին, հիւանդացաւ:

Շրջանի բոլոր բժիշկները հրաւիրուեցան յայտնելու իրենց կարծիքը ու ցոյց տալու դարման մը:

Անոնք շփոթած կանգ առին դեղանի՝ արտաքենապէս քաջառողջ կնոջ առջեւ որուն մահամերձ ըլլալը կը տեսնուէր սակայն: Անոնք կը բարձրացնէին իրենց ուսերը, մեծ բառեր կը փնտռէին իրենց տըգիտութիւնը ծածկելու համար, իսկ պահապանները իրարու ետեւ կը բռնէին զանոնք ու դուրս կը նետէին իրենց անկարողութեանը պատճառաւ: Իւրաքանչիւր անգամուն կայսրուհին կը խնդրէր իր ամուսնէն չդիմել բնաւ անոնց, ու չպահել ոչ ոքի դէմ ոխ, որովհետեւ ան շատ լաւ կ'ըզար թէ մահացու էր իր ցաւը:

Ցաւագին ու անօգուտ շատ մը փորձերէ ետք երիտասարդ իշխանին ուսուցչուհին, որ իբր թէ չէր համարձակեր անձամբ ըսել աւելի կարևորութիւն ունեցող մէկուն՝ վստահութեամբ յայտնեց թէ դժուար չէր այդ հիւանդութեան գաղտնիքը, և եթէ իրեն հարցուէր, կ'ըսէր զայն:

Յայտնի է թէ ինչ անհամբերութեամբ կայսրը կանչել տուաւ զայն և հարցաքննեց: Ահաւասիկ ինչ յայտարարեց ան.

—Շատ հեռուն մէկը պէտք է երթայ՝ գտնելու կարմիր վարդը, որ եթէ դպի կայսրուհիին, պիտի բուժէ զայն:

Բայց ան որ փնտռելու պիտի երթայ՝ պէտք է ըլլայ երիտասարդ, ամբասիր ու քաջ: Անիկա պէտք չէ վախնայ մահէն վեհափառ հիւանդին հանդէպ տա-

ծած իր անձնուիրութեանը պատճառով: Չեմ ըսեր թէ ան կրկին պիտի վերադառնայ բայց եթէ կորսուի, ատիկա պիտի ըլլայ իր ամենամեծ պարզելը:

Անիկա ապացուցած պիտի ըլլայ թէ կը սիրէ զայն, որուն ամուսինը կ'իշխէ այս հողերուն վրայ:

Ու աւելցուց աւելի բարձր ձայնով, մնաց որ ան խօսեցաւ այնպէս որ լսելի ըլլար մինչև երրորդ սենեակէն իշխանին շատ սիրեցեալ մօրը:

Հարկ կա՞ր ըսելու որ իշխանը, քովի սենեակէն ուշադիր լսեց այդ խօսքերէն իւրաքանչիւրը: Եւ շատ բնական է տրուած ըլլալով իր սրտի բարութիւնը, ան գնաց նետուելու իր ծնողքին ոտքը բարի լուրը հազորդելու և արկածախնդրութեան փորձին ինքզինքը տրամադրելու համար:

—Պիտի երթամ փնտռել կարմիր վարդը, ինքզինքիս վրայ վստահ եմ ըսելու համար ձեզ, թէ պիտի յաջողիմ:

Ոչ ոք չկրցաւ ետ կեցնել զայն իր որոշումէն: Կայսրը այնպէս ձեւացուց թէ մէկ կողմը կը նայէր, իսկ կայսրուհիին շնորհալի դալուկ դէմքին վրայ մարգըրիտէ արցունք մը հոսեցաւ:

Ճամբան երկար ու դժուարին էր: Վերջ մը պիտի ունենար երբեք:

Արդեօք կրկին ետ վերադարձած չէ՞ր: Դատապարտուած չէ՞ր միթէ վնուկին կողմէ աւերելու ինչ որ յօրինած էր արդէն: Այս մասին կը մտածէր անա յոգնասպառ այլ ոչ յուսահատ դեռապի իշխանը: Բայց ահաւասիկ բոլորովին հեռուն անմատչելի թուող լերան մը կատարին վրայ դղեակ մը կ'երեւէր, որուն բիւրեղէ որմերը կը վերադարձնէին սպիտակ փայլատակներու նման արեւին խաչաձեւող լոյսը: Սմէն գնով պէտք էր հոն հասնիլ: Երբ անիկա սարահարթին վրայ



բարձրացաւ, որ ծաղկազարդ անհուն պարտէզ մըն էր, արեան կաթիլներ կ'իջնէին երկար ատենէ ի վեր անոր մերկ ոտքերէն:

Շատ գեղանի կին մը անդրդուելիօրէն խաղաղ դէմքով ու պողպատեայ աչքերով՝ դիմաւորեց զինք համար ու հանդիսաւոր քայլերով:

— Ի՛նչ կը փնտռես — և ան հնամենի շատ հին գիրքի մը մէջ վաղնջական խօսքեր կարդալ կը թուէր: Ի՛նչ կը փնտռես ճամբորդ, արնոտ ոտքերով խորտակուած դիմադծով, այս ջուրերուն մէջ ուր դարերէ ի վեր ես կ'սպասեմ քաջասրտութեանը այն մարդերուն, որոնց, ըսին թէ կը նման իմ ես, ըլլալով բոլորովին անբիծ և անմահ:

Առանց կարենալու բաժնել իր աչքերը աներեւոյթ և շքեղ էակին ցուրտ աչքերէն, իշխանը յայտնեց իր անձնուէր արկածախնդրութեան նպատակը:

— Է՛ այո, կայ կայսրուհիին առողջութիւն պարգեւող ջուրը: Դուն պիտի գտնես զայն կախարդութեանց պարտէզին մէջ: Հոն է: Որովհետեւ յոգներ ես, զայն հազարաւոր փարսաններ կը մօտեցնեմ ես:

Առանց շատ մեծ ճիգ սպառելու երիտասարդ հերոսը հասաւ հոն: Ահաւասիկ անարատ ոսկիէ ցողունի մը վրայ արնագոյն բոսոր վարդը: Երիտասարդ իշխանը հմայուած դիտեց զայն, բայց իր զարմանքը աւելի մեծ եղաւ, երբ ծաղիկը խօսիլ սկսաւ:

— Զիս կը փնտռես ճամբորդ: Գիտէի: Ոսկեփայլ մեղու մը ըսաւ ինձ ատիկա երէկ երեկոյ խիստ գաղտնօրէն: Իայց պէտք է գիտնաս որ ինձ տիրանալու համար հարկ է երկար և դժնդակ աշխատանք մը կատարել: Դուն ծնունդով իշխան ես: Պիտի յօժարիս հոն իջնել: Որովհետեւ պէտք է պեղես իմ դիւրարեկ արժատներու հողը, արմատախիլ ընելու համար յոռի

խոտերը որ կը խեղդեն զիս, իսկ կեանքս զովացնելու համար հեռաւոր գետակէն ջուր պիտի բերես:

— Պիտի ընեմ ատիկա, պատասխանեց իշխանը:

Քանի մը ժամէն ոսկիէ ցողունը կը բարձրանար փուշերէ ամբողջովին մաքրուած ածուի մը մէջ ու ջուրը կը թրջէր աճող բոսորագոյն վարդին արմատները: Երախտագէտ՝ վարդը անոր վրայ ծուեցաւ և սոսկ հպելով՝ իշխանին մատուցներուն մէջ էր անիկա: Գարծես մարդկային արեան կաթիլ մը ժայթքեց ոսկիէ ցողունէն և համակ նորափթիթ վարդ մը կազմուեցաւ անկէ յանկարծ:

Նոյն իրիկունն իսկ իշխանը կը գտնուէր բիւրեղէ պալատին մէջ: Ու բարի պարիկը զայն պարտատած տեսնելով՝ հրաւիրեց ապաստանիլ իր երդիքին ներքեւ: Իշխանը շնորհակալութիւն յայտնեց ու պառկելուն պէս իր թարթիչները փակուեցան: Պարիկին ուզածն ալ այդ էր, որովհետեւ ան հրաշքի վարդերը փոխեց իր պարտէզին մէջ ծաղկած հասարակ վարդի մը հետ, ամէն կերպով նման՝ բայց առանց հրաշալի գօրութեան մը:

Ան չէր ճանչնար աւելի երջանիկ ուխտագնացութիւն մը երբ, բերաւ մօրը այն, ինչ որ կրնար անոր առողջութիւն և երջանկութիւն պարգևել: Կայսրուհին տեսնելով իր զաւակը, կարծես երիտասարդացաւ: Իջաւ մրգաստան, երկարօրէն պտտեցաւ հոն, ժպտելով: Խօսեցաւ ամբողջ գիշերը իր անցուցած վը, տանգին մասին ու քնացաւ տղու մը պէս: Ու ըսել թէ չար պարիկը շատ վշտակրեցաւ եղածէն, տեսնելով յաղթական որդին՝ առողջացած մօրը քով... Բայց հետեւալ առտու իշխանուհիին դէմքին վրայ վերըստին երեցաւ փղոսկրէ դալկութիւն մը և աչքերը սառեցան: Այսպէս խօսեցաւ ան այն ստեղծ.



— Իմ այս հէգ մարմինս խորապէս հիւանդ է: Ինծի համար անհրաժեշտը, ըստ ան, ուժգին ձայնով մը, ոսկեխնձորն էր:

Երիտասարդը տրամադրուեցաւ երթալ զայն փընտըռելու: Բիւրեղեայ պալատին պարիկը ընդունեց զայն:

Ո՛, անոր ոսկեխնձոր մը պէտք է, կարելի է ունենալ զայն ևս:

Բայց վիշապ մը կը պաշտպանէ ծառը: Մի՛ փորձեր ցորեկ ատեն յաղթել անոր: Որովհետև ոչ մէկը կըրցած է ամենափոքր վէրք մը հասցնել անոր: Բայց գիշերը ան կը կորսնցնէ իր ուժերը: Եթէ տղամարդ ես կրնաս զայն սպաննել ու մայրդ կ'ապաքինի: Այլապէս, ջանա՛ դոնէ անոր առաջքը առնել:

Ամէն պարագայի տակ առ այս սկահը: Ան կը պարունակէ ջուր մը որ կրնայ փրկել քեզ, վե՛ր առ այս խողանակը, անօգուտ պիտի չըլլայ քեզի ան, իսկ այս ընկոյզը՝ լա՛ւ պահէ:

Շքեղ մրգասատնի մը մէջ ոսկեխնձորներով բեռնաւոր ծառը աչքի կը զարնէր:

Իր անսահման թեւերուն ծալքով հրաշուի վիշապը կը պաշտպանէր զայն: Իշխանը ղողղողաց սոսկավիթխար և տարաշխարհիկ գազանը տեսնելով: Բայց երբ արևը մարը մտաւ, ծանր մարմինը գալարեց իր օղակները և իշխանին ձեռքը կրցաւ խնձորի մը հասնիլ: Մէկ ոտուով աներևութացաւ ան:

Հազիւ քանի մը քայլ առած էր, հրակէզ շունչ մը պարուրեց զինք:

Ինքզինքը ժողվելով, վիշապը աճապարանքով կը սողար անոր հետքերուն վրայէն: Ինչպէ՛ս ազատիլ իր հետապնդումէն: Երիտասարդը ձգեց սկահը, մէջի կաթիլ մը ջուրը աղմկալից հեղեղի մը փոխուեցաւ: Վիշապը կանգ առաւ:

Փրկութիւնն էր այս: Բայց ան սկսաւ երկարօրէն խմել իր անցքը խափանող ջուրէն: Գազանը խոչորցաւ և վերըստին գետինը կ'երևէր:

Ողորանակը նետուեցաւ անոր դէմ, մթամած անտառ մը դարձաւ ան, անթափանցելի թաւուտներով, ոչ մէկ կածան կը ձեռքէր իր անելանելի խորութիւնը:

Բայց վիշապը հակայական սղոցներու պէս ակուաներ ունէր: Եւ իւրաքանչիւր անգամուն որ ծառի մը կը զարնէր զանոնք, շանթահարուածի նման կ'իյնար ծառը: Արդէն ճամբայ մը կը բացուէր:

Յուսահատօրէն առջին նետուած ընկոյզ մը բարձրացաւ միջնաբերդի որմին նման. հսկայաբերձ ժայռ մը ցրուեցաւ, որ կը խափանէր ճամբան: Վիշապը կանգ առաւ: Կարծր քարերու դէմ առաջին փորձին ակուաները խորտակուեցան: Եւ արդէն արքայազունը կը գտնուէր բիւրեղեայ ապարանքին իշխանուհուն հոգին վրայ, մինչ աներեւոյթ կախարդանքներ կը պաշտպանէին անոր սահմանները: Անիկա շատ յոգնած էր ռակայն... պառկեցաւ և իր խորունկ քունին մէջ ուրիշ ոսկեխնձոր մը դրուեցաւ տեղը անոր զոր իր կեանքին գնով քաղած էր վիշապին մրգաստանէն:

Վերստին կայսրուհին ունեցաւ կատարեալ առողջութեամբ և երջանկութեամբ լեցուն գիշեր մը, շընորհիւ իր զաւկին:

Յետոյ կրկին հիւանդացու: Ու լսելի եղաւ չար պարիկին ձայնը, այս անիծեալ հիւանդութեան մէջ կայ յայտնօրէն կախարդութիւն մը:

Հրաշագործ ջուրը միայն, զոր կը պահպանէ ժուռատ պառաւ մը, կրնայ փրկել զինք:

Բայց ո՞վ է որ պիտի կրնայ բերել զայն:

Իշխանը մեկնեցաւ հրաշագործ ջուրը փնտռելու: Բիւրեղեայ պալատին մէջ ան քաղեց սա տեղեկութիւնը.



Չուրը ժողատ պառաւին կրակարանին վրայ է: Բայց ունենալու համար գայն զգուշացիր իր կերակուրէն ուտելու և խմելու քեզի տալիք Չուրէն:

Սոսկալի էր պառաւը, որ մ'րոտած խրճիթի մը մէջ, մինչև տանիքը ողողուած գէշ խոտերով հրաշագործ Չուրը կը պահէր: Մէկ նայուածքով ուխտաւորը երևան հանեց կրակարանին վրայ կիսովին խորտակուած ամանը, որ Չուրը պարունակելու էր:

Կէր, զաւակս, ըսաւ ժանտ շունչով մեզերան, կէր, զաւակ, այս սպիտակ հագէն:

Արքայազունը այնպէս ձևացուց թէ բերանը կը տանէր բորբոսէ բոլորովին կանաչցած հացի պատառը, ու նետեց գայն:

—Ու պէտք է ծարաւցած ըլլաս: Որքան անպակ է այս Չուրը:

Ան ձգեց որ վար թափի իր շրթունքին մօտէն ապականած վատառողջ Չուրին թելը, որ գնաց թրջել սալայատկուած գետինը:

Յաջորդ օրը պառաւը կը խորզար զղղեցնելով իր հիւղակին որմերը, մինչդեռ արդէն երիտասարդ իշխանը զով օրին կը ձամբորդէր, կօշին մէջ պահած հրաշագործ Չուրը: Բայց հետեւեալ գիշերն իսկ բիւրեղեայ պալատին պարիկը անոր տեղ դրաւ իր պարտէզը ոտգող առուակին Չուրէն:

Այս անգամ չար պարիկը, որ կը կարծէր գործը վերջացուցած ըլլալ այս անիծեալ իշխանին հետ, որոշեց ոչ ոքի թոյլ չտալ անոր կորուստին մտահոգութիւնը: Հասնելուն պէս գիշերը ան խորունկ քունով կը քնանար մրգաստանին մէջ, դղեակէն առած ձին կապուած ծառի մը: Շատ սուր զմելիով մը պարիկը կըտրեց վիզը անոր զոր փճացնելու համար մեծցուցած էր: Այս գեզեցիկ երիտասարդ մարմինը վերջը հազար մառ-

նիկներու բաժնուեցաւ: Հին կտակէ պարկի մը մէջ խեղճ կտորները ձիուն քամակին վրայ բեռցնելէ ետք ան քշեց կենդանին՝ փուշի ծիղով մը հարուածելով:

Տարածելով իր թեւերը ձին մէկ ոստումով հասաւ բիւրեղէ պալատը

Եթէ բարի պարիկը կանուխէն չգիտնար փորձերուն թիւը և անոնց նկարագիրը, ան շատ պիտի լար բանալով արիւնոտ պարկը ու ձանչնալով յօշոտուած մարմնին կտորները: Բայց անիկա կեանք պարգեւելու գօրութիւնը ունէր և զայն ընելու միջոցները իրեն վերապահուած էր:

Հրաշագործ Չուրին կաթիլներուն զպած՝ մասերը իրարու միացան: Իշխանը կատարեալ էր, բայց անկենդան իր առջեւը կը գտնուէր: Արիւնոտ վարդը իր անդամներուն կեանք ու աչքերուն լոյս տուաւ: Երբ ոսկեխնձորը ունեցաւ իր ձեռքերուն մէջ, ուշքի եկաւ ու ցատքեց իր բարի ձիուն վրայ:

—Երկար քուն մը առի, ըսաւ:

—Սուանց ինծի, յարեց պարիկը, երբեք պիտի չարթննայիր:

Վարդը, խնձորը և հրաշագործ Չուրը բերելով՝ երիտասարդ իշխանը առողջութիւն պարգեւեց իր մօրը:

Բայց որովհետև ան կը ձանչնար բարի պարիկին շնորհիւ իր տառապանքներուն պատճառը, իր վրէժը լուծեց չար պարիկէն: Ընկոյզի պարկով վայրի ձիու մը կապուած՝ չարագործ պարիկը քաշկռտուեցաւ փուշերու ընդմէջէն: Ընկոյզները մէկիկ մէկիկ, կ'իյնային իսկ մարմնին կտորները անոր կողերէն, և ասիկա արդար էր, վասնզի, ամենակարող պարիկ մը ըլլալու համար, պէտք է, յամենայն դէպս բարի սիրտ մը կըրել: Այլապէս կը կորսուի անմահութեան շնորհը:

Կան նաեւ վրէժխնդիր պարիկներ:





## ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԱՂՔԱՏԸ



Աղքատ, խիստ աղքատ ընտանիք մը կար, որ շատ մը մանչ զաւակներ և աղջիկ մը ունէր: Աղջկը կը գերազանցէր իր եղբայրները: Իմաստուն էր սրտով հետեւ:

Անոնք ոչ արտ, ոչ այ տուն ունէին: Եւ անա տեղւոյն իշխանը զթաց անոնց վրայ ու ըսաւ. «Ահա-ւասիկ հող մը, ձերը ըլլայ, կառուցէք»: Աղքատը մեկուսի մաս մը գետին ընտրեց: Ու զաւակներուն հետ մէկտեղ աշխատելով փոս մը փորեց, ուր պիտի բարձրանար հիւղակը: Բայց գիշերը իր հարուստ զբացիին կովը ինկաւ փոսին մէջ, ու աղքատը դատաստանի կանչուեցաւ իշխանին առջեւ:

— Իրաւունքը ան պիտի ունենայ, ըսաւ այս վերջինը, որ պիտի կարողանայ պատասխանել երեք հարցումներու: Ի՞նչ բան կը փախչի ամենէն արագ, ի՞նչ բան է ամենէն պարարտը և ո՞վ է ամենէն բարին:

Խեղճ ծերուկը կուլար, երբ իր դուստրը մօտեցաւ իրեն, ու յարեց. «Յեզ երեցածին չափ դժուար չէ պատասխանը»:

Հետեւեալ օրը հարուստը ծիծաղելով կը ներկայանար իշխանին: Անիկա ապահով էր լաւագոյն պատասխանը դտած ըլլալուն:

— Ի՞նչ բան է, նայինք, որ կը փախչի ամենէն արագ, հարցուց իշխանը:

— Անտարակոյս իմ ձիս:

— Տխմար մըն ես, յարեց իշխանը: Իսկ դուն, շինական, ի՞նչ կը կարծես:

— Ոչինչ կը փախչի մտածումէն արագ:

— Տե՛ս, տե՛ս: Կը հարցնեմ հիմա առաջինին: Ի՞նչ բան ամենէն պարարտն է:

— Խոզս, պատասխան տուաւ հարուստը, առանց ինքզինքը կորսնցնելու:

— Խոզը պահէ և վայելէ զայն: Բայց եթէ այդպէս շարունակես, պիտի կորսնցնես դատը: Իսկ քու կարծիքդ, շինական:

— Իշխան, ըսաւ աղքատը, ի՞նչ բան կրնայ աւելի պարարտ ըլլալ մեզ մտուցանող մեր երկրէն:

— Կրկին լա՛ւ, պատուական մարդ: — Իսկ ան որ ամենէն բարին է: Հարո՛ւստ, վերստին դուն պիտի խօսիս առաջ:

— Ի նպատակին ձեր դատավճիռը, պատասխանեց հարուստը, սաստիկ ուռած:

— Պիտի չունենաս զայն: Իսկ դուն, փոքրիկ ծերուկ, որ ամենուն պատասխան կը գտնես:

— Միթէ Աստուած չէ՞ ամենէն բարին, որ մեր մեղքերը կը ներէ:

— Այո՛, անկասկած: Հարուստը կրնայ մեկնիլ: Մերժուած է իր ամբաստանութիւնը, որուն համար պիտի պատժուի: Գայով քեզի, շահողին, դատ մը կայ որ ես ինքս կը բանամ քու խորամանկութեանդ դէմ: Որովհետեւ այդ պատասխանները ուրիշէ մը կուզան և զոր արժեցուցիր հակառակ մեր պայմանին: Յայտնէ՛ զայն, թէ ոչ պիտի մեռնիս:

Ինչ ընէր: Կախաղանէն ազատելու համար, ծերուկը խոտտովանեցաւ թէ իմաստունը ինքը չէր՝ այլ իր աղջիկը:



— Պէտք է տեսնեմ այդ աղջիկը:

— Պիտի գայ, իշխան:

— Թո՛ղ գայ ուրեմն: Բայց, գիտես, ոչ հասարակ մարդոց պէս, որոնք կը նմանին իրար, որովհետեւ անոնք անբան են: Ո՛չ, ան պէտք է գայ, կը լսես, ո՛չ ձիով, ո՛չ հետիոտն, ո՛չ հագուած, ո՛չ մերկ, և ան պիտի քայլէ ոչ ճամբուն մէջտեղ, ոչ ալ եզերքէն:

Այս անգամ խեղճ մարդը սրտաբեկ եղաւ: Ձէր կարծեր որ նոյնիսկ իր դուստր, իր այնքան խմաստութեամբ, պիտի կարենար երբ և իցէ այդ պայմաններուն դժուարութիւնը քննել: Բայց երբ խօսեցաւ անոր այդ մասին՝ աղջիկը սկսաւ խնդալէն մարիլ:

— Բայց մեր իշխանը այնքան չարահնար չէ: Կը տեսնուի որ երիտասարդ է, (ու մտածեց որ գեղեցիկ ըլլալու է ան, բայց ոչինչ չըսաւ) միայն ինծի պիտի տաս երկու կատու, ձկնորսի ուռկանի հիւսուածներ և քօշ մը:

Ի՛նչ պիտի ընէ ասոնք, խորհեցաւ ծերուկը, քերելով իր սպիտակ ցանցառ մազերը: Բայց քանի որ աղջիկը այդպէս կը փափաքի, պէտք է գտնել:

Եւ անաւասիկ խմաստուն աղջիկը արձակեց նախ երկու կատուները ճամբուն վրայ, ապա նստաւ քօշին վրայ ու մեկնեցաւ, ուռկանին հիւսուածներով ինքզինքը ծածկելու համար մերկացած:

Իշխանը գայն վտխցնելու համար որսի ամենէն ատաղի շուներէն երկուքը զրկած էր, որոնք կատուները գտնելով վազեցին անոնց ետեւէն: Երբոր ան տեսաւ դեռատի կոյսին գալը, հիացած մնաց, որովհետեւ անիկա պայմանները լաւ լրացուցած էր, ձիուն վրայ և առանց ձիու չէ՛ր: Ուռկանի հիւսուածքները չէին ծածկեր գայն, ասանց սքօղելու իր մերկութիւնը: Եւ վերջապէս, քանի որ գուարթ քօշը կը ճարակէր

ամէն կողմ, չէր միթէ ճամբուն վրայ, բայց միշտ եզերքը:

Իշխանը երդուընցած էր ամուսնանալ բարձր իմացականութեամբ աղջկան մը հետ: Ոչ ոք կրնար գերազանցել անիկա, որ գեղեցիկ էր, խիստ գեղեցիկ, ուռկանի հիւսուածքներուն մէջ. ինչ որ մտածել կուտար: Ու իշխանը քաղցր ձայնով մը ըսաւ ծերուկին.

— Լսէ՛, հայր, կուտամ ինծի դուստրը:

Աղջիկը ամփոփեց աչքերը, որպէս թէ հարցումը իրեն ուզողուած ըլլար:

Գալով ծերուկին, ան կ'արտասուէր իշխանին օտքերուն առջևը:

Մեծ հարսնիք մը տեղի ունեցաւ և երկու ամուսնացածները երջանիկ երկար տարիներ ապրեցան, որովհետեւ ողջմտութիւնը ինք տուն կուտար իւրաքանչիւր խօսքին անոր՝ որ այժմ բարձր, աղին և աղղեցիկ կին մըն էր:

Ու անս անգամ մը իշխանը հարկադրուեցաւ բացակայիլ, այն օրն իսկ դատաւարութիւն մը պիտի տեղի ունենար, և որովհետեւ չէր ուզեր զինք փոխարինող ոչ ոք ունենալ ու կը վախնար մանաւանդ որ երեւան ելնէ թէ կնոջ մը խմաստութիւնը կը գերազանցէ իր կարծիքը, ըսաւ անոր.

— Ըրէ՛ ինչ որ կ'ուզես, բայց եթէ դան քեզի կարծիք մը հարցնելու, պիտի չյայտնես, շատ վտանգաւոր է, իմացիլ:

Ու վաղ առաւօտուն երկու գիւղացիներ ներկայացան անոր, Անոնք շատ զրգուած էին, պատրաստ ծեծուելու: Մէկը որ աւելի աղմուկ կը հանէր՝ կը խնդար և կը պօռար, խափանեց միւսին ձայնը՝ ըսելու համար.

— Տիկին, այս մարդուն սայլին անիւլին մէկը կորսուած էր: Ես իմի՛ններէս մէկը փոխ տուի: Առ-



տուն մատաղածի մը կար իր ձիերուն մէջ: Կը սնդէ որ իր զամբիկը ծնունդ աւած է անոր: Ես գիտեմ որ ատիկա ծնողը իմ անիւս է: Չուզեր հաւատալ ասոր: Տուէ՛ք ինձ՝ ատեանին վճիռով՝ մատաղածին:

Կինը զոնէ խնդալ կ'ուզէր, բայց ատիկա կարծիք մըն էր: Ու անա խիստ լրջօրէն ըսաւ.

Երկուքնիդ ալ տուներնիդ գացէ՛ք: Վաղը եկէ՛ք: Իսկ դո՛ւն, դատ բացող, դալուդ պիտի ըսես ինձ թէ լիճին գորտերը ինչ ըրին ալիւրի թեփով չի սրտիդ զոր հոն դրի ես:

Հետեւեալ օրը միամիտ մարդը ուսերը բարձրացնելով սրտասխանեց.

— Տիկին, գորտերը թեի չեն ուտեր:

— Եւ ուրեմն, ոչ իսկ անիւները մատաղածի կը ծնին:

Իշխանը վերադարձին՝ արդէն գիտէր որ իր կամքը զրժուած էր: Յուրս ձայնով մը ան հրաւիրեց կինը ձգել իր տունը որուն օրէնքները յարգել չէր ուզեր:

— Միայն նկատի ունենալով միտին անցուցած մեր տարիները, դուն քեզ հետ պիտի վերցնես ամենէն շատ ինչ որ կը սիրես:

Կինը հառաչեց, բայց ինքզինքը անմիջապէս հաւաքեց, ըսելու համար.

— Թո՛ղ կամքդ ըլլայ: Դուն զիս մահէն վրկեցիր, քու իրաւունքդ է վերստին զիս կորուստի մատնել: Միայն իրարու դէմ՝ վերջին ճաշ մը կը խնդրեմ քննէ:

Իշխանը շնորհեց զայն: Ու որովհետեւ գինին ընտիր էր և կինը գիտէր հրամցնելու եղանակը, իշխանը քնացաւ անոր բազուկներուն մէջ: Չայն բարձրացընելով, — ուժեղ էր ան որովհետեւ, — կինը տարաւ

խրճիթ և մեղմօրէն դրաւ կրակարանին վրայ, հոն՝ ուր քնացեր էր անիկա, մինչեւ իր երջանիկ ամուսնութիւնը:

— Ինչ կը նշանակէ ատիկա, հարցուց ծերունի հայրը զարմացած:

— Մոռցա՛ր հայր, թէ աղջիկդ իմատուն է յարեց զուստը, թեթեւ յանդիմանութեամբ մը:

Հարկ կայ ըսել թէ յաջորդ օրը տեսնելով ինչ որ իր կինը ամենէն աւելի կը սիրէր, ու կապուած ըլլալով իր հանդիսաւոր խոստումին՝ իշխանը համբուրեց զայն: Ու ատիկա յօժարութեամբ՝ նոյնիսկ եթէ իմացուէր թէ ամենէն լաւ կարծիքը էրենինը չէր նաւ:





# ԿԱՅՍԵՐ ԴՈՒՍՏՐԸ



Կայսրը տասներկու դաւակ ունէր, աւելին քան շատերը իր հպատակներէն, եւ ինչ դաւակ: Գերազանց մարտիկներ: Կը բաւէր որ անոնցմէ մին երեւէր կայսրութեան սահմանին վրայ, որպէս զի թշնամիներ հեռանային վհատած: Բայց այս քաջարի ու խստամբեր դաւակները ունենալով հանդերձ կայսրը և կայսրուհին զուրկ էին արեւի այն ճառագայթէն, որ տան մը մէջ աղջիկն է — պարճանուէի աղջիկ մը, որ կ'երգէ ու կը կարկաչէ, կ'երագէ ու կը ծպտի, կը զուարթացնէ ու կը մխիթարէ:

Ու անոնք՝ կայսրը և կայսրուհին, երկար ատեն ազօթեցին, մինչև որ բախտին բացառիկ մէկ շքնորհով իրենց ձերութեան օրերուն աղջիկ մը տրուեցաւ իրենց: Ու ան այնպէս էր, ինչպէս կը բազմային անոնք, — ատողջ, գեղեցիկ, իմաստուն ու քաղցր: Ու եւ արքունիքի մէջ անոր հետ բաղդատուելու կարող դեռատի անձ մը գոյութիւն չունէր: Անոր հոգիէն ծորող ճառագայթները կ'ոսկեզօծէին արքայական ամոլին սպիտակ մազերը:

Բայց անա, — քանի որ անոր մկրտութեան մտցած էին հրաւիրել պարիկները, իր ունեցած բոլոր շքնորհներուն մօտ, ան զրկուած էր լաւ բախտէ մը — չնորհէն՝ որ կը դերազանցէ բոլոր միւսները:

Ընդհակառակը, դժբախտութիւնը կը տարածուէր իր շուրջը և աւեր կը գործէր: Հունձքը վատ եղաւ ու

մարդիկ ուսելու ոչինչ ունէին, հրդեհ մը կործանեց արքայական պալատին մէկ մասը, կայսեր դաւակները կռուեցան իրենց կիներուն հետ և լքեցին դանոնք, թշնամի արշաւանք մը անակնկալի մատնեց կայսրութիւնը, որուն հետեւանքով տառապեցաւ ան երկար ատեն, իսկ արքայական սպարանքին ամենէն գեղեցիկ ծաղկէին կը ծաղկէին միայն թառամելու համար:

Չար բախտ մը կար, եւ անա երբ կը փնտռէին անձը որ այս դժբախտութեան պատճառն էր, ցաւով հաստատեցին անոր կայսեր դուստրը ըլլալը: Իր ծրնունդէն սկսած բոլոր աղէտները կ'ողողէին երկիրը՝ երջանիկ մինչև այգ թուականը: Նոյն խոկ նկատողութեան առին որ մնայուն դժբախտութիւնը երեւան կուգար ա՛յնտեղ ուր կապրէր և կամ հոն՝ ուրկէ կ'անցնէր դեռատի իշխանուհին: Զինքը շատ կը սիրէին, տրուած ըլլալով իր տոհմին արիւնն ու յատկութիւնները, ու ատոր համար ամբողջ տասնըվեց տարիներ համբերեցին նախ քան հրապարակաւ յայտարարէին թէ՛ կայսրութեան սահմաններուն մէջ աւելորդ մէկը գոյութիւն ունի:

Կայսրը անձամբ — ինչ սրտադողով — համոզուեցաւ ատոր: Եւ երբ, իր խորհրդականներէն ամենէն հինն ու ամենէն լուսածր, իրեն ըսաւ, «Պէտք է հեռացնել դուստրդ,» ան երկարօրէն հառաչեց ու ի վերջոյ գլխով հաւանութիւն յայտնեց:

Իր մտքին մէջ եղածը կը գուշակէք անշուշտ: Երբ իրմէ իր աղջիկը՝ կը թշնամիէր խափանել լոյսը իր ձերութեան օրերուն: Գալով կայսրուհիին, այդ մասին չխօսեցան իրեն, վիշտէն կը խենդենար ան: Շքչուկ կը շրջէր թէ անտեսանելի և անզիմադրելի ոյժ մը մղած էր կայսեր դուստրը թողուլ իր ծնողաց սպա-



րանքը, և թէ ան պէտք էր իր գեղեցկութեան, իմաստութեան ու քաղցրութեան համուպատասխան ապաստարան մը գտած ըլլար իրեն համար:

Արդ ծերունի խորհրդականը յանձն առաւ այս անգութ գործողութիւնը:

Երթանք ծաղիկներ քաղելու մեծ անտառին մէջ, ըսաւ ան դժբախտ դատապարտալին: Անտառին ճիշտ մէջտեղը չտեսնուած ծաղիկներ կան, զոր ոչ մէկ երեւակայութիւն կրնայ պատկերացնել, ծաղիկներ որ յաւերժական թարմութիւն մը ունին և որոնք կը ձայնեն ու կ'երգեն:

Ամառուան ամբողջ երկար օր մը իշխանուհին թափառեցաւ անսահման անտառին մանուածապատ կածաններուն ընդմէջէն, փնտռելով ու մէկ կողմ նետելով ծաղիկները, որ չէին նմաներ ստապատիր նկարագրութեանը իր արհեստը կերտելու մէջ վարպետ ծերուկ քաղաքագէտին: Անիկա այնպէս հրապուշտուած էր իր սպասած ծաղիկն տեսքով, որ յողնութիւն և յուսահատութիւն չէր զգար: Իր մտադրագութեան մէջ բոլորովին մոռցեր էր խորհրդականը: Երբ երեկոյեան խորունկ ստուերները իջան յանկարծ, ան փրնտուեց իր ուղեկիցը, հոն չէր անիկա: Քանի մը ժամէ ի վեր ան բռնած էր դէպի ապարանք տանող ուղին:

Գտնել այդ ուղին անկարելի բան մըն էր կայսեր աղջկան համար: Բայց, որովհետեւ անթափանցելի անտառին մոռնող, կաղկանձող և ոռնացող ուրուականները զայն կ'աճարեկէին՝ ինքիներքը ազատելու համար ան բարձրացաւ անտառին մէջ նշմարած ամենաբարձր ծառին կատարը: Եւ ահաւասիկ բոլորովին խորը տկար լոյս մը կը պլպլար, ան չէր նմաներ հեռաւոր աստղի մը լոյսին, ոչ ձահլճի մը վերեւ դտնուող կըրակէ շրջմոլիկներու, ոչ կանաչորակ կայծի մը, որ կ'ան-

ջատի փտած հին փայտէ ու կը ծփծփայ տարտամօրէն: Ան որոշեց, ամէն գնով, հոն հասնիլ: Պիտի ձեզ չըսեմ թէ ինչ վիճակի մէջ, որքան ճիգերէ ետք, անիկա հասաւ խրճիթի մը առջև որ կը թուէր ատենօք շինուած ըլլալ խլուրդներու կողմէ, կաղնիներու կանաչ մամուռով: Գուռը հրելով, որուն բորբոսած փայտը երբեք զոցուած չէր, ան նշմարեց խեղճ փոքրիկ մուրացկանուհի մը, պառաւ աշխարհի չափ, որուն կարմիր աչքերը քթթուածով զինք կը դիտէին: —Ո՞վ ես դուն, գեռատի կոյս, առաջինը մարդերէն, որ կ'երեւի խրճիթիս սեմին վրայ:

—Սո դժբախտ աղջիկ մըն եմ, անօթի ու ծարաւի:

—Անտառը հարուստ է աղբիւրներով, բայց ինքզինքս կերակրելու համար ոչինչ ունիմ: Որովհետեւ մեղք պիտի ըլլար որ դայերը փարատէին քեզ, քովս կեցիք ուրեմն: Քու երիտասարդութիւնդ պիտի գործէ իմ նուազած ծերութեանս մօտ:

Արդարեւ պառաւը ամէն բանէ զրկուած էր իր հիւղակին աղտոտ բակին մէջ հաւ մը միայն կար, որ ամէն օր հաւկիթ մը կ'ածէր, որով կը սնանէր ան, իսկ շուն մը և կատու մը իր ծերուկ ընկերներն էին: Թէպէտ ոչ շատ ուրախ, այլ շնորհիւ իշխանուհիի ձիւնաթոյր ձեռքերուն այնքան զուարթօրէն գործուեալայ՝ քիչ ատենէն այս հնամենի խղիկին միակ խուցին մէջ երեւցաւ ոչ միայն լաւագոյն կերպով յարդարուած պալատէն պահանջուած մաքրութիւնը, այլ և ժպիտը անտառի ամենազեղեցիկ ծաղիկներուն, իսկ բակին մէջ տնկուած ծառատունկեր գեշերային ապաստան մը կուտային հաւին, շուք՝ ծերացած շանը, պատշաճօրէն լուսացուած, կ'է կատուին, որ կը քընաւար, զգուանքներու մէջ:



Հագար անգամ պառաւ կիներ ըսած էր .

«Պատուական աղջիկ մըն ես դունս»

Բայց օր մը անա — հազիւ շարաթ մը անցած իշխանուհին այս մտքորոշած խղիկը կրնար իր վերջնական բնակարանը համարել, — չյուրեցաւ այլևս հաւին կրկուրքը ու երբ իր ատրուհին առնելու գնաց անուամ թարմ հաւկիթը, թեւերը տարածած՝ անիկա հաւը գտաւ մեռած :

— «Մեծ դժբախտութիւն մը կը հասնի մեզի, ըսաւ ան յուսահատ ձայնով մը :» Կորսնցողցիներ ինչ որ ամենէն աւելի կ'օգնէր մեզ մեր դոյութիւնը պահելու այս դժնդակ առանձնութեան մէջ : Այսուհետեւ անտառին խոտերը միայն կը մնան մեր սնունդին համար :

Գեռատի կոյսը սարտադր : Ինք եւ նկատեց որ դժբախտութիւնը յայտնապէս իր քայլերուն կը կառչէր : Պիտի չկրնար յաղթել անոր, շնորհիւ իր աշխատանքին, իր անձնուիրութեան, իր խոնարհութեան ու քաղցրութեան :

Բայց քանի մը օր վերջ, գիշեր մը ալ չէր լսուեր շանը հաչիւնը, որ կ'արգելէր դէպի խրճիթ վայրի գազաններու մուտքը, սղմուկներ արթուն պահեցին իշխանուհիին մտատանջ հոգին . մերթ իրեն այնպէս կը թուէր թէ կը հտուրտային, կը խորհային մամուռէն աղաղուն որմերու դէմ, իրրեւ թէ տեղեկանայու համար որսի մը մասին, չքուած այնուհետեւ թառուտներու խորը յածող արիւնատուշտ բնազդներու : Ու հետեւեալ օրը, պառաւին դողդոջուն ոտքը դպաւ արդէն շանը փառցած դիակին : Եւ անա յանկարծական խորհուրդ մը լուսաւորեց անոր միտքը : Չար բախան էր ատիկա : Ով կրնար գայն բերած ըլլար : Իր նայուածքը ուղղուեցաւ դէպի իր գեռահաս բարեկամու-

հին : Ու ցամքած կուրծքին վրայ սեղմելով կատուն, իր վերջին ընկերը, այսպէս խօսեցաւ .

— Սիրելի գեռատի կոյս, մէկը պէտք է անխճած ըլլայ քու օրորոցդ : Ես շատ տկար եմ ու շատ ծեր, քեզ հետապնդող չար բախտին դէմ մաքաւելու համար : Գեղ ցոյց պիտի տամ ուղին ուրիշ դուրս կ'ելլը՝ ուր անտառէն : Հետեւելով այդ ճամբուն՝ մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանես ինծի :

Ինչպէս մեկնիլ սակայն, ցուպը ձեռքը, մուրացկանուհիի մը հանգուեակ, ուսերուն վրայ իշխանուհիի ծիրանին : Գոյախորը, պառաւէն ինչդրեց ցնցոտիները նիւթական չքաւորութեան, անոնցմով իր բարոյական թշուառութիւնը ծածկելու համար : Խուզարկելով մըդլոտած հին սնտուկները պառաւը երիտասարդ ճամբորդին քնքոյշ մարմինը պաշտպանելու բաներ մը գտաւ : Ետքը ոսկրուտ ձեռքին հակառակ կողմով երբ իր արտասուածքը դէմքը չորցուց, տեսաւ աներեւութանալը գեռատի իշխանուհիին . դէպի խրճիթ վազեց և, առանց զգջում զգալու՝ մոլեգնութեամբ առաւ մետաքսը, թաւիչը և ոսկեհիւս տրէզները ու զանոնք այրեց ձագոտներու կրակի մը վրայ : Յետոյ թաղեց անոնց մոխիրը : Այս կերպով անիկա կը մտածէր խուսափել չար բախտէն, որ կրնար պահուած ըլլայ անխճուած անձի մը զգեստներուն վերջինին մէջը :

Մինչ այդ իշխանուհին քանի մը ժամուայ յոգնեցողիչ և ցաւազին ճամբորդութիւն մըն էր ըրած : Իր ուժերը սպառելու վրայ էին երբ անիկա հովիւի մը բնակարանը նշմարեց :

Ոչ ոք կար : Ոչխարներ կ'արածէին հեռուն բացատին մէջտեղը : Ու ան ներս մտաւ վերջին ծայր աղքատեղաւորութեան ամենայնախնայ աստիճանին հասած փայտէ խորչէ մը : Փայտէ նստարանները կարագէ իւ-



Հազար անգամ պառաւ կիներ ըսած էր .

«Պատուական աղջիկ մըն ես դունս :»

Բայց օր մը անա — հազիւ շարաթ մը անցած իշխանուհին այս մաքրուած խղիկը կրնար իր վերջնական բնակատանը համարել, — չլուսեցաւ այլևս հաւին կրկուտքը ու երբ իր արուեսին առնելու գնաց անուամ թարմ հաւկիթը, թեւերը տարածած՝ անիկա հաւը գտաւ մեռած :

— «Մեծ դժբախտութիւն մը կը հասնի մեզի, ըսաւ ան յուսահատ ձայնով մը :» Կորսնցուցինք ինչ որ ամենէն աւելի կ'օգնէր մեզ մեր դոյութիւնը պահելու այս դժնդակ առանձնութեան մէջ : Այսուհետեւ անտառին խոտերը միայն կը մնան մեր սնունդին համար :

Գեռատի կոյսը սարսաղ : Ինք ևս նկատեց որ դժբախտութիւնը յայտնապէս իր քայլերուն կը կառչէր : Պիտի չկրնար յաղթել անոր, շնորհիւ իր աշխատանքին, իր անձնութեան, իր խոնարհութեան ու քաղցրութեան :

Բայց քանի մը օր վերջ, գիշեր մը ալ չէր լուսեր շանը հաչիւնը, որ կ'արգիլէր դէպի խրճիթ վայրի գազաններու մուտքը, աղմուկներ արթուն պահեցին իշխանուհին մտատանջ հոգին . մերթ իրեն այնպէս կը թուէր թէ կը հոտուրտային, կը խորդային մամուռէն ազաղուն որմերու դէմ, իրբեւ թէ տեղեկանալու համար որսի մը մասին, լքուած այնուհետեւ թառուտներու խորը յածող արիւնառուչոտ բնազգներու : Ու հետեւեալ օրը, պառաւին դողդոջուն ոտքը դպաւ արդէն շանը փառցած դիակին : Եւ ան յանկարծական խորհուրդ մը յուսաւորեց անոր միտքը : Չար բախան էր ատիկա : Ո՞վ կրնար զայն բերած ըլլար : Իր նայուածքը ուղղուեցաւ դէպի իր դուռհաս բարեկամու-

հին : Ու ցամքած կուրծքին վրայ սեղմելով կատուն, իր վերջին ընկերը, այսպէս խօսեցաւ .

— Սիրելի գեռատի կոյս, մէկը պէտք է անիծած ըլլայ քու օրորոցդ : Ես շատ տկար եմ ու շատ ծեր, քեզ հետասանդոց շար բախտին դէմ մաքաւելու համար : Ինչ ցոյց պիտի տամ ուղին ուրիշ դուրս կ'ելլը՝ ուր անտառէն : Հետեւելով այդ ճամբուն՝ մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանես ինձի :

Ինչպէս մեկնիլ սակայն, ցուպը ձեռքը, մուրացկանուհիի մը հանգուցակ, ուսերուն վրայ իշխանուհիի ծիրանին : Դժբախտը, պառաւէն ինչդրեց ցնցոտիները նիւթական չքաւորութեան, անոնցմով իր բարոյական թշուառութիւնը ծածկելու համար : Խուզարկելով մըդլոտած հին սնտուկները պառաւը երիտասարդ ճամբորդին քնքոյզ մարմինը պաշտպանելու բաներ մը գտաւ : Ետքը ոսկրուտ ձեռքին հակառակ կողմով երբ իր արտասուածքը դէմքը չորցուց, տեսաւ աներեւութանալը գեռատի իշխանուհիին . դէպի խրճիթ վազեց և, առանց զզջում զգալու՝ մոլեղնութեամբ առաւ մետաքսը, թաւիչը և ոսկեհիւս տրէզները ու զանոնք այրեց ձգտաներու կրակի մը վրայ : Յետոյ թաղեց անոնց մոխիրը : Այս կերպով անիկա կը մտածէր խուսափել շար բախտէն, որ կրնար պահուած ըլլալ անիծուած անձի մը զգեստներուն վերջինին մէջը :

Մինչ այդ իշխանուհին քանի մը ժամուայ յոգնեցուղիչ և ցաւազին ճամբորդութիւն մըն էր ըրած : Իր ուժերը սպաւելու վրայ էին երբ անիկա հովիւի մը բնակարանը նշմարեց :

Ոչ ոք կար : Ոչխարներ կ'արածէին հեռուն բացատին մէջտեղը : Ու ան ներս մտաւ վերջին ծայր աղքատեղաւորութեան ամենայնպէս աստիճանին հասած փայտէ խորչէ մը : Փայտէ նստարանները կարազէ իւ-



դոտած էին, պանիրի մնացորդներ կը խոչին նեղ պատուհանը. դաշտամուկեր կը բիրէին սեմին վրայ և այժի հոտ բուրոյ մորթէ զգետներ նստուած կը մնային ամէն կողմ :

Գործունեայ և երախտագէտ ըլլալուն, իշխանուհին ժամերով աշխատեցաւ ամէն ինչ մաքրելու համար: Գիշերուայ ստուերները իջնալուն հովիւները եղածին համար այրակերպած կը թուէին: Դաշտամուկերը շարժեցին իրենց զուխները զարհուրելով այս հրաշքին առջեւ և հեռացան: Ու անիկա երրոր լսեց հովիւներուն ծանր քայլերուն զոփուէն մայիւններուն և շուններու հաջիւններուն ալիքին ընդմէջէն զեպի իրեն մօտենայը՝ պահուրտեցաւ հնամաշ զգետի մը ետին զոր խողանակած և արեւին փռած էր. ու մտիկ ըրաւ.

—Մեր բազակայութեան խորհրդաւոր ոգի մը պէտք է այցելած ըլլայ հոս, ըսին հովիւները զմայլած, ու ծուներ դնելով ազօթեցին:

Հետեւեալ ու վաղայաջորդ օրը նոյնպէս միևնոյն տեսարանը կրկնուեցաւ. սեղանին վրայ թարմ եղիպտացորենէ կարկանդակը դեռ տաք՝ հիւրերուն կ'սպասէր: Այն ատեն հովիւներուն ձերունի պարագըլուէր ըսաւ. «Եթէ այր է անձը որ կ'ընէ ասիկա, թող մեր եղբայրը ըլլայ, իսկ եթէ կինն է՝ մեր քոյրը:»

Ու անոնք հաճոյալի անակնկալով մը լեցուեցան՝ տեսնելով մաքրուած ու կարկտուած զրոյեակներու մէջ այս դեռատի կոյսը, որ բոլորովին երկչոտ՝ խոստովանեցաւ իր աշխատանքը:

Միայն թէ չար բախտը ճամբան մնացած ըլլար, կ'ըսէր ինքնիրեն անիկա, ապագան մտքին առջեւ բերել չհամարձակելով: Իսոյց ահա օր մը, հիւսնադուրիւնը կոտորեց հովիւներէն մէկուն հօտը: Հետեւեալ օրը գայլը յօշոտեց երկրորդին ոչխարները, երրորդը,

զոնել կարծելով սովորական կամուրջը, զեպին մէջ, հորսնցուց իր ոչխարները:

—Չար բախտը հո՞ս է: Ո՞վ կրնայ զայն բերած ըլլալ:

Վերստին կասկածոտ նայուածքներ դարձան դէպի իշխանուհին: Անիկա մեկնումի հրամանին չսպասեց: Իրիկունը հովիւները այլևս չգտան զայն: Գաղտնորէն մեկնած էր ան:

Այս անգամ բարձունքի մը վրայ ան տեսաւ անհուն պալատ մը: Պիտի կրնա՞ր հոն ապաստան գտնել վերջապէս: Պայտառ պարիկներու ձեռքով կառուցուած ըլլալ կը թուէր: Անոնց մէջ գոնէ հատ մը պիտի չգտնուէ՞ր զինք ազատող չար կախարդանքէն, որ կը բնակէր իր էութեան մէջ:

Պայտառին մէջ կին մը կար համակ սեւ ու վանդական տղեղութեամբ, բայց իր բոլորտիքը անհաւաւատալի հարուստութիւններ կը կուտակուէին: Երկար խորհրդաւոր նրբանցքներու մէջ երկաթէ դռներով փակուած սենեակներ իրարու կը յաջորդէին: Յուսահատ ճամբորդը այս անգամ ինքզինքը պալատին ահաւոր տիրուհիին յանձնեց:

—Կը վերցնեմ քեզ, ըսաւ դաման կինը, ու, տեսնելու համար թէ կրնար իրեն ծառայել, պիտի փորձես ինձի պէս սանտրել բուրումնաւէտ այս երկար մազերը, յարեց:

Եւ անա թնջկոտած այս մազերը այնքան ճարպատեր էին ու անոնցմէ արտարուրող հոտը անքան անախտութ էր որ, դեռատի կոյսը նետեց սանտրը: Սեւ կինը, որ հառաչելու կ'սկսէր, կանգնեցաւ ու ցոյց տուաւ անոր դուռը:

—Ինձի ծառայելու չափ փափուկ չեն ձեռքերդ: Բայց ես կ'ըզեմ քեզ օգնել: Բու բախտդ անձանթ



չէ ինձ : Ինքզինքդ ասկէ ձերբազատելու համար զհաս-  
դէմի պալատը ու յատակին վրայ թաւալող բան մը  
պիտի տեսնես, ա՛ն զայն ու պահէ :

Հնամենի աւերակի մը } մէջ, — բայն ադուաւի, —  
համր ու անշարժ երկու մարդիկ կազնած էին : Ու-  
կիէ մահճամալի մը վրայ՝ ծերունի մը սպիտակ մե-  
տաքս կը կարծէր : Ու ոտքերուն առջև նիհար փոք-  
րիկ մարդ մը իր ձեռքերուն մէջ միւսնոյն մետաքսէն  
ճախարակ մը բռնած՝ անով խաղալ կը թուէր : Երի-  
տասարդ իշխանուհին խեց ճախարակը ու փախաւ :

Ու ահա իր ճամբուն վրայ զինուած պատգամա-  
ւորներ կը ծանուցանէին թէ այս երկիրներու կայսրը,  
որ կ'ուզէր հարուստ և ազնուական կնոջ մը հետ ա-  
մուսնանալ, հարկադրուած էր չկատարելու իր ա-  
մուսնութիւնը, որովհետեւ իր խօսնցեալին նմանը չը-  
տեսնուած համակ մետաքսեայ շրջազգեստին կտոր մը  
կը պակսէր : Կայսրը անոր ծանրութեամբը ոսկի պիտի  
վճարէր :

— Ո՛վ դիտէ, խորհեցաւ իշխանուհին, թերեւս  
ունիմ կայսեր պէտք ունեցածը :

Ու երկչոտ բոլորովին, ներկայացաւ ան :

Իր քով կղածը միակ մետաքսն էր որ կը յարմա-  
րէր կայսեր խօսնցեալին շրջազգեստին :

Բայց երբ նժարին մէջ ոսկիով լեցուն պարկ մը  
դրին, չշարժեցաւ ան : Դրուած ուրիշ երկու երեք  
պարկեր չբաւեցին անոր հաւասարակշռութեան : Մար-  
դիկ հաւաքուեր էին ու զարմացած կը դիտէին :

— Եթէ կայսրը իր ուժը գործածէ, ինչպէ՞ս կ'ըլ-  
լայ, բաւ պալատական հեղնատէր դրանիկ մը :

Կայսրը լսեց ըսուածը ու բարձրացաւ նժարին  
վրայ, և այս անգամ հաւասարակշռութիւնը դտու-  
ան : Բայց ծերունի խորհրդական մը իր ձաղատ զը-

լուիւր քերելով, դիտել տուաւ .

— Ձեր վեհափառութիւնը ծախեց ինքզինքը :

— Որո՞ւն

— Այս դեռատի կոյսին :

Կայսրը դիտեց զայն : Իր խօսնցեալը միւս խը-  
րոխտը չէր, այլ այս վերջինը, քաղցրաբարոյ և բարի  
բոլորովին : Ու որովհետեւ կը ճանչնար զայն, կարծես  
սեւ ուղի մը բաժնուեցաւ անկէ, որուն հաղած զրգը-  
նակները ասիական թաւիչի ու մետաքսի փոխուեցան :

Մթամած աւերակին մէջ էր ձգած ան իր սեւ  
բախտը : Ծերունին հիմա զայն ուրիշ դժբախտութիւն-  
ներու համար կը կարծէր : Իսկ իշխանուհին կայսեր  
կողքին՝ սկսաւ հիւսել իր երջանկութեան օրերուն  
ձիւնասպիտակ մետաքսը :







# ԽՈՋԻ ԳԼԽՈՎ ԻՇԽԱՆԵՐ



Կայսր մը կար որուն պայտին մէջ աղջիկներ միայն ծնած էին, որոնց կը վատահէր ան իր գործերը, երբ կը բացակայէր, որովհետեւ իրրեւ իմաստուն ճանչցած էր զանոնք:

Եւ անա անգամ մը երկար ու դժուարին պատերազմ պիտի սկսէր, կայսրը կանչեց զանոնք ու ըսաւ,

Ըրէք ինչ որ կ'ուզէք, իմաստուն էք որովհետեւ, բայց բան մը միայն զգուշացէք ընելէ: Ահաւասիկ պալատ կոչուած այս մեծ տանը մէջ գտնուող բոլոր սենեակներուն բանալիները: Բացէք ան որ հասնելի կը թըռուի ձեզ, բայց զգուշացէք, մտնել այլ կողմը գտնուողին մէջ — խորը բոլորովին:

Եկաւ սակայն վայրկեան մը որ կայսեր իմաստուն աղջիկները ձանձրացան: Զանձրոյթը գէշ խորհրատու էր, անոնք իրարու հարցուցին թէ արդեօք մեծ ոճիր մըն էր արգիլուած սենեակը բանալը: Արդեօք բանտարկուած հրէշ կը կար հոն: Պիտի չվախնային, երեք հողի են քանի որ: Արդեօք կախարդող իշխան մը կար այնտեղ: Անոնք պիտի արթնցնէին զայն: Արդեօք գաղանթի մը պահուած էր հոն: Ի՛, պէտք էր գիտնալ ասիկա: Եւ անոնք ներս մտան անկէ:

Մէջտեղը, սեղանի մը վրայ փռոց մը կար, վրան գիրք մը: Ի՛նչ յուսախախտութիւն: Բայց գիրքը բանալով մեծ քորը սա խօսքերը կարդաց, «Արեւելքի իշխան մը պիտի ամուսնանայ կայսեր անդրանիկ աղ-

ջկան հետ»

Սաոր համար կ'արժէր հօրը անհնազանդ գտնուել և անոր պատիժը իր վրայ հրաւիրել:

— Գնա, դուն այ նայէ, ըսաւ ան միջնեկին, որ կարդաց. «Արեւմուտքի իշխան մը պիտի ամուսնանայ կայսեր երկրորդ աղջկան հետ»

Եթէ ես այ փորձէի, ըսաւ կրտսերը, տակաւին շատ դեռատի ըլլայուն, իրենց երջանիկ անախակալին մէջ միւսները չէին մտածած անոր: Ու իր կարգին բացաւ ան գիրքը: Ներկայացած էջին վրայ կը գտնուէր հետեւեալը. «Խոզ մը պիտի ամուսնանայ կայսեր կրտսեր աղջկան հետ» Ամօթէն և վիշտէն շեկնեցաւ ան, ու խօսքը ուղղելով իր քոյրերուն,

— Ինձի համար ոչինչ կայ, յարեց:

— Կրնաս սպասել, նկատեցին այս վերջինները, տակաւին փոքր ես դուն: Կայսեր կրտսեր աղջիկը քառուկեցաւ իր սենեակը ու հոն լացաւ:

Թշնամի ուժերը խորտակած, կայսրը վերագարձաւ պատերազմէն: Իր աղջիկներուն ծիծաղին մէջ խի, ան կարդաց իրենց մեղքին խօստովանութիւնը: Բայց այնպէս ձեւացուց թէ չէր գուշակած՝ պատժել չհարկադրուելու համար, որովհետեւ շատ կը սիրէր իր աղջիկները, ու չէր ուզեր ըսել ասիկա:

Ճակատագրէն որոշուած ժամուն Արեւելքի իշխանը եկաւ: Կայսեր պայտին մէջ փառաւոր հարսանիք մը տեղի ունեցաւ: Երկրորդ աղջիկը ապահով էր այլեւս՝ ինչ որ իրեն կ'սպասէր, բայց կրտսերին սոսկալի վախը ատով կը զօրանար: Երբ Արեւմուտքի իշխանը ամուսնացաւ միջնեկ աղջկան հետ, հանդէսին մէջ մէկը կը գտնուէր որ, ընծաներով յարգարուած ոսկեծածիկ դրան ետին ջերմ արցունքներ կը թափէր և կու լար իր ապագային վրայ: Եւ սակայն կարելի՞ բան էր որ զաղբելի անասուն մը գար զայն իր որջը տանելու:



Եւ օր մը — միակ օրը որ դարունը դայն հրապուրած էր մոռնալու իր սիրտը կրծող ճանճրոյթը — ան տեսաւ խողերու անհուն երամակ մը, որ կը լեցնէր գլխաւոր փողոցը, ամենասպառնալից կերպով խանչելով, որպէս թէ պարզ խողեր չըլլային անոնք, այլ կատաղի կլինճեր, եւ անոնցմէ մէկը բամբուկացաւ — ոչ նուազ տղմօտը, — ու, մէկէն բարձրանալով պայտախն սանդղեխները, իր կարմիր կլափին ծայրով դարկաւ դարպասը:

— Ո՞վ էք դուք, հարցուց ծերունի դռնապանը:

— Ես ան եմ որ պէտք է ամուսնանայ կայսեր կրտսեր աղջկան հետ: Գայէք ըսէք իրեն ատիկա:

Գռնապանը սրտաբեկ եղաւ այս խօսքին վրայ, կանչել տուաւ պալատին մարաջախտը, բայց այս վերջինը հաղորդելու ուրիշ պատգամ չունեցաւ: Սրտաքսե՛լ գարշելի խողը: Բայց ամբողջ փողոցը լեցուն էր անոր խանչացող բանակով և գիսախուռ գլուխներ կը բարձրանային թշնամական: Կայսեր այս սոսկալի լուրը տալէ առաջ, երեք անգամ ան ոտքը դարկաւ սեմին վրայ ու իր գոռ ձայնը հողեվարքի հռնդիւններ ունեցաւ:

Կայսրը յանկարծակիի չեկաւ: Ան կը ճանչնար զիրքը և զիտած էր պատուհանէն: Աւելի բան պէտք էր: Միայն շատ դեղնեցաւ և արտասուքի երկու կաթիլներ կաթեցան դէմքին վրայ:

— Ըսէ անոր, որ իմ փեսաս պիտի ըլլայ, տեղի կուտամ զինքը պահպանող ճակատադրին որ պիտի սպաննէ զիս:

Մեծ դայթակղութիւն կայսրութեան, դրացի պետութիւններու և ամբողջ աշխարհի համար, տեղի ունեցաւ անա չսուած այդ ամուսնութիւնը:

Խողը ծածկուած ստեւներով և տղմաթաթաւ, իշ-

խանութիւն մօտն էր, որուն շփոթութեան և վիշտին՝ ոչ մէկ բան կրնար հաւասարիլ, և այս վերջինը կը ճառագայթէր թանկագին քարերով զարդարուած ոսկեհիւս սպիտակ բուրդէ իր շրջագդեստին մէջ: Խողին կակուղ ականջներուն մօտ կը շողշողար կայսրութիւն ամուսնութեան թագը զոր մեռած ատեն իր սիրելի զաւկին ձգած էր: Այս եղածին վրայ խնդալու համար չափազանց չճմած և ամօթահար էին:

— Աղջիկս, ըսաւ կայսրը, բաժանումի տխուր վայրկեանին, ո՞ աղջիկս, քանի որ դժբախտութիւնը այսպէս կամեցաւ, քեզի միակ խորհուրդ մը կուտամ, հնազանդէ՛:

Ան պիտի կատարէր այդ պատուէրը: Բայց կարելի չէ ըսել թէ ատիկա դիւրին էր մինչեւ անգամ մուրացիկի մը աղջկան համար: Որովհետեւ առաջին հանգոյցը եղաւ ջրակոյտ մը և անաւասիկ նորապսակ ամուսինը, ճամբէն յողնած՝ միտքէն անցուց զովանալու համար հոն խրիլ: Այդպէս ընելով և ինքզինքը զովացած ու տրամադիր գտնելով՝ ըսաւ իր կնոջ.

— Համբուրէ զիս:

Իշխանութիւն սպիտակ շրթունքները հպան խողին փոքրիկ աչքերուն անկեան ցեխէն խոնաւ ստեւներուն: Բայց երբ պէտք եղաւ փնտուել որջը, որուն մասին կը կասկածէր, ան ինքզինքը գտաւ բաւական յարմար տան մը առջև: Մաքուր անկողին մը պատրաստուած էր անծանօթ ձեռքի մը կողմէ, նոր բնակութեան համար:

Եւ զիշերը, իշխանութիւն արթննալով, կարծեց իր մօտը նշմարել մարդկային դէմք մը, երիտասարդի մը մարմինը: Միթէ անցողակի փորձութիւն չէր ասիկա: Բայց հետեւեալ օրը բարձին վրայ մխրճուած՝ խողին կարմրադոյն գլուխը կը խորդար:



Օրերը այսպէս կը սահէին: Գիշերը տարտամ յոյս մը, արեւածագին՝ տխրալից յուսախարութիւն: Խոզը, որ կնոջ անծանօթ նպատակներով ճամբորդութիւններ կ'ընէր, անգամ մը վերստին բացակայած էր: Պառաւ կին մը ներկայացաւ տանը սեմին վրայ, առաջին դէմքը զոր իշխանուհին կը տեսնէր երկար ատենէ ետք, ու պառաւը իրեն երեւցաւ եթէ ոչ գեղեցիկ, գոնէ քաղցր ու ժպտուն: Եւ ան որ մեծ ճամբաներու վերայ մուրացկանութիւն ընել կը թուէր, երկարօրէն զինք դիտեց ու ըսաւ ի վերջոյ.

— Իշխանուհի մըն ես դուն և քու վիշտդ շատ մեծ է:

— Ինչէ՞ն գիտես ատիկա.

— Որովհետեւ եթէ ոչ պարիկ մը — անոր կերպարանքը չունիմ, բայց բարի կախարդուհի մըն եմ, կան որովհետեւ անոնցմէ: Եւ քեզի լաւ խորատ մը պիտի տամ, որպէս զի քու տառապանքներդ միանգամայն վերջ գտնեն:

Իշխանուհին շատացաւ հառաչելով:

— Ահաւասիկ: Ամուսինդ սովորական խոզ մը չէ: Արդարեւ անոր ինչ ըլլալը տեսնելու համար — և դուն պիտի օրհնես իմ այգեղութեանս յիշատակը. — կը բաւէ կապել բուրդէ թելով մը, բայց ամուր և անգթօրէն՝ իր աջ ոտքը, և այն ատեն ան պիտի չկրնայ փոխել իր կերպարանքը արշալոյսին: Ըրէ ատիկա ու պիտի տեսնես:

Կէս գիշերին, իշխանուհին առաւ բուրդէ թելը և, բռնելով իր քով քնացող երիտասարդին յաղթական ոտքը, կապեց անով ուժգին, անգթօրէն, այնպէս՝ ինչպէս որ իրեն յանձնարարուած էր: Բայց թելը կըտրեցաւ:

Ընդոտտ արթննալով, երիտասարդը այսպէս ը-

սաւ. — և իր խորունկ վիշտը կ'զգացուէր — այո՛, ես կայսրի մը որդին էի, իսկ չար բախտ մը զիս դատապարտեց այս դժգոհի կերպարանքը առնելու: Երեք օր ինձի կը պահէր, երեք օր միայն, քու համբերութեանդ, քու վիշտիդ համար քեզ վարձատրելու: Չար խորհուրդի մը անսայով՝ դուն կը հարկադրես զիս երեք տարուան նոր շրջանի մը: Չանոնք հոս քու մօտդ պիտի չլրացնեմ, եթէ կը սիրես զիս՝ պիտի գաս փրկուելու: Բայց, դռնելու համար զիս պէտք է ունենաս երեք զոյգ երկաթէ տրեխ և պողպատէ գաւազան մը:

Ճշմարիտ սէրը զոր իշխանուհին կը տածէր գիշերուայ իր ընկերոջ հանդէպ, անոր ճարել տուաւ տրեխները եւ գաւազանը: Ու թէպէտեւ կը կրէր կուրծքին վրայ տղայ մը, ան ձեռնարկեց ճամբորդութեան մը որուն նպատակը անծանօթ էր իրեն:

Եւ ահա անտառի երկար տարածութեան ծայրը ան նշմարեց տուն մը, սեմին վրայ պառաւ պարիկ մը թել կը մանէր:

Եւ անմիջապէս դիտելով դժբախտ կինը, որ իր վիշտը կը պտտցնէր, ըսաւ անոր. — Ես Սուրբ Երկուշաբթին եմ, ինչ կ'ուզես ինձմէ այսքան ճամբայ կտրած ըլլալուդ համար:

Եւ լսելով զարմանալի պատմութիւնը, աւելցուց.

— Ես չէ որ քեզի պիտի օգնեմ, թերեւս քոյրս՝ Սուրբ Ուրբաթը ըլլայ:

Վերստին մեծ ճիգ մը: Եւ նման բնակութիւն մը ու նման պարիկ մը ելաւ մէջտեղ, բայց բարի Սուրբ Ուրբաթը զթութեամբ հառաչեց՝ ըսելու համար նոյնպէս.

— Ես չէ որ պիտի օգնեմ քեզի, թերեւս եղբայրս՝ Սուրբ Արեւը: Ճամբան անօթի չմեռնելու համար, որովհետեւ երկար էր ան, վերցուր այս սեւ հաւը: Բայց երբ զայն ուսես, մի նետեր ոչ մէկը անոր ոսկորներէն ամենէն պզտիկին: Կաւ պահէ զանոնք, որովհետեւ



տե քեզի պէտք պիտի ըլլան անոնք :

Սուրբ Արեւին տան առջեւ միայն իր մայրը կար, ան ոչ մէկ ուղղութիւն չէր կրնար ցոյց տալ . իր որդին բացակայ էր : Արգահատելով պահեց խեղճ կինը սակայն, քանի մը օրէն, ան տղայ մը ունէր իր բազուկներուն վրայ, արեւի պէս գեղեցիկ տղայ մը : Բայց այս աւելորդը բռնով որ, իրեն թեթեւ թուեցաւ, իշխանուհին ստիպուեցաւ մեկնել, որովհետեւ Սուրբ արեւը գայուն բաւականացէր էր ըսելով. — Ամուսինդ տեսած չեմ, իշխանուհի, որովհետեւ երկրիս ամէն կողմերը չեմ թափանցեր ես, մեր եղբայրը՝ Ս. Հովը պիտի զխանայ ատիկա, ան որուն շունչը կը կտրէ կ'անցնի աշխարհը, զոր կը կենդանացնեմ ես :

Վերցնելով՝ երկրորդ սեւ հաւ մը տուաւ միւսնոյն յանձնարարութեամբ : Իշխանուհին ճամբայ ելաւ, բարեբխտարար Ս. հովին դրան առջեւ ան իմացաւ որ այս վերջինն ալ ճամբայ ելած էր : Բարի կին մը՝ մայրը՝ և այդպէս ահաւոր տղայ մը . . . Որովհետեւ անմիջապէս որ մարդու հոտ կ'առնէր, կը փնտռէր զայն, կը գտնէր յանկարծ, ու կը փարատէր :

— Քեզ պիտի պահեմ դեռատի իշխանուհի, որպէս զի չփարատէ քեզ զաւակս :

— Իսկ ինչո՞ւ համար չար է քու որդիդ :

— Գիտե՛ս, ըսաւ պառաւը, առտուները շատ բարի է ան, որովհետեւ արքայութեան դրան առջեւէն կ'անցնի, բայց կէսօրէն ետք դժոխքին դրան առջեւ հասնելով՝ կը քաղէ անոր բոցը և անով կը չորցնէ աշխարհը :

Բայց շարունակեց ան, որովհետեւ հեղահամբոյր ու դժբախտ ես դուն, առաւ պիտի փորձեմ իմ անայ անկէ ամուսնոյդ թաղնուած տեղը :

Առտուն իսկ ան իմացուց ատիկա անոր : Անտառին խորը՝ անակ մը : Բայց հոն հասնելու համար ան պիտի խորտակէր արեւիներուն վերջին զոյգը ու պէտք

չէր կորսնցնել երկրորդ սեւ հաւին վերջին ոսկորները, որ ստիպողաբար տուաւ իրեն :

Անթափանցելի անտառին մէջէն, ուր ինք պէտք է բանար առաջին կածանները, ան արիւնյուայ ոտքերով հասաւ տնակը, ուր բանտարկուած էր անասունի փոխուած իշխանը : Կինը նստած էր ցից սեւ ժայռի մը վրայ, զայն մագլցելու ոչ մէկ կարելիութիւնով : Յուսահատ՝ զաւակը խոտին վրայ դրաւ և ձգեց իր ձեռքերը : Առաջին ոսկորը որ գետին դպաւ՝ աստիճանի մը փոխուեցաւ : Ան ուրիշներ ալ փորձեց : Սանդուխը կատարեալ էր, բայց որովհետեւ ոսկոր մը կորսնցուցեր էր, վերջին աստիճանը պակսեցաւ : Պէտք էր լքել ասոր համար իր անօրինակ ձիգերուն պտուղը, քանի որ ոսկոր մը պէտք էր. է՛ ուրեմն, կրնար զայն առնել ի՛ր իսկ ցաւատանջ մարմնէն, հարուածով մը կտրեց իր ձախ ձեռքին ճկոյթը : Ան միացաւ միւսներուն և սանդուխին ծայրը ժայռին դպաւ :

Տնակը մաքուր էր և ծիծղուն, արեւ կար ապակիներուն մէջ : Երկու բարձով անկողին մը և թափուր խշտեակ մը կար մէկ կողմը : Հոն դրաւ զաւակը : Հազիւ ըրած էր ատիկա և ահա դուռը բացուեցաւ : Իշխան մը երեւցաւ՝ ուղիղ և արժանաւոր : Երկար սեւ մազեր կ'իջնային իր թաւիչէ զգեստներուն վրայ :

Չայն երբեք այդպէս տեսած չըլլալով, ան ճանչցաւ իր ամուսինը : Առջեւը ծնրադրած՝ լսեց անոր խօսքերը ձայնով մը որուն քաղցրութիւնը իրեն ծանօթ էր :

— Շատ երիտասարդ՝ ես մասնակցեցայ վիշապներու դէմ մղուած մեծ պատերազմի մը : Սպաննեցի ամենէն մեծը : Եւ իր մայրը զիս դատապարտեց ձաւատաղրին որ ծանօթ է քեզ : Ան է նոյնպէս որ քեզի տուաւ չար խորհուրդը որուն հետեւեցար եւ ահա կը քաւենք զայն, ու իշխանը համբուրեց զայն :





## ԿԱՅՍԵՐ ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻՆ



ժամանակաւ կայսր մը կար որ երեք զաւակ ունէր: Կրտսերը ամենէն քաջ և ամենէն հնազանդն էր, բայց իր մեծ եղբայրները ամբարտաւան էին, ինչպէս կ'ըլլան յաճախ, ու չէին ուղեր ճանչնալ զայն: Չարիք պիտի պատահի իրենց, ինչպէս պիտի տեսնէք վերջը:

Եւ ահաւասիկ անգամ մը իրենց հայրը, իրեն պատկանող աշխարհիս ամենէն գեղեցիկ մրգաստանին մէջ պտտելով, — ես չեմ հանդիպած աւելի հարուստին որ պարունակէր հազուադիւտ ծառեր. — տեսաւ ոսկիէ տերեւներով ծածկուած խնձորնի մը: Դուք նմանը երբեք տեսած չէք, ո՛չ այ կայսրը, և ասոր համար ան հմայուեցաւ: Ուղեց կէսօրուայ դէմ այդ ծառը կրկին տեսնել, բայց արդէն պտուղ տուած էր ան: Իր ժամուն անիկա պիտի հասուննայ, խորհեցաւ կայսրը: Բայց իրիկունն իսկ աղուոր խնձորներ կը փայլէին սաղարթներու ընդմէջէն: Վաղը կը քաղեմ զանոնք, ըսաւ կայսրը: Ու պտակելու գնաց:

Բայց հետեւեալ օրը ծառը մերկացած էր իր բոլոր պտուղներէն, մեծ զարմանք անոր, որ սեղանին վրայ արդէն որոշած էր անոնց տեղը:

Ան կրկին փորձեց հրաշքը, ու ամէն օր առտուան ծաղիկներուն տեղ կը բռնէին իրիկուայ պտուղները, զոր գիշերը կ'աներևութացնէր:

Դաղանիքը պէտք էր լուսարանել: Կայսեր քա-

ջարի զաւկէն գատ լաւագոյն կերպով ո՞վ կրնար ընել ատիկա: Ծառին մօտ, որուն պտուղներուն գիշեր ատեն անձանօթ ձեռք մը կը մօտենար, զինուած հեկելու համար՝ կայսեր անդրանիկ որդին իրաւունք պահանջեց: Եւ ահա ճիշտ կէս գիշերին իր արտեւանունքներուն վրայ այնպիսի քուն մը իջաւ որ անիկա ոչինչ կրցաւ տեսնել: Ու, երբոր միջնեկ զաւակը ջանաց յաղթելու կախարդութիւնը, ան ևս միեւնոյն կերպով անցուց գիշերը, առանց բան մը նշմարելու:

Վերջապէս կրտսերը համարձակեցաւ գիշերը հրակելու համար պահակութիւն խնդրել, որով պիտի կրնար արգիլել հայրը կտրելու ծառը, որուն շողարձակ ոսկիէ պտուղները չէր կրցած ունենալ բնաւ:

Մրգաստան մտաւ, նստաւ առանց յենակի աթոռի մը վրայ և իր շուրջը սրածայր ցիցեր տնկեց: Կըրնայի՞ք քնանալ այս պայմաններու մէջ, սրածայր ցիցերով ծակծկելու վտանգին ձեր ենթարկուելը տեսնելով:

Այսպէս կայսեր դեռատի որդին մինչև կէս գիշեր չփակեց բնաւ իր թարթիչները:

Սրչալոյսը կ'սկսէր ծագել, երբ հորիզոնին խորերէն հասնող թևերու մեծ աղմուկ մը յուեկցաւ: Ամբողջ օդը լեցուած էր անով: Կարծես թէ փոթորիկ մը կը մօտենար... Դեռատի իշխանը կրցաւ նշմարել թռչուններու սև ամպ մը որ կը մօտենար: Վերցուց իր աղեղը եւ արձակեց շառայարոյց ամպին, որ կ'ուղղուէր դէպի ոսկեխնձորներով բեռնաւոր ծառը: Ամպը հեռացաւ մեծ բոմբիւնով ու ժխոր մը թնդաց պարտէզին ամայութեան մէջ:

Արեւածաղին անբիծ քանի մը ոսկեփետուրներ տարածուած էին մարմանդին վրայ: Արքայազունը անոնցմէ մէկը անցուց իր զլխարկին վրայ և շխտակ իր հօրը սենեակը գնաց:



—Ուրեմն գող մը կայ ըսաւ կայսրը: Թռչուն կամ ոչ, դուն պարտականութիւն ունէիր բռնել զայն, այլապէս պիտի գայ ան կրկին, ու ես անգամ մը միայն տեսած պիտի ըլլամ սիրական պարտէզիս ոսկեխնձորը: Ձեզմէ ո՞վ, ըսաւ ան, դառնալով իր երեք որդւոց, կ'ուզէ փորձել բախտը:

Անգրանիկը խնդրեց, շատ հասկնալի է, այդ երջանկութիւնը: Սպառազինուած՝ անիկա մեկնեցաւ կռուելու անձանօթ թշնամիին դէմ: Եւ ահա իր ճամբուն վրայ գայլ մը երեւցաւ, փոքրիկ գայլ մը տանջահար մարդու նայուածքով, որ, փոխանակ անոր վրայ յարձակելու կամ անկէ փախիլ ուզելու, պիշ պիշ անոր կը նայէր իր աչքերով, որոնց մէջ համբ իղձ մը կը դողդողար գողցես: Իշխանը ուզեց նետ մը արձակել անոր: Այն ատեն ձայն մը լսելի եղաւ, բարեկամութեան և օգնութեան ձայն մը որ, ըսաւ.

—Երիտասարդ, մի՛ երթար ճամբէն որ քեզ կը տանի բազմութեամբ լեցուն աջ կողմի մեծ պանդուկը, որովհետեւ չարիքի մը պիտի հանդիպիս, ձախը ուրիշ պանդուկ մը կայ, խոնարհ և ամայի ըլլորովին, քեզ ան կ'օգտէ:

Բայց մեծ պանդուկին ապակիներուն ընդմէջէն սաստիկ լոյս մը կը տեսնուէր, իսկ լոյսին մէջ կը դառնային զուարթ հասունցած աղջիկներ արեւի առաջին ճառագայթներուն անոնք այնքան հատու նայուածքներ կ'արձակէին որ ճամբորդը կախարդուեցաւ յանկարծ: Ո՞վ պիտի կրնար իմանալ ճամբուն մէջտեղ մարդու մը պէս խօսող և այնքան տարօրինակ այդ գազանին արձակած խօսքերուն իրական նպատակը: Թերևս դարան մը սարքուած էր մութ պանդուկին մէջ ու կ'ուզէին սպանել զինք. . . Եւ ահա ան մտաւ խաժամութիւն մէջ ու բազուկներ, որ զայն

չուտով պիտի չլքէին, ընդունեցին զինք: Աշխարհի մէջ աւելի զգլխիչ բան մը կար ուրեմն քան կայսեր պարտէզին ոսկեխնձորները յափշտակող թռչունին ետեւէն ինչալը. . .

Ու կայսեր երկրորդ զաւակը մեկնած միւսնոյն հերոսական նպատակով, անշէջ լոյսերու մէջ պարող հասուն աղջիկներուն մօտ շուտով միացաւ իր անդրանիկ եղբորը:

Կարգը կրտսերին էր հիմա: Ան քաջ գիտէր որ միւսները նպատակին պիտի չհասնէին, բայց չէր համարձակեր ըսել: Աւելի լաւ չէ՞ միշտ սպասել որ անկարողներու կատարելիք յախուեն թռիչքները ինքնին խորտակուին:

Գայլը, որ տարիներէ ի վեր շարունակ յանձնարարութիւններ կ'ընէր, մերթ հարց կուտար ինքզինքին, թէ սաստիկ տխմարութիւնը զոր մարդ արարածը երեւան կը բերէր իր եղբայրակից մ'լա կենդանիներուն և գազաններուն մէջ, արդարեւ իրաւունք չէ՞ր տար իրեն յաւիտենական պարերու և անմաքուր սեղաններու տէր պանդուկատիրոջ աղմկարար յաճախորդները շատցնելու, այս անգամ ան դտած էր մտազի մարդ մը: Կրտսեր, համեստ իշխանը հանգչեցաւ ահա փայտէ նստարանին վրայ պանդուկին, ուրկէ ներս ոչ ոք հաճած էր մտնելու. մօտ անտառ մը խափանեց իր ակնարկը: Եւ որովհետեւ չէր ճանչնար բնաւ իր բռնելիք ուղին, զիտեց ոսկեխնձորը զոր գայլը տըռած էր իրեն ինչպէս իր եղբայրերուն, պէտք եղած ժամանակ երեւնալ և իրեն օգնելու համար:

— Ահաւասիկ եմ, ըսաւ գայլը, որուն փոքրիկ գորշ մարմինը ցցուեցաւ սև կաղնիներու ընդելուզուած շարքին դէմ, կարծես դէպի խորհրդաւոր աշխարհը ամէն մուտք արգելելու համար: Ահաւասիկ եմ:



Դուռն արժանի ես. տարիներէ ի վեր ես կ'սպասէի քեզ — քաջ, անբիծ ու թելադրութեանց հնազանդ միակ մարդուն — որ պէտք ունենար իմ օգնութեանս: Գուհորդ ոսկեխնձորները գողցուած են նոյն ինքը թռչուններու թագաւորին կողմէ, որ համաձայն ժառանգական իր իրաւունքին՝ հաստատուած դիւաններու մէջ պահուած դաշնադրութիւններով՝ կ'իշխէ այս ընդարձակ երկրամասին վրայ և զոր կը թողու իր երամակով, գրաւելու համար ինչ որ ոսկի է ու լքուած երեսի վրայ:

Դուռն պիտի կարողանաս — եթէ ոչ զինք համոզել, գոնէ բախող շինելու՝ հեծնելով կռնակս — վասն զի այն ատեն կածանները իրենք պիտի բացուին թաւուաներու ընդմէջէն, ու դուռն պիտի երթաս փնտռելու խաւարամած մութին մէջ զոր միակ ճաճանչ մը կը լուսաւորէ, ոսկի թռչունը ոսկի վանդակին. ուրկէ կը մեկնի անդուգակիան ձառագայթը: Բայց վանդակին մի դպիր, խորհէ թռչունին մասին: (Մ որքան իմաստուն էր փոքրիկ գայլը:) Դիր զայն շատ պարզ ու ժամանակէն վնասուած ուրիշ վանդակի մը մէջ: Կը վստահւցնեմ թէ օդտակար, պիտի դառնայ քեզ ատիկա:

Բայց կարեւոր էր միթէ, ըլլար նոյն իսկ երիտասարդ իշխաններուն ամենէն հնազանդը, որ չէր շրացած լուսազարդուած պանդոկին մէջ պարող բարձրահասակ աղջիկներէն, դիմանայ արշալոյսին զոր ոսկիէ վանդակը կը սիւեթ իր շուրջ: Թռչունը մէջը՝ արքայազունը բռնեց այդ վանդակը:

Անմիջապէս անիկա ինքզինքը պահակներով շրջապատուած զգաց: Իւ ձայն մը, որ իր նետը ձայնել տուած էր կայսերական մրգաստանին մէջ, յստակօրէն սա բռները ըսաւ. «Գողցուած ըլլալուդ՝ պիտի մեռնիս:»

Եւ, որովհետեւ իր ճակատագիրը կրնար ողորդել նոյն իսկ տիրելու համար թագադրուած ոսկեփետուր արծուի մը հողին, որ կ'իշխէր կռուող և երգիչ անհամար թռչուններու վրայ, միևնոյն ձայնը քիչ մը մեղմացած, աւելցուց.

— Էրիք է որ ինձ բերես կախարդուած ձին զոր կայսրը, իմ դրացիս, գրաւած է: Այդ գործին համար կար դայլը, օգտակար ըլլալու որուն տրամադրութիւնը յայտնօրէն կը թագնէր իրեն հետ առնչութիւն ունեցող խնդրի մը վերաբերմամբ յուսահատ ճիգ մը, ըստ ինքեան՝ ուրիշին զթալու հակառակ զգացումով խառն յաճախ:

Ատիկա դիւրին ձեռնարկ մըն է, ըսաւ իմաստուն խորհրդականը, միայն թէ կը հասկնաս երիտասարդ, պէտք չէ անգամ մըն ալ մեղանչել. միթոյլ տար որ զգլխէ քեզ ան, որ կրնայ բարի ճամբէն խոտորեցնել ամենէն հյուս հերոսն իսկ: Կախարդուած ձիուն մօտ երկու թամբ կայ. մի դպիր անոր որուն կարմիր յակինթները կը բոցալաւուն գիշեր ցորեկ, այնպէս որ կայսեր ակտուններուն մէջ ուրիշ արեւ չի թափանցեր: Կայ գեղջուկի ուրիշ թամբ մը, առ ան, ու պիտի չզղջաս:

Ու, շատ հասկնալի է, երիտասարդին աչքերը շրացան կարմիր յակինթին պայծառութենէն: Ան դըրաւ թանկագին թամբը ձիուն քամակին վրայ, որ դռնօղութենէն վրնջել սկսաւ:

Անմիջապէս զինուորիկներ պաշարեցին և իրենց տիրոջը առջեւ տարին հեղինակը այսքան նշանաւոր գողութեան մը: Վերստին յանցաւորը ստիպուեցաւ լսել իր դատապարտութիւնը ու նորէն քաղցր խօսքեր յաջորդեցին իր այդ դատապարտութեան: Այս անգամ, իր ներումը ձեռք բերելու համար ան պէտք էր միւս



կայսեր տաներ ամենագեղեցիկ աղջիկը, որ թագուն կը մնար մարդոց աչքերէն, և որուն բնակութեան մօտերը իշխան մը կ'իշխէր:

Ձիով գայլին վրայ՝ արքայազունը ներս մտաւ երկաթէ դռներով անսահման մրգաստանէն, որ իր խորունկ ստուերներուն տակ կը բանասարկէր իշխանուհին: Աշտարակը ուր կ'սպասէր ան առանց կարենալ հորիզոն մը տեսնելու, պղինձէ կառուցուած էր ու փակուած պողպատեայ պատուհաններով: Անոնցմէ մէկը կ'իտովին փակուած էր: Որո՞ւն էր յանցանքը. — գայլին հարցուցէք ատիկա, որովհետեւ ըլլալով ինք միայն զայն շինողը, պիտի կրնայ ձեզ ըսել:

Բաց պատուհանէ մը, որ կը նայի սենեակի մը վրայ ուր ամիսներէ ի վեր թագաւորի մը դուստրը կուլայ առանց ընկերի, երիտասարդ իշխան մը կրնար նպատակին հասնիլ: Եւ, ահա, իր մօտ կը դտնուի, հեծած գայլին կարծր կռնակին վրայ, ան՝ զոր այնքան բուռն կերպով ունենալ կը տենչար դրացի կայսրը:

Բայց գայլը այս պարագային նկատմամբ ևս ունեցաւ իր թերադրանքը: Արդարեւ ինչո՞ւ համար բորորովին ալւեր կայսեր մը յանձնել նորափթիթ գեղեցկութիւնը երիտասարդ կոյսի մը, ինչպէսին էր այս վերջինը: Իրաւունք ունենալով պահելու կախարչուած ձին, շարժումով մը անիկա կարմիր յակինթէ փայփուռն թամբին վրայ նետեց իշխանուհի մը որ խիստ հաճելի էր իրեն: Ու ո՞վ պիտի կրնար իր հրաշագործ թռիչքին մէջ հասնիլ ձիուն, որ երկար ատենէ ի վեր կապոյտ այերին ու ձիւնաթոյր ամպերու ընդմէջէն ճամբորդութիւն մը կ'երազէր:

Ապա, վստահելով գայլին պաշտպանութեանը ան

որ իր կինը պիտի ըլլար, երիտասարդ իշխանը բռնեց ոսկիէ թուշունը: Ձիուն հետ փոխելու: Օ՛, ո՛չ: Ինչպէ՞ս կարելի էր մոռնալ ուղղեւորութիւն մը ինչպէսին դեռ նոր էր ըրեր ինք իրկինքի ապարանքներուն մէջ: Ու ահա դայլն էր որ մէկ ստտումով փոխուեցաւ ձիու մը՝ ամէն կերպ նման միւսին: Ան պահուեցաւ առանց իր փոփոխումը նշմարուելու:

Բաժանումի րոպէն եկած էր:

—Մեծ ծառայութիւն մը մատուցիր ինձ, ըսաւ գայլը, վերատանալով իր նախկին կերպարանքը: Ես ինքս ալ զաւակն եմ կայսեր մը եւ մեղքերուս համար պարտաւորուած էի ունալ անտառին մէջ ու վախցնել հեղահամրոյր մանուկները, անցորդ դեռատի կոյսերը ու վատ հողի անձերը, ես նշաւակ եղայ նետերուն անհամբեր մարդոց որոնք չէին հասկնալ մարդկային իմ խօսքերս: Ինքզինքս փրկելու և ունեցած կերպարանքս ստանալու համար, որուն մասին ես կ'երազէի մութ որջիս մէջ, պէտք էր վերահաս մահէն ազատել մէկը: Երբ այդ քեզի համար: Կը կասկածիմ դեռ: Լսէ լայց:

Պիտի վերադառնաս տունդ, կախարչուած ձիուն վրայ կրելով ոսկիէ վանդակի ոսկեթուշունը ու իշխանուհին՝ որուն նմանը չկայ աշխարհիս վրայ: Ձղուշացի բայց երկու բանէ, գնել կախաղան բարձրացողի մարմինը ու՝ աղբիւրի մը եզերքը նստելէ: Կը մեռնիս այլապէս:

Ահաւասիկ այժմ անտառէն անդին պահողիը ուր երբեք չէր դադրեր աղմուկը ու չէին կանգ առներ սիրային գուարճութիւնները: Դուրսը բաղմութիւն կար, վասն զի դէպի կառափնատեղի կը տանէին երկու չարադործներ որոնց ոճրագործութեան էր մղեր հաճոյքը: Եւ ահա այս չարագործները — երիտասարդ ար-



քայազուներ սոսկումով դիտած էր — իր եղբայրներն էին :

Ուէ մէկը չուզէր վճարել անոնց փրկագինը, ըսաւ դահիճը : Ոչ ոք այս ընկերութեան մէջէն, որ մասնակցած էր միևնոյն հաճոյքին, թերեւս նաև նոյն ոճիրներուն, չպատասխանեց :

Եղբայրական գորովի ինչ խանդով ճամբորդը առաջարկեց վճարել փրկագինը : Բայց երբ ան հասաւ անարդու մահէն ճողոպրած չարագործներուն քովը, անոնք նախանձով դիտեցին իր անմեղութեանը մէջ երջանկութենէ փողփողուն իրենց եղբայրը : Եթէ կարգադրէին անոր հաշիւը, եթէ ձեռք ձգէին արդէն շահուած լարը, պիտի վայլէին այս անուր արկածախնդրութեան բովանդակ փառքը . . .

— Այս աղբիւրին մօտ կանգնէ, ըսին : Ու նստինք քարին եզերքը : Զի ծարաւի ենք մենք մեր կրած տառապանքին պատճառով :

Անոնք ջուրին մէջ նետեցին իրենց եղբայրը, ու առեւանդելով զարհուրած իշխանուհին՝ իրբև յաղթական՝ կայսեր ներկայացան : Ու ծերունի հայրը տեսնելով իր առջինեկ զաւկըներուն յաջողութիւնը՝ մնաց զմայլած : Միայն ժողովուրդին մէջ կ'ողբային կրտսերը որ մեռած էր որոնումի ճամբուն վրայ : Երկու ոճրագործներու միջև ընտուրթիւն մը ընելու հարկադրուած՝ ապարանքին մէկ պատուհանը երիտասարդ իշխանուհի մը կար, որ գաղտնօրէն կուլար կըրտներ արքայազունին համար :

Այս վերջինը մեռած չէր, որովհետև ջուր չի կար աղբիւրին մէջ :

Ան պահած էր ոսկեխնձորը և ահաւասիկ գայլը իր առջև կը գտնուէր : Այս անգամ անիկա իրապէս

կ'ազատէր անմեղի մը կեանքը : Մէկ ոստումով ան փոխուեցաւ բարձրահասակ, բարեկազմ, սեւ խոպոպներով ու խորունկ աչքերով իշխանի մը : Իր պաշտպանեալին կողքին՝ անիկա բունեց ուղին արդար վրէժխնդրութեան :

Զեմ գիտեր թէ հանդէպ վատահոգի մարդասպաններու ծերունի կայսեր սէրը՝ միացած միապետի մը բարկութեան, ինչ անօրինեց, բայց ան կրտսեր որդւոյն համար սարքեց տօնակատարութիւն մը որուն նըմանը երկիրը տեսած չէր երբեք : Հրաւիրեալներուն մէջտեղէն կը քայլէր անծանօթ երիտասարդ մը, որ երջանիկ էր զօրաւոր ու դեղեցիկ կտրիճ մը դառնալուն : Փրկանքի դժուարին աշխատանքը վերջացած էր իրեն համար . իր ընկերոջ ի նպաստ կ'սկսէր երջանկութեան գործը :

Ես ինքս ալ մէկ անիլունն էի, ու ձեզի ինչ որ կ'ըսեմ հարազատ ճշմարտութիւն է : Ասիկա Գայլ — իշխանը պատմեց ինձ, իսկ այս վերջինը երբեք չի սըտեր. կենդանիի աստիճանին իյնալէ ետք, անիկա վերըստին զօրութիւնը ունեցաւ մարդու փոխուելու :







# SUP SUXAS



ժամանակաւ տան մը մէջ տղայ մը կար: մէկ հատիկ տղայ մը, ու նոյն իսկ զայն չէին կրնար կերակրել: Հայրը լայնօրէն բացաւ իր խիստ փոքրիկ խրճիթին դուռը և ըսաւ.

—Քանի որ այսքան աղքատ ենք, ես այնքան ծեր եմ ու մեր խրճիթը այսքան խախուտ, ու ոչ ոք մեզի օգնութեան չի գար: պէտք է մեկնինք ապրուստդ ճարելու համար:

—Հապա դուն:

—Ես պիտի մեռնիմ, ինչու որ համրուած են օրերս, բայց քուկիներդ դեռ նոր կ'սկսին: Ոչ, ո՛չ մէկ առարկութիւն մի՛ ըներ, պէտք է հեռանաւ:

—Ո՞ր կողմը, ո՞վ հայր:

—Այն կողմը, ուր Աստուած պիտի տանի քեզ:

Ան բռնեց շիտակ անտառ տանող ճամբան: Անտառին եզերքը միայն կը ճանչնար ան, ուր կը ճամբէին զինք իր կովերը արածելու, այն կովերը զոր յետոյ ծերուկը ծախել ստիպուեցաւ ապրելու համար: Այս անգամ ան մտաւ թաւուտներուն մէջ: Աստուած պիտի ըսէր անոր թէ ուր ուզողիւ էր ոտքերը: Բայց լուռ էին հսկայ և մռայլ զանդուածները: Մթին հեռուներու բովանդակ սարսափը կարծես ընդ միշտ լուռած էր:

Տղան, պիտի փափաքէր լսել զոնէ թեւի՝ մը սարսուռը, կամ գայլերու ունոցը, որովհետեւ ձմեռ

էր ու սառոյցի թեթեւ խաւը կը ծածկէր գայարուած ձիւղերը հնամենի կաղնիներուն, որոնք անտառի գոյութեան պատճառն էին, որովհետեւ հանդիսաւորապէս մռայլ այս ամբողջ աշխարհը անոնց խոզկաղնիներով և արմատով աճած էր: Ու գիշերուայ ստուերները կ'իջնէին, ոչ ինչպէս ամառ ատեն մայրամուտի արեւին ժպտող վերջին վարդագոյն ճառագայթներուն ներքեւ, այլ յեղակարծ գորշ անձրեւի մը մէջ, որ կ'ստուերուէր հորիզոնը սպիտակ ձիւնի վերեւ:

—Եթէ գայլերը լսէին, ըսաւ փոքրիկ ուղեւորը, առանձինն պիտի չըլլայի:

—Յանկարծ անտառը թնդաց ունոցներէ, Գայլերու ամբողջ վոնմակը կ'ողջունէր գիշերուայ գայլուստը, ու անտառին անհամար բուններուն մէջէն կ'անաչ աչքեր շողչողալ սկսան: Նոյն իսկ եթէ ես այ՛ներկայ ըլլայի, ինձի համար դժուար պիտի ըլլար հաշուել թէ քանի հատ էին անոնք:

Տղան ցտկաց: Բայց ան լաւ գիտէր թէ գայլերը չեն կրնար մազլցիլ ծառերէն վեր, ինչպէս իրենց եղբայր՝ թանձրամարմին արջերը կը մազլցին ծառերու ողորկ բուններուն վրայ:

Անմիջապէս ան ելաւ ամենարարձր կաղնիի մը գագաթը, ուր, աստղերու պայծառ ցոլքերուն տակ, կարելի էր զինք տեսնել, իր խոշոր զարնուրած աչքերով, առանց իրեն կարենալ մօտենալու սակայն:

Ան դիտեց ամէն կողմ, ու դէպի խորը, սպիտակ կատարներու վերեւէն լոյս մը նշմարեց: Անշարժ ոսկեգօծ լոյս մը, որ բնաւ չէր նմաներ զողողուն, կանաչ բոցին, որ գայլերու աչքին մէջ կը գտնուէր:

Տեսնելով այդ լոյսը որ կրնար օգտակար ըլլալ իրեն, ու նկատելով որ իր շուրջը անյագ աչքերով դարանակալ վայրի գաղաններ հողը կ'ակօսէին, ան խոր-



հեցաւ որ անոնց մէջէն անցնելով պիտի չկրնար լոյսին հասնիլ, ուստի անմեղ ըլլալուն՝ իր ձայնը լսուելու վստահ՝ պօռաց.

— Հէյ, հէյ, բարի մարդիկ, ես հոս եմ, ու գայերը կ'ուզեն փարատել զիս:

Եւ հրաշքը անա: Հեռաւոր լոյսին առջև բան մը շարժիլ սկսաւ, այնքան թեթեւ բան մը զոր միայն սարսափահար տղու մը սրատես աչքերը կրնային որոշել: Ապա մեծ աղաղակ մը լսուեցաւ, սոսկալի կանչ մը, այնպէս որ շուտով գայերու ունոգը ինչայլու վըրայ եղող թարմ որս մը կորսնցուցած ըլլալու զգոյժը յայտնող ողբով լեցուեցաւ, յետոյ լսեցին անոնք: Թաւուաներու մէջէն ճարձատիւն մը լսուեցաւ, որպէս թէ՛ փոթորիկ մը ճամբայ կը բանար. կենդանիներու մէջ փախուստ մը տեղի ունեցաւ, կարծես խորհրդաւոր որսորդ մը, որմէ գիտէին զարհուրիլ, յանկարծ կը ներկայանար: Ու անա աստղերու ցոլքերուն ներքեւ, փոխանակ հսկայի մը, որուն կ'սպասէր տղան, երևեցաւ փոքրիկ գաճաճ մը որ դեղին աչքեր ունէր, տափակ քիթ մը, սպիտակ երկար մօրուք մը, այնքան սպիտակ որ կը շփոթուէր ձիւնին հետ և որ երեք անգամ մէջքին փաթթելէ յետոյ դեռ խորձ մը կ'աւելնար զոր ինքզինքը տաքցնելու համար ծոցը կը խոթէր ան:

Տղուն այնպէս թուեցաւ թէ գաճաճը, որուն աչքերը բարութենէն կը ժպտէին, կը սահէր կածաններու վրայէն՝ զոր կը բանար իր փոքր ձեռքերուն թեթեւ մէկ շարժումովը, գետին տապալելով հսկայական կաղնիներու հնամենի բուները: Շատ յայտնի էր որ չէր շարժեր իր ծուռ, դէպի ներս դարձած, քօշի մորթով ծածկուած ոտքերը, թէև ձիւն վրայ ալ նստած չէր: Ինչ բան էր ուրեմն: Ու անա, աւելի լաւ դիտելով

գայն, տեսաւ երկու աչքեր որ կը փալէին վարը, բայց ոչ թէ գայլի սարսափեցնեղ երկու աչքեր, այլ սիրտ տըւող երկու խոշոր, բոցազեղ աչքեր: Նապաստակ մըն էր: Այո՛, գաճաճը կրողը նապաստակ մըն էր, փոքր կատուի նման և արագ ինչպէս հովը:

— Մ՛վ ես դուն, որ ինձ յօշոտել փորձող գայերէն փրկել կ'ուզես զիս, հարցուց տղան դողդոջուն ձայնով մը:

— Տարտահոտն եմ ես, փարսախ մը երկարութեամբ մօրուքով, ու կազ է իմ նապաստակս: Ասիկա նշմարուած է, և ասոր համար կ'ըսեն անա. «կաղ նապաստակով Տարտահոտը:»

— Օրհնեա՛լ ըլլայ թող, վարպետ Տարտահոտ, քու կազ նապաստակդ, այլապէս գայերը փարատած պիտի ըլլային զիս:

— Կը ճանչնամ քեզ, ըսաւ, կարճձուկ Տարտահոտը: Կը ճանչնամ նոյնպէս հայրդ: Կը ճանչնամ բոլոր անոնք որ մեռած են և նաև անոնք՝ որ պիտի ծնին իմ մահէս վերջ: Գիտեմ որ հացը կը պակսէր ձեր տան, խեղճ մարդիկ: Չեմ կրնար տալ զայն ձերունի հօրդ. ե՛րբ պիտի կարողանամ արդեօք... Ու յետոյ ան չի կրնար անտառ գալ, ոչ ալ ենթարկուելի քեզմով վերջ գտած փորձին: Իսկ գալով քեզ, կ'ընդունիմ իրր գաւակ:

— Իսկ ես ի՛նչ պէտք է ընեմ, ո՛վ Տարտահոտ, իմ փոքրիկ հայրս:

Մի՛ հարցաքններ ընաւ, ըսաւ գաճաճը, ու իր ձայնը խտացաւ: Այլապէս կը մեռնիս: Ըրէ՛ միայն ինչ որ պիտի բռնեմ քեզի, ու քու պարաականութիւններէդ ոչինչ պակաս պիտի չթողում քեզ ըսելու: Պիտի պահես պատուէրս:

Անոնք անցուցին զիչերը խրճիթին մէջ որուն միակ պատուհանէն յոյսի ճաճանչն էր ճառագայթեր:



Կենդանիի մորթեր կը ծածկէին անոր պատերն ու մարդակները, այնպէս որ անոնց ներքե կը մնային գայլերու գորշ մուշտակներ, թուխ արջնիւններ, աղուէսի շիկամորթիներ, խլուրդներու փոքրիկ սեւ մորթեր, որոնք պիտի կրնային ըսել անունները բոլոր այն մեծ ու պզտիկ զազաններուն զոր, Տարտահոտ, իբրև մեծ որսորդ, իր քաջագործութիւններէ վերադարձին՝ միասին կը բերէր: Գորգերու տեղ, մորթեր իբր սաւան և սիւսոց կը ծառայէին, և դաճաճն ու փոքրիկը կը ճաշէին մորթերով ծածկուած սեղանին վրայ ուր փոքրիկ գաւաթներ, դանուած կաղնիի հոյզովը վարպետ Տարտահոտի ձեռքով՝ նոյնպէս կաշիէ պատրաստուած էին:

Հետեւեալ օրը անտառի սահմանածայրէն անդին միայն ձիւն կը տեսնուէր ու ձիւնին վրայ, Տարտահոտի ոչխարներու, կովերու, ձիերու, գոմէշներու, այծերու հօտը: Վայրի ոչ մէկ գազան կը մօտենար անոնց: Ամենէն յանդուզն իսկ կը փախչէր առաջին ձայնէն բոժոժին զոր խոյին պարանոցէն կախած էր վարպետը, որ ամէն իրիկուն բրտացած փոքրիկ մասներով կը փայփայէր զայն ու անոր ականջին կը փափրսար բաներ որ կենդանին լեզու կը հանէր մարդու պէս, որովհետեւ կը ժպտէր ան:

— Եթէ մարդ գալու ըլլայ, ըսաւ Տարտահոտը, — իսկ գալիքներ կան. — ոչինչ չպիտի հարցնես, բայց ըսես պիտի ինձի իրենց բոլոր խօսածը:

Ու ահա, օր մը անտառի արջերէն ամենէն խոշորը իր թաթերով շօշափեց խրճիթին դուռը:

Տղան տեսաւ արջը ու լռեց: Այդպէս էր հրամանը:

Զուր գայն բանալ փորձելէ ետք — իսկ դուռը պիտի բացուէր, եթէ ան ըսէր բանաձեւը — արջը այսպէս խօսեցաւ.

— Վաղը առտու, լուսածագին կ'սպասեմ Տարտահոտը պղինձէ կամուրջին առջև: Կ'արհամարեմ ես զինք:

Զարհուրած՝ տղան կրկնեց այդ բառերը, թէպէտեւ չփոթած էր իր տիրոջ — այնքան բարի և զօրաւոր — լռելու արջին դատապարտելի ափեխցեփեխութիւնները, հնազանդի պէտք է սակայն:

— Արջ և պղինձէ կամուրջ, ըսաւ գաճաճը, ու ծիծաղեցաւ:

Իրիկունը ան արջին արիւնլուայ մորթը խրճիթ կը բերէր:

Շարաթ մը յետոյ, թերեւ աւելի վերջ, վասնզի տղան շատ ձերացեր էր երբոր պատմեց ինձի այս պատմութիւնը, — ահաւասիկ առիւծը ներկայացաւ: Իր թաթին մէկ հարուածով ան փորձեց խորտակել դուռը որ կը դիմադրէր, որովհետեւ ան պաշտպանուած էր կախարդական զօրութիւնով մը: Փոքրիկ պահապանը լռեց վերստին ու լսեց մարտահրաւէրի հետեւեալ խօսքերը. — Թող արծաթեայ կամուրջին մօտ հրամմէ, թզուկ Տարտահոտը, եթէ կը փափաքի կտոր կտոր ըլլալ:

— Կտոր կտոր ըլլալ, յարեց իրիկուան գաճաճը, խնդուք մը բարձրացնելով, է, լա՛ւ, պիտի երթամ:

Իրիկունը, խրճիթին մէջ առիւծենի մը կար: Դէպի ներքնատուն առաջնորդող դրան վրայ ան լաւ յարմարած էր:

Փամանակ մը վերջ տղան խնդուքի պատճառունեցաւ: Որովհետեւ ներկայացողը քոստ քօշ մըն էր, ցանցաւ մօրուքով, աղտոտ և շատ կարճ պոչով մը, որուն փակած էր դեռ նախորդ տարուընէ մնացած ուղտափուշ մը:

— Եթէ վարպետ Տարտահոտը, ըսաւ դեղնորակ



երկչոտ խոշոր աչքերով քօշը, կարենայ զիս տեսնել վայրկեան մը ոսկեկուռ կամուրջին մօտ...

Ու, երբ դաճածը իմացաւ ասիկա, գլուխը սեղանին վրայ ծռեց ու լացաւ: Այո՛, հակառակ մեծ որսորդ մը ըլլալուն, լացաւ ան:

—Այժմ իմ ժամս հասած է, փոքրիկս: Պիտի մեռնիմ ոսկիէ կամուրջին մօտ:

Փնթի աղտոտ քօշին կոտրտած եղջիւրներով:

—Իր կոտոշներով, այո՛, վասնզի անոնք կախարդական զօրութիւն մը ունին: Ու զիս պիտի թաղեն կամուրջին ծայրը:

Տղան յորդառատ արցունքներ թափեց:

—Մի՛ լար, յիմար: Ասիկա բան մըն է, որ պիտի պատահի: Այդ մասին երկուք ու կէս դարէ աւելի է որ կը մտածէի: Ուրեմն, դուն հոն պիտի դաս: Պիտի թաղես զիս: Միասին պիտի վերցնես եղջիւրները: Ամէն անգամ որ վտանգի մէջ ըլլաս՝ մէջտեղ հանէ զանոնք ու քեզ պիտի ծառայեն:

Մեռաւ Տարտահոտը, փոքրիկ դաճածը:

Ոչ ոք կրնայ ըսել թէ ինչպէս աւանդեց իր հոգին, առանց կարենայու կիրարկել իր կախարդական զօրութիւնը, որուն սովոր էր անիկա: Երբ կախարդական զօրութիւն մը կը կռուի նման ուրիշ զօրութեան մը հետ, ոչ մէկ մահկանացու կրնայ մերձենալ անոնց, նոյնիսկ հարիւր փարսախ հեռու գծուած սահմանէն, իսկ ես կը թելադրեմ ձեզ՝ չերեւիլ մինչեւ անգամ հազար փարսախ հեռու վայրի մը մէջ: Բան մը զոր կարելի չէ ըսել, ձեզի պիտի իմացնէ որ կռիւը տեղի կ'ունենայ:

Մեռաւ Տարտահոտը: Ու թաղուեցաւ: Անզգայ ձեռքեր զայն դրին հողին ծոցը, ոսկիէ կամուրջին ճաճանչները կը սողոսկէին գերեզմանին վերեւ զրտ-

նուող արեւին և աստղերուն ներքև: Հեռաւոր անտառին մէջ թռչունները ամբողջ օր մը լռեցին, ու կախարդուած հօտը՝ խոտի ոչ մէկ ծիղի դպաւ:

Տղան մինչեւ իրիկուն սպասեց: Սոսկալի մարիկը որ կ'իմացնէր Տարտահոտի դալուստը, ալ չխորտակեց հնամենի կաղնիները: Ուրեմն կատարուած էր այն ինչ որ դաճածը ծանուցեր էր՝ աչքերը արցունքով լի, որոնք գլորեր էին մորթով ծածկուած սեղանին վրայ: Հետեւայ օրը, մաղախը կոնակը՝ ան դէպի ոսկիէ կամուրջը ուղղուեցաւ: Արեւածագէն դեռ ժամ մը առաջ, ուրիշ արշալոյս մը կար, ոսկեկամուրջը երկնքին վրայ կը ցոլացնէր իր ճաճանչները, որուն շաւիղով տղան գտաւ զայն:

Ձերմ արցունքներով, ան մէկդի ըրաւ հողի ծայրը խաւերը, որոնք կը ծածկէին իր տիրոջ մարմինը: Ու գտաւ զայն: Գաճածը կարծես կը քնանար: Չայն կորուստի մատնող ոչ մէկ նշան կամ ոչ մէկ հետք իր վրայ իջնող մահէն, որովհետեւ անոր օրերը վերջացեր էին: Իր կանաչորակ աչքերը կը դիտէին կարծես ու շրթունքին վրայ ծաղիկով ժպիտը արիւնի թեթեւ հետք մը կը դժէր:

Հանել փոքրիկ եղջիւրները որ իր սպիտակ երկար մաղերուն մէջէն երեւան կուգային:

Միբա պէտք էր անոնց զպչելու համար: Բայց տղան ձեռքը անոնց վրայ դնելուն պէս, անոնք բաժնուեցան: Փղոսկրէ հին սրածայր տուփերու նման էին անոնք և ոսկիէ նուրբ թերթ մը կը ծածկէր զանոնք:

Տղան դպաւ անոնց: Եւ ահաւասիկ նապաստակը ցցուեցաւ իր ճամբուն վրայ, բարի նապաստակը որ չէր յոգներ բնաւ:

—Քեզ սպասեցի, ո՛ր բարեկամս: Այժմ քու քաջադործութիւններդ են որ կ'սկսին: Բայց, քանի որ



դուն տէր ես կախարդական զօրութեան մը առանց անձիդ մէջ զայն կրելու. չես կրնար հեծնել քամակիս վրայ: Բայց քու պաշտօնդ ինձի քաջ ծանօթ է: Դուն պիտի բարձրանաս լերան բարձունքը որ ճամբայ չունի ու հոն պիտի ամուսնանաս կարմիր կայսեր աղջկան հետ: Բայց, պէտք է յաղթես իր շար դրացի՝ կապոյտ կայսեր ընտանիքին. կայսրը շատ դեռատի է և կ'ուզէ ամուսնանալ:

Հասնելու համար զագաթը զոր պիտի չկրնայիր երբեք մագլցել, սպասէ այն վայրկեանին, երբ իրիկուսայ հովը, մեղմօրէն հողին հպելէ առաջ՝ կը շարժէ մթնոլորտին վերի խաւերը և կը քալեցնէ երկնքի աստղերը որոնք առանց անոր կանգ պիտի առնէին ու գիշերը՝ պիտի դառնար անյարիր ու սառն:

Իրիկուսը, աստղերը շարժող քամին անցաւ թուխ մուշտակին մէջէն նապաստակին որ անոր վրայ ազդելու իրաւունքը ունէր: Ու դիշերուան առաջին պահուն տղան, որ ճամբորդութեանց ընթացքին քանձ մը թիզ շահած՝ կայսեր հետ ամուսնանալու արժանի հմայիչ իշխան մըն էր դարձած, հասեր էր կարմիր կայսեր պալատին ցից որմերուն առջև, զոր տասը դարեր իրենց սեւ ստուերներով և դսկեզօծ ժպիտով ծածկած էին:

Աշտարակներու ամբողջ զանգակները հնչեցին ու կայսրուհին, որ կը ճանչնար կախարդութեանց զօրութիւնը, հասկցաւ որ իր դստեր ամուսնութեան ժամը հասած էր: Բայց ան այնպէս կարծեց թէ կանաչ անգութ կայսրն էր եկողը: Արդէն պարիսպներու կեռիքին վրայ բարձրացնել տուած էր պահակները, երբ ոտքի վրայ տեսաւ դեռատի փոքրիկ տղայ մը, ծածկուած հին մորթիներով, տղան երկչոտօրէն կը գիտէր պատուհանը ուր գիտէր թէ պիտի տեսնուէր իշխանու-

հին. արդարեւ ան բարձրացաւ պատուհան, ցոյց տալու համար թէ ճառագայթն էր ինք երկրորդ արեւածագին, որ կը յաջորդէ առջինին-- գիտէք որ, ոսկեկամուրջին պատճառով նապաստակը այս կողմը ուղղած էր ճանձանչներու անդրադարձումը:

— Ի՞նչ կ'ուզես, օտարական, հարցուց կայսրուհին: Արդեօք կտաւէ, մետաքսեայ կամ թաւիչէ ըզգէստ մը պէտք է քեզի: Կը փափաքիս որ երկաթէ կրակներով կոշիկ մը հագցնեն քեզ:

Ի՞նչ կրնար պատասխանել խեղճ փոքրիկ խոնարհ տղան: Կաշիէ խեղճուկ զգեստներուն մէջ Տարտահօտի մասներուն կախարդական թագուն զօրութիւնը կար, իսկ իր տրեխները մէկ երկվայրկեանի մէջ հարիւր փարսախ տեղ կտրելու զօրութիւնը ունէին, բայց ո՞վ կրնար գուշակել այդ: Տղան ինք ևս չէր գիտեր ատիկա:

Բայց այդ վայրկեանին Տարտահօտի եղջիւրները գետին ինկան: Եւ ոսկիէ թիթեղը ջախջախուեցաւ:

Ու անտասիկ ինչ բան երեւան եկաւ:

Ոսկիէ սաղաւարտներով, պղնձէ զրահներով ժայռահերձ պողպատեայ սուրերով սապետներու փոքրիկ խումբ մը երեւցաւ: Անոնց վերեւ դրօշներ կը ծածանէին ու նապաստակը հոն կը գրաւէր այն գէշ կենդանիներու տեղը որուն նշանադրօշը կը կրեն կայսրեր: Հօտերու երկար պարանցքը կը գտնէր ժայռեր բարձրացող ճամբան, որուն վերեւ ապարանքը կը բարձրանար: Անոնք՝ անտառի իր բարեկամները՝ Տարտահօտի զաւակներն էին, տղան տեսաւ զանոնք: Եւ որովհետեւ իր առջև տարածուող լիճին մէջ կը գտնուէր իշխանուհիին պտոյտին համար նաւակ մը, ինքզինքը ըզգեստաւորուած գտաւ ծիրանիով մը, իր սաղաւարտին վրայ կը շողշողար առտուան արուսեակը:



—Կա՛յսր, կա՛յսր փեսադ եկած է: Ահաւասի՛կ:

—Ո՛րը: Կապոյտ կա՛յսրը: Ի՛՛ գէն:

—Ո՛չ, դիտէ զայն. մեր որդին, երիտասարդ ու կապոյտ:

Երկրին մէջ նմանը չտեսնուած հարսանիք մը անդի ունեցաւ: Ամբողջ հարիւր քառասունը հինգ եղ մորթեցին, որոնց պոչը միայն բաժին ինկաւ չուներու. որոնք չորտնջացին, իրենց ախորժակէն աւելի ուտելնուն: Երեք շարաթ ու երեք օր իրենց ուզածին պէս խմելէ յետոյ, ամբողջ օր մը և ժամ մը անոնք ծակեցին մէկ դարու հնութիւն ունեցող դինիով լեցուն տակառները, ու լիճը ողողուեցաւ նեկտարով: Ոսկիէ թեփերով ծածկուած ձուկերու կայսրը անոր մէջ պարեց ամբողջ քսանը չորս ժամ, գայով կայսեր փեսուն՝ չուզեցի իր կի՛ով հետ առանձինն թողուլ զինք նախ քան ամբողջ պատմութիւնը, ինչպէս որ լսեցիք, ձեզի պատմելու: Քիչ մը աճապարուած թռեցաւ ինձի սակա՛յն ան, այլապէս աւելի գեղեցիկ՝ և աւելի ամբողջական պիտի դառնար ...



## ԱՂՈՒՈՐ ԻՇԽԱՆԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ



Այն օրերուն երբ ուռենին շահպրակի ծաղիկներ կը բանար ու լուն իննուսունըիննը անգամ ծանր երկաթապատ բանաէն մինչեւ երկինք կը թռէր ու դեռ ինքզինքը աւելի թեթեւ կը գտնէր, այդ օրերուն կայսր և կայսրուհի մը կ'ապրէին: Պիտի չկրնամ ձեզ ըսել թէ որ երկրին մէջ էին անոնք և ի՛նչ էր իրենց անսունը: Եթէ դուք իմանաք, հաճեցէք ինձի այ ըսել: Բայց առանց ատոր այ, ձեզի պիտի պատմեմ պատմութիւնս, որ ճիշտ է ինչպէս ինքը ճշմարտութիւնը: Եթէ չհաւատալու փափաքը ուռենաք՝ զացէք անձամբ գտնելու:

Այսպէս երիտասարդ, շատ գեղեցիկ և առանձինն էին անոնք, ու զաւակ չունէին:

Իրենց մահէն յետոյ, կայսրութեան ժառանգորդ մը ուռենալու համար, —կայսրութիւն զոր աչքերովս տեսած եմ, թէպէտ չեմ յիշեր հոն առաջնորդող ճամբան, անոնք, կամ իրենցմէ մին՝ գնաց —կը պատմէ հէքեաթը. —փնտռելու աստուածային տէր մը:

Ծերուկ մը խոնարհեցաւ թագադիր հիւրերուն առջեւ եւ ըսաւ անոնց.

—Դուք որդի մը պիտի ուռենաք: Եւ անիկա պիտի ըլլայ այժման գեղեցիկ որ գեղեցկութենէ զատ ուրիշ անուն պիտի չունենայ:

Վերադարձին, կայսրուհին յղի զգաց ինքզինքը ախարդութեան զօրութեամբ: Ըն երբ երախան պի-



տի ծնէր, կույար իր մօրը արդանդին մէջ: Ծերունի խորհրդականները լսեցին ասիկա ու ընդերքնին չըջեցաւ: Փրկելու համար ինչ որ բժշկութեան արհեստն ու դիւթութիւնը կրնային, փորձեցին, բայց ապարդիւն: Երախան կույար ծնելէ ու դժբախտութեան ազրիւր՝ աշխարհը տեսնելէ առաջ, Հարկ եղաւ որ կայսրը պարգեւ մը խոստանայ անոր, պարգեւ մը զոր ոչ ոք մինչեւ այն ատեն չէր ունեցած. — անվախձան երիտասարդութիւն ու անմահական կեանք:

Ծնուաւ ան: Նման արքայական շառաւիղ մը տեսնուած չէր ընաւ: Ամէն օր կարծես արեւը կ'երեւէր անոր ճակտին վրայ ու գիշեր ատեն կը քնանար անոր սեւ մազերուն մէջ զոր իր ցոյքերը ձեղքելով կանցնէին՝ նման լուսնի շառաւիղներուն: Բայց սրխուր էր անիկա: Եւ իր տիրութիւնը պատճառ և դարման չունէր: Կրկին բժիշկներու, քահանաներու և երկնային էակներու խորհուրդ հարցուց հայրը, որ չէր կրնար ունենալ, իր ձերութեան դատովճռով, ոչ մէկ ուրիշ շառաւիղ: Ապա, ինքնարեքաբար ոտքի ելաւ տղան, օրմը, ու ըսաւ իր հօրը, որ երբեք զինքը այդպէս չէր տեսած.

— Կ'սպասեմ, հայր, անոր որ խոստացար ինձի երրորդ աշխարհ եկայ ես:

— Բայց երբեւիցէ կրնամ գտնել ինչ որ ըսուած է մաղթանքիս մէջ:

— Եթէ դուն չես կրնար, ես ինքս է որ պիտի փնտռեմ զայն, այսպէս չեմ կրնար ապրիլ:

Ան գնաց ախու փնտռելու ձին որ զինք պիտի տանէր աշխարհիս մէջէն: Հոն թաղանորութիւն մը արժող ձիեր կային: Անոնցմէ ոչ մէկը հաճելի չթուեցաւ: Ան հաւատաց եթէ երբեք պիտի չկարողանար գտնել ձին որ անվրէպ պէտք է իրեն համար սահման

ուսած ըլլար: Բայց անաւասիկ մ'ութ անկիւն մը քոսոտ և գրեթէ կոյր ռոնսէն մը կը կենար:

— Բեզ կ'սպասեմ, ըսաւ որքան երկար ատենէ ի վեր հրամաններուդ ներքեւ եմ ու դուն չես գար:

Գեղեցիկ իշխանը շարժումով մը ջանաց պոչէն բռնելով զայն գետին ձգել: Բայց ան ոտքի վրայ կանգուն կը մնար, ականջները բարձր, ունդերը կրակոտ:

Իշխանը հասկցաւ որ իրեն համար սահմանուած հրաշքի ձին էր ատիկա: Իսկ ձին արդէն գիտէր թէ ինչ է անոր ծրագիրը: Բռտի կրկին ըսաւ.

— Բու ուղիդ կատարելու համար, պէտք է երեք ամիս և երեք օր զիս կերակրես վառած կրակով՝ առանց ջուրի, այնուհետեւ դուն ինքզ ալ պէտք ունենաս հօդ հին զէնքերը:

Գեղեցիկ իշխանը գնաց զանոնք փնտռելու պալատին խորը երկար տարիներէ ի վեր փակ մնացած մնտուկներու մէջ: Երկաթը ժանգոտած էր և ուտիճներ կրճեր էին գրահին թաւիչները: Ծնորհիւ համրերութեան՝ անոնք մաքրուեցան սուանց օտարոտի ձեռք մը անոնց դպելու և առանց օտար աչք մը զանոնք դիտելու, և երբ բիւրաւոր ճաճանչներով անոնք շողացին, իշխանը գնաց գտաւ իր երիվարը:

Անոնք մեկնեցան, զօրաւոր հետեւորդներով, դրօշակով սը, բայց ոչ ոք կրնար հասնիլ կախարդական ձիուն թուիչքին, որուն կողերէն չորս թիւեր կը բարձրանային: Ամբողջովին պարէններով բռնաւոր սայլերը կանգ կ'առնէին ճամբուն վրայ. լաւագոյն ձիաւորներ կ'իջնային պարտասած: Իշխանը բաժնուեցաւ անոնց վերջիններէն, որոնք իր հետքերուն վրայ կը քաշկատուէին:

Այն ատեն ճակատագրէն սահմանուած ձին ոստումով մը հասաւ ամպերու ճամբուն:



Անցան երեք օր և երեք գիշերներ: Ոսկորներէ բոլորովին ձերմկցած մարգագետին մը կը տարածուէր:

—Մըն է, հարցուց, բանակը որ մեռած է հոս:

—Բանակ մը չէ, պատասխանեց ձին: Ասոնք բեկորներն են այն բոլոր ճամբորդներուն որ դարերէ ու դարերէ ի վեր փորձած են այս ուղեւորութիւնը: Այս վայրերու տիրուհին սպաննած է զանոնք: Սարերու տիրուհին է անիկա, որ երկաթէ ցիցով մը կը քրքրէ ծառերը: Հիմա իր զաւկներուն հետ կ'աշխատի: Վայ մեզ, եթէ գայու ըլլայ ան: Տակաւին ոչ ոք կըրցած է խուստիկ իր ճանկէն:

Իր խօսքը լինցնելու վրայ էր, անաւպախկ ամբողջ անտառը զդրդեցաւ հրէշային թռիչքի մը ժխորէն ու թռչունը երեւցաւ, կատղամ' իր իշխանութեան սահմանները դարձեալ բռնաւորուած ըլլալուն համար:

—Յարձակումի պիտի տանիմ քեզ, խօսեցաւ ձին: Ամուր նստիք թամբիդ վրայ: Ու գործածէ հօրդ աղկըր: Նետը սլաց. և ու սարերու տիրուհիին մէկ ոտքը ջախջախուեցաւ: Կանդ առաւ և ներում խնդրեց ան:

—Իմ աէրս ես դուն, իշխան, կա'նդ առ այստեղ, քեզ պիտի սպասարկեմ ես: Զիդ քեզ պարգեւեց յաղթանակ մը զոր ոչ ոք դեռ չէ ունեցեր ու պիտի չունեայ քեզմէ վերջ:

Գեղեցիկ իշխանը գետին ցատկեց: Ու ան առաջնորդուեցաւ մեծ սրահ մը պահուած հնամենի կաղնիներուն ամենէն բարձր ճիւղերուն մէջտեղ: Հոն սեղան մը տարածուած էր, ծածկուած ամենէն հազուադեպ կերակուրներով: Սարերու տիրուհին և երեք ամենագեղանի իշխանուհիներ՝ իր դուստրերը, հոն ներկայ էին: Անոնք նստած էին և կը ժպտէին օտարականին:

—Կ'ուզես ընտրել մեր մէջէն այն որ պիտի ընկերակցի քեզի:

Երեք կոյսերը խօսեցան նոյն հետայն, և արեւի ճառագայթ մը ծակեց կամարը՝ կանգ առնելու համար ուղիղ անոնց գլխուն վրայ, որպէսզի ան կարենայ աւելի յաւ տեսնել զանոնք:

Բայց ինք, որ գիտէր թէ ուր կ'երթար և ինչ պէտք է բերեր, առանց ծիծաղելու դարձուց զէմքը և անցաւ միւս կողմը:

Վերստին ձին մէկ ոտու մով մաղցեցաւ ամպերու հազար աստիճաններէն վեր, շուտով դաշտ մը երեւցաւ որուն մէկ մասին վրայ եր գտնուէին երկրի և երկնքի բոլոր ծաղիկները, իսկ միւս մասը մերկ էր ու սև:

—Ինչ հրդեհ է որ անցեր է դաշտագետնին մէջէն:

—Հրդեհ չէ եղած, պատասխանեց ձին: Սարերու տիրուհիին քոյրն է որ կ'իշխէ հոս: Անտառին Օձն է որ երբ կը յաւաջանայ՝ բոցեր կը փայլին իր ետեւէն ու իր հետքերուն վրայ ոչինչ չի վերածաղկիր անգամ մըն ալ: Ան քու զէմք կուսիլ կ'ուզէ, դուն որ համարձակեցար անցնիլ այս սահմանները, որոնց մուտքը արգիլուած է բոլոր մահկանացուներուն — մինչ միայն անմահութիւնը փնտռելու ետեւէ ես դուն: Ամրապնդուէ թամբիդ վրայ ու վեր առ հօրդ աղկըր:

Վերստին նետը պոռթկաց աղեղէն, ու դպաւ Օձին գլխուն: Բոլորովին ցաւազին, ան ըրաւ չքմեղանքի և խնդրանքի իր խօսքերը: Պէտք եղաւ իրեն ալ ներել: Անմիջապէս, վերքը գոցուեցաւ, ինչպէս պատահած էր Սարերու տիրուհիին: Ու իր ուժերուն կրկին տէր դառնալով՝ գեղեցիկ իշխանը սկսաւ դէպի ամպերը իր վերելքը, հեռուն՝ միշտ զէպի աւելի հեռուն երթալով: Մինչեւ ո՛ր: Երբեք չեմ գացեր հոն: Բայց երկրիս սահմաններէն խիստ հեռուն:

Այնտեղ կանգ առաւ ձին: Յաւերժական գարուններու երկրին մէջն էին: Ծաղիկներ իրարու կը յաջորդէին առանց թարչամելու ու իրաքանչիւր տերեւէ:



նոյն իսկ իւրաքանչիւր ծաղիկի արմատէն բուրմունք մը կը ծորէր որ կը խնկաւետէր հովէն քմայապար օդը. մարգագետիններու ընդմէջէն ջուրեր կը վազէին:

—Այս տեղ է, տէր իմ, մեր փնտռած պալատը: Բայց դիտէ առջեւը:

Գեղանի իշխանը տեսաւ ահա ծառերու անհուն տարածութիւն մը որ կարծես վեր կը բռնէր երկնքի կամարը, սեւ էր ծառերու ստուերը սեւ էր նաեւ երկիրը որ կը լափուէր անոնց արմատներէն:

—Վայրի գազաններ կ'ապրին հոն Անտոնցմէ այնքան կը գտնուին որ եթէ ամենաներջանիկ տասնեակ մը ծերունիներու կեանքը ունենայիր իսկ պիտի չկարողանայիր ազատիլ անոնց ձեռքէն: Անոնց գլուխը երբ կարես՝ կը բուսնին վերստին, իրենց արիւնէն կը բղխին թշնամի ուրիշ կեանքեր: Երկրիս խորը տասը անգամ շատ է անոնց թիւը յան երկրիս վրայ: Մի ջանար չաղթել. դեռ ոչ մէկը չէ կրցած պարտութեան մատնել զանոնք: Բայց այս վայրկեանիս անոնց տիրուհին կեր կուտայ իրենց ու ամենքն ալ լուռ են: Թուիչքի ճիգով մը բարձրանանք վեր:

Ըսաւ ու իր թեւերը այնքան բարձր տարածուեցան որ վարը կը տեսնուէին շատ փոքր ամպեր որոնք փայլակի մը արագութեամբ կը շարժէին:

Բայց ձիուն ազիէն ձար մը ծառի մը կատարին դպած ըլլալուն, ամբողջ գազանները ոտտուժով ոտքի ելան ու այնպիսի սոսկալի ազաղակ մը արձակեց որ ամէն ինչ սկսաւ զզրոյալ, մինչեւ իսկ գահավէժ խորութիւններու յատակը, ուր կը քնանային հրէշներ, որոնք երբեք օդը իրենց ուռնգերովը չէին շնչած և որոնց կուրացած աչքերը երբեք չէին զգացած պայծառութիւնը ճառագայթի մը:

Շարժումով մը սակայն, ձիւնասպիտակ և քաղցրը երկու կոյսեր լեցուցին իրենց հօտը: Անոնք եկան

իրենց հիւրին մօտ գլ առին անոր գէնքերը. զայն նստեցուցին ոսկեղէն ամաններու մէջ սպասարկուած ճաշի մը ու երբ իրենց աչքերը բարձրացուցին՝ խորը երրորդ պարիկ մը նշմարեցին, որ կը լռէր ու չէր դիտեր, վասն զի անիկա իրենց համար պահած էր յաւիտենական երիտասարդութիւնը, ու մահուան ենթակայ չըլլալուն, անոր կը միանար անմահութեան մէջ:

Ու ան ճանչցաւ իր առնելիք կինը: Շուտով ամուսնացաւ անոր հետ. հրէշները կը թաւալէին անոնց ոտքերուն ներքև և իրենց ճայները կը դառնային գզուական՝ փառաւորելու համար իրենց ամենասիրելի տիրուհին: Ո՛, ինչ երջանկութիւն: Չխօսինք բնաւ այդ մասին: Ասիկա ձեր նախանձը կրնայ շարժել: Իսկ այդ՝ յոռի, շատ յոռի բան մըն է:

—Բայց մի՛ մտնէր բնաւ տառապանքներու հովիտին մէջ, ըսած էր մեծ քոյրերէն մէկը:

Բայց ո՞վ երբեւիցէ կրցած է սահմանը նշանակել Ազուոր իշխանի մը արժէքին, որուն լքուած երիվարը թեւերը ծալլած՝ ծաղկաւէտ մարգագետին խոտը կը ճարակէ:

Աւելի ևս՝ հերապնդուած այժեամբ մը երեւցաւ որսորդին առջև: Ու խառնակոյտէ խառնակոյտ, վերջապէս մահկանացուին քայլերուն մօտ գտաւ ինքզինքը: Իշխանը այն ատեն միայն նշմարեց ասիկա, երբ անձանօթ վիշտեր ու անվախճան տրտունջներ, որոնք չեն խօսիր այս աշխարհին մէջ, ուժգնօրէն բարձրացան իր շուրջ, այնպէս որ ան կարծեց որ նոյն իսկ իր սիրտը պիտի խորտակուէր:

Կանգ առաւ, ու չկրցաւ բնաւ հեռանալ անկէ: Բայց մոռացութեան տրուած իր վիշտերը միացան ծննդավայրը տեսնելու իր բաղձանքին, ծնողաց յիշատակին ու



մեկնելու փափաքը արթնցուցին իր մէջը :

— Դուն բռնարարեցիր հրաման մը որ մեզմէ չէր բղիւեր, ըսին պարիկներէն երկուքը, մինչդեռ երրորդը կ'արտասուէր : Ու այդ պատճառով մահկանացուի փոխուեցար :

— Կ'ուզեմ երթալ ծնողներուս մօտ :

— Երկար ատենէ ի վեր մեռած են անոնք, դուն ևս պիտի ունենաս մահը :

Իսկ երբ ան վերստին հեծաւ իր ձիուն քամակին վրայ, իր թեւերը տարածելով այս վերջինը ըսաւ .

— Քեզ պիտի տանիմ պալատ, քանի որ այդպէս կ'ուզես, ըսաց ևս պէտք է վերադառնամ նորէն : Խոստացիր ինձ ասիկա :

Իշխանը խոստացաւ ատիկա ու մեկնեցան անոնք :

Օձին դաշտագետինը երեւցաւ անոնց առջեւ : Ոչ մէկ հետք կիզանուտ թուփերէ : Ուրիշ աշխարհ մըն էր ծնած ու մարդիկ կը քայլէին նեղ փողոցներէն, որպէս թէ դոյուլթիւն ունեցած չըլլար բնաւ չար ըզրի տիրապետութիւնը :

Իշխանը հարցափորձեց զանոնք ու անոնք ըսին թէ շատ հին դիրքերու մէջ այդ վտանգաւոր հրաշքներուն աքսորուած ըլլալուն մասին՝ իրենց պապերուն կարդացած ըլլալը կը յիշեն :

— Բայց դեռ երէկ էր ատիկա յարեց ճամբորդը : Անոնք հետաքրքիր էին իր մօրուքին վերաբերմամբ որ երկար ու սպիտակ էր, ինչպէս իր նուրբ և հազուագիւտ մազերը :

Նոյնը Սարերու տիրուհիին անտառին մէջ, Ու անոր ալեփառ մօրուքը կը հպէր իր կրուկներուն երբ ան կ'իջնէր դէպի հազիւ տեսանելի աւերակները ապարանքին, ուր ապրած էին իր մայրն ու հայրը, ու

րոնց գերեզմանը ոչ ոք չէր կրնար ցոյց տալ, թաղուած անոնք ևս հողին տակ կուտակուած քաղաքներու, որոնք կը բարձրանային բարձր աշտարակներով և պարիսպներու կեռիքներով :

Ձին անհամբեր վրնջեց, ու այսպէս խօսեցաւ .

— Կը մեկնիմ, ո՛ր, տէր իմ, հետս եկուր :

— Ծերացեր եմ :

Ի՛նչ օգուտ մեկնելէն :

Ու, ան թեւերը տարածեց իշխանը ամպածրար բարձունքները տանելու համար, ու երբ թռաւ դէպի յաւիտենական զարուհի մարդագետիները՝ ծերունին հակեցաւ վայրն ի վար, ուր ատենօք կը բարձրանար կայսերական ապարանքը : Փնտռելով փնտռելով, անկիւն մը ան դտաւ փտած հինգած սնտուկ մը, որ դարերէի վեր զոցուած կ'երեւէր : Խորտակեց ժանգէն մաշած նիզերը, ու, անոր մուրթ ալքերէն վտիտ ձայն մը խուսեցաւ .

— Ազատ եմ, վերջապէս : Որքան սպասեցի ասոր, ես, մահը, որ կը կարծէի թէ ինքս ալ մեռած եմ :

Ծերունին անկենդան ինկաւ ուրուականին կըմախացած բազուկներուն մէջ :







# ԾԵՐՈՒՆԻՒՆ ԱՂՋԻԿԸ

ԵՒ

## ՊԱՌԱՆԻՒՆ ԴՈՒՍՏՐԸ



Փամանակաւ ձերունի մը կ'ապրէր իր պառաւ կնոջ հետ :

Տանը մէջ երկու աղջիկ կար, մէկը ձերունիին էր, իսկ միւսը պառաւին, զոր բերած էր իր հետ :

Թէ առաջինը էր մօրուն կողմէ որքան կը սիրուէր՝ ձեզի կը ձգեմ մտածել : Նամանաւանդ որ ձերունիին դուստրը քաղցրարարոյ, բարի, համեստ ու գործունեայ էր, մինչդեռ միւսը կ'սպասէր որ ամէն մարդ սպասարկէ իրեն :

Եւ անա ձերունին հարկադրուեցաւ բամհուի իր աղջկէն :

—Մեր կ'ուզես, պառաւ կին, որ ձամբեմ զայն, վասն զի ան դեռ փոքր է ու չի ձանձնար աշխարհը : Իսկ մենք, աղքատ ենք ու ազգականներ չունինք :

—Ատիկա քու գիտնայիք բանդ է : Այդ գարշեի աղջկան հետ ժամ մը իսկ աւելի չեմ ուզեր մնալ տանը մէջ :

Ծերունին երկարօրէն հառաչեց : Նոյն իսկ զաղտնաբար արտասուեցաւ կը խորհիմ—բայց խիստ զգուշաւոր. —ապա զիտեց իր կինը որ տակաւին երիտասարդ ու գեղանի էր, և միւսիթարուեցաւ : Ահա թէ ինչ բան է աշխարհս :

Ու այսպէս առաւօտ մը ան մեկնեցաւ իր աղջրկան հետ :

—Մեր կը տանիս, զիս հայր, իմ բարի հայրիկս : Կը վախնամ ես :

—Ուր Աստուած պիտի առաջնորդէ մեզ, սիրելի դուստր իմ : Աստուած բարի է : Ան կը տեսնէ ու կ'սպասէ մեզ :

Բայց դեռատի աղջիկը խորհելով որ անտառը շատ խիտ է ու դժուար է վերադարձին ձամբան գտնել, — և որովհետեւ խեղճը վերադառնալու կը հաւտար—լաւագոյն համարեց ձամբան հետքով մը նշանակել :

Արդ միասին վերցուց առանց խորթ մայրը նըշմարելու՝ ափ մը աղ : Ու թաւուտներու մէջ իւրաքանչիւր քայլին զետիւն կը ձգէր անկէ քիչ մը :

Ահաւասիկ գիշերը վրայ հասաւ, պէտք էր կանգ առնել : Անոնք քնացան ընդարձակ խորունկ դալարիքին վրայ : Բայց, աւտու, երբ ձերունիին դուստրը փընտռեց իր մօտ հայրը, չկար ան : Էրեւածագին մեղմիւր, արտասուածոր աչուքներով ձերունկը ուղղուեցաւ դէպի խրճիթ ուր զինք կ'սպասէր կնոջ ուրախութիւնն ու այս վերջինն անամօթ աղջիկը :

Ծերունիին դուստրը խրճիթը գտնելու յոյսը չկորսնցուց սակայն : Արեւի առաջին իսկ ծագումին, խոտին վրայ աղը ցօղի պէս կը փայլէր : Ու տակաւ առ տակաւ անա խուցիւն սեմին առջեւն էր ան, այնքան յոգնած որ կարելի չէ երեւակայել, բայց իր պարագաները գտած ըլլալուն համար շատ ուրախ էր, վասն զի անիկա կը սիրէր նոյն իսկ իր խորթ մայրը և չար քոյրը, ու այդպէս կ'ընէր ինքնաբերաբար, կուրծքին տակ ազնիւ սիրտ մը կրելուն :

—Պէտք է դուստրդ հեռանայ, ըսաւ ձերունիին



կինը : Ապիկար մըն ես որ չկարողացար կորսնցնել զայն :

— Ուրիշ անգամ աւելի լաւը պիտի ընեմ , ըսաւ խեղճ մարդը :

— Ոչ աւելի ուշ քան վաղը :

Հետեւեալ օրն իսկ կատարուեցաւ մեղերային փափաքը : Բարի աղջկան գարշապարները դեռ արիւնընուայ էին երկու ճամբորդութեանց երկայնութենէն ու աղէն՝ զոր կոխկռտած էր անիկա , երբ իր հայրը հրաւիրեց զինք մեկնելու :

— Ո՛ւր կ'երթանք , հայրիկ , իմ սիրելի հայրիկս :

— Հոն ուր պէտք էինք հասնիլ անցեալ անգամ , բայց կը տեսնես , ճամբան կորսնցուցի ու առանց քեզ իմաց տալու հակառակ կողմը դարձայ , քանի որ բացատրին մէջտեղ մնացեր էիր դուն :

Ու , կրկին , աղջիկը Կի մը աղ վերցուց : «Վերստին թափեց անկէ ճամբուն վրայ : Նորէն խորունկ քուն մը վրայ հասաւ : Ու , հետեւեալ օրը , աղջիկը երբ փնտռեց իր հայրը , չիկար ան : Եւ հառաչեց ան՝ կարծես բան մը կռահեց , իր պարագաները գտնելու համար պիտի սիրով կատարէր այդ ճանապարհը սակայն : Բայց զիչերը անձրեւ տեղաց ու ճամբան ցոյց տալու համար ոչինչ մնացեր էր :

Այն ատեն խաչակնքեց իր երեսը ու առաջ քալեց :

Իր առջին նոր ուղի մը կը բացուէր , ուղիղ , կորստելով նոր հորիզոնի մը գիւրկը զոր կ'անգիտանար թէ ուրիշ աշխարհ մըն էր , վասն զի մեր կեանքի սահմաններուն ընդմէջէն էր որ կը յառաջանար ան : Իր հօրը կողմէ տրուած եզրագծերէն պատրաստուած կարկանդակին վերջին կտորը գտնելու համար խուզարկեց իր զրպանը : Ու շարունակեց ուղիին : Այժմ մենաւոր ճամբուն եզերքն էր ուրկէ ոչ ոք

կ'անցնէր . որդերէ կերուած ծառ մը կար հոն որ կը խօսէր ու կ'արտասուէր : Այո , որքան ալ տարօրինակ թուի ասիկա , ան կը խօսէր ու կույար մեզի պէս : Այդ ատենները կը պատահէր ասիկա :

Ու ծառը կ'ըսէր . «Իերատի աղջիկ , անցորդ մ'անկատի կոյս , իմ կոկոններս կը կազմուին ու թրթուրները պիտի ուտեն զանոնք , ինչպէս տերեւներս՝ որոնցմով կը հպարտանայի : Յօտէ զիս , մանկատի աղջիկ , սիրուն դեռատի կոյս :»

Ինքատի աղջիկը կանգնեցաւ ծառին առջև , որ կը կասկած իմ թէ դիտեց երախտագիտութեամբ , որովհետեւ մինչեւ այդ օրը ոչ ոք կանգ չէր առած իր անձկութեան առջև , ու քանի մը բոլբոլի մէջ աւարտեց ան իր աշխատանքը : Թեթեւցած իրենց բռնէն , ծիւրով ծածկուած ոստերը ուրախօրէն դէպի երկինք կը բարձրացնէին իրենց շառաւիղները :

— Ծնորհակալ եմ , սիրուն , դեռատի կոյս : Պիտի չմոռցուիս : Ու ծերուկին դուտորը հայ և բնակարան փնտռելով շարունակեց իր ուղին : Ինչպէս լքուած էր ճամբուն եզերքը գտնուող հնամենի ջրհորը : Հազիւ քիչ մը պղտոր ջուր կը պսպար խորը ինկած սաղարթներու կոյտին , հոն նետուած քարերու եւ զայն ողողող աղոնցութեանց ներքև : Ու հեծեմագին ձայն մը կուզար անկէ . ձայն մը դէպի աղուոր ճամբորդը , որ մոռնալով իր յոգնութիւնը կ'անցնէր , նման անոնց որ իրենց աչքին առջև նպատակ մը ունին :

— Եթէ մաքրէիր զիս , գեղանի դեռատի օրիորդ . . . Երկար ժամանակէ ի վեր ոչ ոք իր ծարաւը չէ անցուցեր իմ ջուրէս , իսկ ես կը տառապիմ՝ ոչ թէ լքուած բլլալուն ալ որովհետեւ օգտակար չեմ :

Ո՛հ ուրեմն : Պէտք է այդքան անապարել ճաշելու և քնանալու համար , մարդ միշտ բարի գործի մը



համար վայրկեան մը գտնէ : Ու անա փափուկ սպիտակ ձեռքերը քառորդ ժամուան մէջ մաքրեցին ջրհորը ինչ որ բաւական եղաւ զով և անապակ ջուրը ճամբորդներուն տրամադրութեան ներքե զնկրու :

—Թո՞ղ Աստուած փոխարինէ քեզ, դեռատի կոյս, խօսեցաւ այժմ ջրհորը բոլորովին տարրեր՝ այլ իր ալեակներուն նման վճիտ ու աշխոյժ ձայնով մը : Մաքրուած ըլլալուն ուրախութենէն կուլար թէ ոչ : Ան միայն կրնայ պատասխանել ասոր, որ խմելով այդ ջուրէն անոր մէջէն պիտի առնէր արգունքի մը ազոտ թեթե համը :

Աւելի հեռուն, երկար տարիներէ ի վեր անտէրունջ մնացած փուռ մը մօտակայ դաշտի մը մէջտեղը իր սե բերանը բացած կը կենար : Գիշերը կենդանիներ հոն ապաստան կը փնտռէին ու ազուէսի ձագեր, խորը իրարու վրայ կուտակուած՝ մեղրամոմի նման փայլող աչքերով կը նայէին : Ու հին բարի փուռը այս բանէն շատ կը նեղուէր, ինք որ ատենօք այնքան մարդիկ անուցած էր արդիւնքովը իր ոսկեգոյն հզօր բոցերուն :

Երկար ատենէ ի վեր մարած կրակի մը խորդումին հանդոյն, խորունկ ձայն մը անկէ զուրս ելաւ ըսելու համար .

Ո՞ր դեռատի սիրուն աղջիկն է որ կ'անցնի... Եթէ ան մէկդի ընէր վրայէս այն բոլորը որ կը խցեն զիս...

Ու ժպտուն՝ ծերունիին դուստրը, մոռցաւ իր անօթութիւնն ու յոգնութիւնը, ինչու որ իր ճամբուն վրայ գոյութիւն ունէր իրերու զմբախտութիւնը որ կը խօսէր թշուառութեան հետ, որ աւելի հեշտութեամբ կը տարուէր, իսկ ինք կրնար մարդոց օգնած ըլլալ, տալով փուռին իր հին օրերու երջանիկ երե-

ւոյթը : Վերստին պիտի կրնային հոն՝ զուարթ բոցերու վրայ, դնել եփուելիք պատուական հացը :

Ո՞ր շնորհակալութիւն, անոր, որ անօթի ըլլալով հանդերձ՝ խորհեցաւ անոնց մասին որ պիտի մնանին իր յոգնութեան շնորհիւ : Պիտի չմոռցուի ան, թող ապահով ըլլայ :

Արդ, ժամեր ճամբորդելէ յետոյ, ժամեր որ այս աշխարհիս վրայ թերեւս վայրկեաններու կամ դարերու համարմէք էին, դեռատի կոյսին զարմացած աչքերուն առջեւ, — անոր որ վարժուած էր հօրենական խրճիթը շրջապատող անձուկ հորիզոններու, — պարզ ու եցան անծայրածիր տարածութիւններ : Հսկայական մեծութեամբ բան մը կար որուն անունը չէր գիտեր, — ոչ այ ես գիտեմ, վասն զի ես լսածս միայն կը պատմեմ, ան որ հաղորդեց ինձ հէքեաթը, ծերացած ու տկարացած ըլլալուն իր երիտասարդութենէն շատ բաներ մոռցեր էր, և յետոյ երեկոյեան պահը տարածամած էր ու գիւղին հիւղակներու տանիքներուն վրայ աքաղաղներու առաջին կու-կու-լի-կուն կը կարկաչէր : Աշտարակներ, պարիսպներու շրջագօտիներ և ոսկեգոյն պտուղներով լեցուն մրգաստաններ կային, նոյն իսկ զուտ ոսկիէ պտուղներ—մի կասկածիք—ազնիւ տեսակէ, արծաթեայ սաղարթներու մէջտեղ : Ուրովհետեւ առանց ատոր, կը հարցնեմ ձեզ թէ երկինքի և երկրի բոլոր թռչունները—ու անոնցմէ չիկար մէկը որ չգիտնար նախապէս որ դար մը վերջ ինչ տեղի պիտի ունենար—պիտի գային թառիչ գազաթին վրայ որ կը ցոյցայնէր ճառագայթը լուսազուարթ արեւին : Անդեղագալար վիհի մը վրայէն կը կախուէր անազաղինձէ կամուրջ մը, բայց անդունդին մէջ կրկնազող գորտեր ու գարշ գօղօշներ չկային, այլ բազմաթիւ լպրծուն կարմրագոյն ձուկեր՝ դողդո-



դուն, վճիտ ինչպէս արծաթեայ սաւան մը և կամ լուսինը ձմեռ ատեն ջուրերուն վրայ:

Երկշոտ՝ աղջիկը իր փոշեթաթախ ստքերը խոթեց ջուրին մէջ որ խկոյն զանոնք արծաթով ծածկեց. դուռ մը զարկաւ: Ան կրնար հաւատալ անշէջ բոցերով ու հրեղէն ռուսգունքներով վիշապի մը մասին որ արթուն կը հսկէ քարակերտ գորշ աշտարակին մէջ, բայց մարդ երբ երկա՛ր ճամբորդութեան և կարգ մը բարեգործութիւններու վախճանին հասած կ'զգայ ինքզինքը, համարձակութիւնը կ'ունենայ դէմ գնել նոյն խոկ հրէշներու:

Դուռը ինքնիրեն բացուեցաւ: Դեռատի աղջիկը կեանքին մէջ երբեք նմանօրինակ ծաղկանոց մը տեսած չէր: Իւրաքանչիւր ծաղիկ առանձին բոյր մը ունէր, իւրաքանչիւր բոյր՝ մասնաւոր ձայն մը և իւրաքանչիւր ձայն յատուկ բարբառ մը: Բայց այս բոյրը կը խառնուէին միակ ներդաշնակութեան մը մէջ, ու իրեն այնպէս կը թուէր թէ ասիկա այն բարբառն էր որով կը խօսէր ձերուներին հետ, երբ օրը դժնդակ կը դառնար, գիտէք արդէն, չար մօրուին պատճառով:

Մ, դեղեցիկ պարիկը որ կը յառաջանայ: Ծերութենէ անդին՝ ան նրկորդ երիտասարդութեան մօտեցած է, սպիտակ երիտասարդութեան որ չի ձերանար քնաւ: Չի խօսիր ան, բայց անմիջապէս որ իր աչքերը կը դարձնէ օտարականուհիին, կ'զգայ որ Ս. Ուրբաթն է ան: Իր մասին խօսած էին խրճիթին մէջ: Բայց ամենքն ալ գիտէին որ իր գանձերով միասին՝ շատ հեռուները կը գտնուէր անիկա ու չէր արժեր հոն երթալ. Ստուած գիտէ ինչ վտանգներու մէջէն անցնիլ պէտք էր:

—Գիտեմ որ աշխատելու եկեր ես:

—Ապրելէս ի վեր ուրիշ բան ըրած ունիմ արդէն, ըսաւ ձերուներին դուստրը: Իսկ կեանքը առանց աշխատանքի արժէք մը պիտի չունենար:

—Իմաստուն աղջիկ մըն ես դուն: Գիտեմ ատիկա, այլապէս վիշապը պիտի երեւէր ճամբուդ վրայ: Բայց հոս աշխատանքը շատ ծանր է:

—Աւելի՛ լաւ, պատասխանեց հլու քաղցր ձայնը:

—Այո՛, այո՛, դիւրին է ըսել. աւելի լաւ, բայց պէտք է գիտնաս որ շատ չար են զաւակներս զոր պէտք է լուսա, չորցնես, անկողին դնես, քնացնես երգերովդ, կաթով և մեղրով սնուցանես: Իրտէ հեղ մը զանոնք:

Ու ամէն անկիւնէ երեւան ելան գորտեր, դօշօշներ, խոնջայրներ, սողուններ և միջատներ. կանաչ սև, ազոտա, հրէշային, որոնք փուռերու պէս իրենց կլափները և երախներու նման իրենց աչքերը բացած կը կափկափէին, կը մռնչէին ու կը սուլէին: Բայց երբ պայծառ աչքեր անոնց վրայ խաղաղութեան ակնարկ մը սեւեռեցին, հնազանդելով քնացան անոնք, ու խկոյն խոր լռութիւն մը տիրեց:

Շնորհիւ անրիժ սրտիդ, ըսաւ Ս. Ուրբաթը, մեծ աշխատանք մը կը լրացնես դուն:

Երբեք համր ու սոսկալի ճեռ մը աւելի լաւ խընամուած չէր, որքան այդ եօթը տարիներու ընթացքին, — Ս. Ուրբաթի տարիներ, որոնք քիչ մը աւելի երկար են մեր ճղճիմ աշխարհին համար: Փայլուն գեղեցիկ օձեր, ոսկէ աչքերով ջինջ գորտերը, իմաստուն քայուածքով լպրծուն խոնջայրները, մեծ թեփերով խոշոր կոկորդիլոսներ, ամառ անդրանիկ որդիներըն էին: Եւ ամէն օր անոնց ձայնը կը մաքրուէր երգելով իրենց բարի և յոյժ գեղանի ազախին **գովեր**, ու կարծես հրեշտակներու խմբերը կը լուսէր, **բայց**



ես իրազեկ եմ որ այդ օրերուն հրեշտակներ դեռ չէին ծնած :

Եւ անա, երբ ծառայութիւնը վերջացաւ, Ս. Ուրբաթը կանչել տուաւ իր բազմաթիւ զաւակներուն անձնուէր պահապանը ու անոնց այսպէս խօսեցաւ .

—Նրկար տարիներ դուն կատարեցիր աւելի քան քու պարտականութիւնդ էր: Տղաքը դո՞ն են քեզմէ: Կը բաւէ սոսկ դիտել զիրենք: Անոնք երիտասարդացած ըլլալ կը թուին: Ու շնորհիւ քու ջանքերուդ որ քան գեղեցկացեր են հիմա: Իմ հրահանգներուս համեմատ իրենց կերը երբեք պաղ կամ տաք չեղաւ, այլ այնպէս, ինչպէս իրենց նուրբ կոկորդը կրնար ընդունիլ: Դուն վարձատրութեան արժանի ես, ու ատիկա կը պարտիս աւելի քու իմաստութեանդ քան իմ շնորհիս: Հետեւէ ինձի:

Ու ծերունիին դուտորը բարձրացաւ մարմարէ բազմաթիւ աստիճաններէ վեր, որոնք չէի կրնար համբել և զոր սակայն անոնք բարձրացան ակնթարթի մը մէջ, վաանդի Սրբունին կը բռնէր ձեռքէն անոր որ շատ դործունեայ աղախին մը եղած էր: Վերը.—Թերեւս աստղերու հաւասար բարձրութեան մէջ, կան որ սակայն կ'ըսեն թէ աւելի հեռուն էր ու աւելի անոնք է որ իրաւունք ունին.—դեռատի աղջիկը տեսաւ անհամար և անթիւ սնտուկներ զորս համբել եթէ հարկ ըլլար, պիտի չկարողանայի երբեք վեջացնել այդ հաշիւը: Կային անոնցմէ ամէն տեսակներ, մեծ, փոքր, կոտր, քառակուսի, ամէն գոյնով, զարդանկարուած կամ ոչ:

Բայց անոնցմէ ոմանք ոսկիէ դրուազներու մէջէն կը կրէին բլերաւոր թանկագին քարեր, ու երբ մարդ կ'անցնէր անոնց մօտէն, ամենափոքր ճառագայթը որ կը սուզուէր առիքի արծաթեայ տախտա-

կէն՝ կը բղխեցնէր ասուպներու հրթիռ մը, մինչդեռ միւսները կը թուէին երկարօրէն ծփծփալ լապտերդ դետի մը դանդաղ ալեակներուն վրայ: Անա այսքան աղտոտած էր անոնց մաշած և մուկերէ կերուած մակերեսը: Ու կ'աւելցնեմ որ տանը մէջ բնակող մուկեր չէին, որովհետեւ անոնք Ս. Ուրբաթ զաւակները խնամող միխնոյն աղախինին ձեռքէն կ'ստանային իրենց կերը:

—Ընտրէ՛, սիրուն աղջիկ, այս սնտուկներէն այն որ լաւագոյն կերպով կը ծառայէ քու պէտքերուդ, անոնց մէջ պիտի գտնես ինչ որ արդարօրէն պիտի վարձատրէ քու յոգնութիւնդ:

Ընտրել: Բայց ինչ բան կրնար ըլլալ արժէքը իր ձեռքերուն, առանց անոնց մարդկային կեանքը անուղի և անմարդարնակ անհուն անապատ մըն է միայն: Արեւը վարձատրութիւն մը ունի՞ երբեք ճամբորդութեան համար զոր կը կատարէ ցորեկ յառաջ բերելու ի խնդիր: Եւ ինչ զնով կը վաճառեն մարգագեանին հազարաւոր ծաղիկները իրենց բոյրերը, որոնք կը մեռնին սակայն իրենց պտուղները սիրած ու զանոնք կը բրած բլլայնուն համար:

—Կ'ընտրեմ ասիկա, ո՛վ սիրունիս: Եստ ամէ աբիղ մ'ըն էր անոր ընտրածը որուն ոչ մէկ ձեռ մուկ խնայած պիտի ըլլար, առանց սակայն նողկանքով իր ակռաներուն դժբախտութիւնը նշմարելու:

—Քանի որ կ'ուզես, առ ուրեմն: Ու երջանիկ եղիր: Բայց ձեր տունը հասնելէ առաջ, զգուշացիր զայն բանալէ, իսկ, որովհետեւ ճամբան հեռու է...

—Եկածէս աւելի երկար պիտի չըլլայ:

Ինչ գիտես: Իրերը այնպէս են որ մեր ուժերը կը չափեն զանոնք: Բայց, կ'ըսեմ, եթէ ճանապարհը երկար երեւի քեզ, դուն ինքզինքիդ պիտի հանդիպիս ճամբուդ վրայ:



Ծերունիին դուստրը քաջ գիտէր որ պէտք չէ աղխարհիս մեծերուն հարցնել իրենց խօսքերուն իմաստը, վասն զի յաճախ ուէ իմաստէ թափուր են անոնք:

Մեկնեցաւ: Ու երբ անօթութիւնը զգայի եղաւ, թէպեաւ, իրօք, ճամբան շատ աւելի կարծցած կը թըուէր, և իր բռնը՝ այս փոսած փայտէ սնտուկը՝ պատուաւոր աշխատանքով կարծրացած իր ուսերուն վրայ ծանր չէր կշռեր երբեք, ան լսեց անա ձայն մը որ դէպի իր կողմը կուգար:

—Կանգ առ, բարերարուհիս: Եօթը տարիէ ի վեր վերակրկնուած բան մը քեզ կ'սպասէ:

Յորեկ էր: Խարոյկը իր հազար բողեղ աչքերով կը շողշողար: Ու ոսկեզօծ հացերու ամբողջ շարքը կը լեցնէր փուռին մուտքը:

—Ա՛ռ և կեր: Քեզի համար է:

Ոչ մէկ ատեն լաւագոյն հաց մը կրցիր էր կազդուրել քամրորդի մը ուժերը: Բայց նման պարզեւէ ետք ուժ պ մը զով ջուր անհրաժեշտ կը դառնար: Հնամենի փուռը չէ որ պիտի կրնար տալ ստիկաս Բայց հրաշքով, ճամբուն մէկ նոր մասը կորսուեցաւ. ձախ կողմը ջրհոր մը կը բարձրանանար, այնքան լեցուն՝ որ առուակներ կը յորդէին անոր չորս կողմերէն և հարիւրաւոր կապոյտ թիթեռնիկներ իրենց ծարաւը կ'անցընէին անոր ջուրերէն, բացխփելով իրենց թաւշային մանրիկ թեւերը:

—Ձիս կը ճանչնաս, ըսաւ վճիտ ձայն մը զոր աղջիկը իսկոյն ճանչցաւ: Եօթը տարիէ ի վեր իւրաքանչիւր ոտնաձայնի կը ժայթքեմ ինչ որ ունիմ ամենէն զով վէտովտուամներուս ծոցը, կարծելով թէ դուն ես եկողը:

Ծերունիին դուստրը երկար ուժպով մը իմեց անկէ: Նոյնիսկ Ս. Ուրբաթի պայտսին մէջ ամենաթանկագին ըմպելիները չունէին համը այս ջուրին, որ քարերու և աւազներու անապատին եզերքը կը գտնուէր:

Եւ որովհետեւ արեւը կ'այլւէր ու ոչ մէկ տեղ հովէն շարժող շուքի հետք մը չէր տեսնուեր, ան խորհեցաւ իր յօտած ծառին մասին: Եւ անա իր առջևն էր ան, պտուղներով բեռնաւոր երկար ճիւղերով:

—Կ'ուզես իմ շուքս Կ'ուզես ունենայ իմ պտուղներս: Եօթը տարիներէ ի վեր քեզի կը պատկանին և ամէն անոնք որ ճաշակեցին պտուղներէս իրենց աղօթքին մէջ յիշատակեցին քեզ, առանց գիտնալու անունդ:

Երեկոյեան խրճիթին մէջ անօրինակ խնձոյք մը կար: Ծերունիին մէկ աչքով կուլար ու կը ժպտէր երկուքով. նոյն իսկ այն աչքով՝ որ կուլար, կարծես անցունքով ծանր ամպերու ներքև արեւի ճառագայթ մըն էր որ կը սահէր: Խորթ մ'այրը կը ինդար միայն և խնդացած ատեն կը թուէր ըսել թէ ինքն է, որ յանձնարարած էր զրկել զայն, ճանչնալով նմանօրինակ ճամբորդութեան մը բոլոր բարիքները: Ինչ ըսել իր դատեր: Բոլորովին զուարթ պիտի ըլլար ան, եթէ նայուածք մը չըլիտէր, անհաւասար պայծառութիւնը զոր կը ծածկէր փոսած արկղը:

Մոռցայ ձեզի ըսելու, որ հաղիւ թէ հին փոսած արկղը զետեղուած էր խրճիթին խոնաւ գետնին վրայ, երբ ինքնիրեն բացուեցաւ ան: Ու անոր մէջ կար ինչ որ դրախտին լաւագոյն գոհարաւաճառը պիտի կրնար պատրաստել իր անկորնչելի ձեռքերով, անոնցմով զարդարելու համար ճակատը, պարանոցը, կուրծքը և բազուկները երջանիկներուն որ կ'ստանան իրենց զրկանքներուն և տանջանքներուն վարձատրութիւնը: Թագեր կայսրերու համար, մանեակներ իշխանուհիներու նախանձը շարժող, մատանիներ և ապարանջաններ անա... Արկղին խեղճ որմիկներուն մէջ այնքան լոյս կար որ փայտը սկսաւ բռնկիլ, և հաւանօրէն պիտի մոխրի վերածէր իր մէջ եղածները, եթէ դրացիները չգային մարելու բոցերը:



Բայց անոնք երբ ուզեցին մեկնել՝ չկարողացան, որովհետև աղամանդներու, սուտակներու, սափիրաններու և սպաղիսներու անհամար ցուքերը գերած էին մարդկային իրենց նայուածքը:

Իսկ ուրիշ արկղեր ալ կան, բսէ նայինք, աղջիկըս: —Մօրուն էր որ կը խօսէր:

—Անթիւ:

—Անկասկած անոնք աւելի գեղեցիկ էին. . .

Ո՞վ կարող է նկարագրել անոնց գեղեցկութիւնը:

—Անոնք չքնարեցիր սակայն:

Միթէ արժանի էի անոնց:

Ձատուկը խնդուքէն կը պայթէր անա:

Եթէ իր դճւտորը եղած ըլլար հոն այս փոքրիկ տխմարին տեղ զոր այլևս պէտք է չոյել անսպասելի հարստութեան մը սիրոյն, որ դիպուածով փոսած այս ոչինչ արկղին մէջ կը դսնուէր. . . բայց այդ մասին բառ մը խօսելու չէ, որպէսզի ոչ ոք զիտնայ թէ առտու կանուխ, լաւ հագուած, տիկը զով և մաքուր ջուրով լիցուն. կնոջ աղջիկը պիտի մեկնէր ճամբէն որուն նկարագրութիւնը լաւ մը ըրած էր իր քոյրը:

Ան՝ տանը աչքի լոյսը, հպարտ կը ճամբորդէր: Իրեն խօսուած էր պտուղներով բեռնաւոր ծառին, յտակ և քաղցր ջուրերով հորին ու եփուած՝ ոսկեգօծ հացերով փուռին մասին: Ու անիկա կ'սպասէր անոնց երեւնալուն:

Ահաւաստիկ սակայն ծառ մը, նման ամէն տեսակէտով անոր, որուն հանդիպած էր ձերուներին աղջիկը: Նոյն իսկ թաւարծի և քստմնելի աւելի՛ որդեր կային անոր լոյնին մէջ կամ ճիւղերուն երկայնքին վրայ, որոնք անյաղօրէն և յամբ՝ կը քայէին քսկուտուելով:

—Կոյս, սիրուն կոյս, յօտէ սաղարթներս. որովհետև հայգս կ'սպառի և չորցած կը մեռնիմ ես:

—է՛, լաւ. քեզի համար պիտի ազտտէի ձիւ-

նաթոյր գեղեցիկ ձեռքերս:

Գնաց, անցաւ աւելի հեռուները, զարմացած միայն մերկ ճամբայ մը տեսնելուն: Ժահահոտ, գոցուած և նեխտած ջրօր մը կը բանար իր աղտոտած բերանը:

—Կոյս, աղուոր կոյս, ազատէ զիս այս աղտեղութիւններէն: Ջուրերս ցածքելու վրայ են:

—Ոչ իսկ դուն կրնաս աղտոտել սպիտակ գողտրիկ ձեռքերս որ ծնողքիս են միայն:

Ու ան խմեց իր տիկին մէջ գտնուած մաքուր ջուրէն: Ատոր վրայ արագացան իր քայլերը: Ինքզինքը շատ լաւ կ'զգար: Որքան հեշտ էր այս ուղին, որմէ միւսը յոգնած կը թուէր: Երբ լքուած փուռը երեւցաւ, ծածկելով անապատի ամբողջ վտանգներն ու ծուղակները, յուսահատ ձայնը թնդաց:

—Փոքրիկ ճիգ մը, սիրուն աղջիկ, և ես պիտի կրնամ տալ անցորդներուն ճամբորդութեան համար պատուական հաց մը:

—Տո՛ւր, եթէ կ'ուզես, բայց ասոր համար ես չէ որ պիտի արիւնտէի քնքոյճ ձեռքերս:

Ս. Ուրբաթին պալատը կ'երեւէր ապառաժին վրայ, ու անոր ցուքերը շրայուցին դեռ ոչ այնքան պարտասած ուղեւորուհիին աչքերը: Անիկա երկար կանգ չառաւ դիտելու համար խրոխտ աշտարակները որոնք շողշողուն արծաթեայ տանիքներէն վեր կը բարձրանային, առանց վէտվէտումի՝ հսկայական լիճի մը հանգոյն: Երբ դրան վիշապը մէջտեղ ելաւ, աղջիկը երբեք չսոսկաց, ան քաջ գիտէր որ ասոր պէս հրէշներ պիտի չհամարձակէին կուռելի կարմնով այնքան սիրուն ու դէմքով չնորհալի անձի մը դէմ: Եւ ան չեշտակի կը նայէր Ս. Ուրբաթի աչքերուն մէջ, որ եկած էր տեսնելու թէ ո՞վ է յանդուգն անձը որ կը կոխկռտէր իր ապարանքին սեմը, որպէս թէ ի՛ր իսկ ստացուածքը ըլլար ան:

—Ի՞նչ կը փնտռես հոս, աղջիկս:



—Լաւ աշխատանք ու վարձատրութիւն մը արժանիքիս համեմատ:

—Լաւ ուրեմն, ահաւասիկ իմ ինններս:

Խնամէ զանոնք: Անոնց ինչպէս ըլլալը կը տեսնես: Եօթը տարի վերջ պիտի նայիմ թէ ինչ վիճակի մէջ հասցուցեր են զիրենք:

Իր խնամքին ներքեւ ունենայ սողուններու և անթիւ անհամար գազաններու սերունդը: . . Եթէ վերջին սնտուկին հրապոյրը չըլլար, որքան զգուանքով պիտի հեռացնէր զանոնք: Թէպէտ վարժուած էին ձերուներին աղջկան, անոնք կը քսկոտուէին, նորէն կը ցատկէին, կը գոռային, կը սուլէին, կը կափկափէին իր ոտքերուն տակ: Ու աղջիկը անոնց տուաւ անա ինչ որ կրնար տալ. ինչ որ կար իր մտքին ու սրտին մէջ: Մնաք բարեալ այլեւս ատենին արուած ճաշեր, ոչ տաք, ոչ այ պաղ, մնաք բարեալ ամէն երեկոյի պատրաստուած քաղցր յոգանքներ, մնաք բարեալ ըրոյր դուք վերջապէս որ զանոնք գիրուկ, փայլուն, գոճ և երջանիկ ըրած էիք:

Երբ եօթ տարի վերջ Ս. Ուրբաթը տեսաւ զանոնք, սարսափի շարժում մը ունեցաւ: Բայց իր շրթունքներէն ոչ մէկ խօսք դուրս ելաւ: Ան քանզի գիտեր թէ մարդկային իւրաքանչիւր գործի համար կայ վարձատրութիւն և պատիժ: Մենք ևս այդ մասին կը տարակուսինք երբեմն և սակայն ասիկա կրնայ օգտակար ըլլալ ձեզի:

—Դնա՛ սնտուկներու ձեռուկայարկէն: Վերցուր ան որ հաճելի կը թուի քեզի, ըսաւ տիրուհին ձայնով մը, որ կը ջանար խիստ չերելի:

Ու աղջիկը ուղղուեցաւ կարմիր ներկուած արկղ մը, որ անարատ ոսկի երիզներով պատուած էր, գաւմերու տեղ հարիւր խոշոր աղամանդներ կը բռնէին ու մէջտեղը կարմիր մեծ սուտակ մը կը շողշողար:

Ասիկա կ'առնեմ:

—Ս.ս. ըսաւ Ս. Ուրբաթը, ու ճամբայ ինկիր:

—Երկար պիտի չըլլայ ան:

—Մեկնէ:

Որքան երկար էր սակայն խրճիթ երկարող ուզին, ուր պիտի շարուէր անհաշուելի այս սմբողջ հարստութիւնը: Անօթութիւնը կը տանջէր չար աղջիկը: Իր շրթունքները պապակէն տոչտրած էին: Կիզիչ արեւ մը շողշողար իր գլխուն վերեւ: Ու փուռէն ոչ ոք ոսկեգօծ հաց, հորէն ոչ ոք զով ջուր և թըրթուրներով լեցուն ծառէն ոչ ոք պտուղ տուաւ իրեն: Վերջապէս:

Ահա մայրը խանդակաթ և անկուշտ աչքերով, անա՛ հայրը որուն նայուածքին մէջ արցունք կայ և ժպիտ, իբրեւ թէ իր հորնազատ զաւակն ըլլար եկողը և վերջապէս ձերուներին դուստրը՝ որ չէր գիտեր ինչպիսի քաղցր խօսքեր գտնել բարեւելու համար այն որ երբեք նայած չէր իր երեսը:

Որքան յոգնասպառ եմ: Բայց դիտեցէք. . .

Կարմիր սնտուկը կարծես իրեն հետ միասին տանակի մթութեան մէջ առտուան աղօտ լոյսն էր բերեր: Բայց սնտուկը, բայց կը պօռար մայրը անհամբեր: Ու սարսափ, արկղին մէջէն դուրս ելան ժանտատեւիլ գլուխներու, իրարու մէջ անցած անդամներու, թեփերով լեցուն պոչերու, լայնօրէն բացուած կարմիր երաններու խառնուրդ մը, ուրկէ ժահր կը հոսէր:

Հրէշները անօթի էին, ու, երբ անոնք գտան ան որ իրենց շքեղ բնակարանէն բերած էր զիրենք, խորտակելով կուլ տուին նոյն իսկ անոր ոսկորներուն ամենափոքրը:

Բայց Ս. Ուրբաթի խնամքով միւսները պաշտպանուեցան: Ան աներեւութացուց զուսուները, զոհացնելէ յետոյ իր անխնամ ձգած որդիքը, մերուներին, դուստրը նոյն իսկ խորթ մայրը ապրեցան՝ պատմելու համար ինծի այս պատմութիւնը: Եթէ չիմացնէի ձեզ՝ դուք ևս պիտի չգիտնայիք զայն:





## Ֆ Ա Ն Կ

ՄՈՒՐԱՅԿԱՆԻՆ ՈՐԴԻՆ	Էջ	1
ԿԱՅՍԵՐ ԶԱԽԱԿԸ	»	14
ՈՍԿԻԷ ՄԱԶԵՐՈՎ ԶԱՂԱՏԸ	»	27
ԵՐԱԶԻՆ ՏՂԱՆ	»	34
ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԱՂՔԱՏԸ	»	46
ԿԱՅՍԵՐ ԴՈՒՍՏՐԸ	»	52
ԽՈԶԻ ԳԼԽՈՎ ԻՇԽԱՆԸ	»	62
ԿԱՅՍԵՐ ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻՆ	»	70
ՏԱՐՏԱՀՈՏ	»	80
ԱՂՈՒՈՐ ԻՇԽԱՆԻՆ...	»	91
ՄԵՐՈՒՆԻԻՆ ԱՂԶԻԿԸ ԵՒ...	»	100

ԱՖ |  
ԳՄ 0

ԳՄ 17

11





« Ազգային գրադարան



NL0312359



